ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԴԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՂՁԱՆՔԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԻ ՄԻՋԵՎ

ԻՐԻՆԱ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Գիտականորեն «ճիշտ», քաղաքականապես «անպատեհ».
Աշոտ Հովհաննիսյանի չհրատարակված գրքի շուրջ

ԵՐԵՎԱՆ 2024

Նախաբան

Արդյո՞ք քաղաքականությունը պետք է հաշվի նստի այն իրականության հետ, որտեղ գործում է: Առաջին հայացքից հարցն անտեղի կարող է թվալ: Եթե քաղաքականությունը գործադրվում է, ուրեմն դրա գործադրման իրականությունն էլ որոշակի է: Խնդիրը, սակայն, թվում է, ոչ թե այս ենթադրելի կապն է, այլ այն, թե կոնկրետ քաղաքականությունն ինչպես է սահմանում իր իրականությունը: Այլ կերպ ասած, քաղաքականությունն ի վիճակի՞ է լինում առերեսել, թե ինքն ինչ իրականության ծնունդ է և ըստ այդմ ինչպես է վարվում իրեն ծնունդ տված իրականության հետ: Սույն հետազոտության մեջ տեսաբանական այս հարցերն իրենց պատմական կոնկրետությամբ փորձել ենք քննարկել մասնավոր դեպքի առիթով: Այդ դեպքը Աշոտ Հովհաննիսյանի *Ուրվագծեր 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ հասարակական-քաղաքական մտքի պատմության* հատորի շուրջ ծագած քաղաքական ու պատմագիտական բանավեճն է: 1967-ին գրված գիրքն ու գրքի հրատարակության պատմությունը բացահայտում են, թե ժառանգված ինչ փորձ ունի մեր քաղաքական միտքը հայաստանյան իրականության հետ հարաբերման խնդրում: Միաժամանակ, սակայն, այդ բացահայտումն իր հակառակ երեսակն ունի: Հովհաննիսյանի *Ուրվագծերի* ուսումնասիրումը ոչ միայն հայտաբերում է քաղաքական ու պատմագիտական մտքի մեր ժառանգությունը, այլև երևան է բերում քաղաքական ու գիտական այն մտայնությունը, որը մինչ այսօր թույլ չի տվել բացահայտել այդ ժառանգությունը: Այդ մտայնության վկայությունը հենց Հովհաննիսյանի գիրքն է, որը քաղաքական ու գիտական պատճառներով այդպես էլ չի տպվել ու մինչ այսօր փակված է արխիվում: Ուրեմն, Հովհաննիսյանի գրքի ուսումնասիրությունը բարդ ձեռնարկ է այն պատճառով, որ մի կողմից բացորոշում է քաղաքական մտքի մեր ժառանգությունը: Մյուս կողմից՝ այն ի հայտ է բերում այդ ժառանգությունից մեզ զրկելու փորձը, որը նույնպես մեր ժառանգությունն է դարձել: Այսպես ի հայտ է գալիս Հովհաննիսյանի գրքի կարևորությունն ու միաժամանակ նաև մարտահրավերը: Հայաստանյան իրականության հետ հարաբերվելու քաղաքական մտքի պատմական մեր փորձն այլևս անտարանջատելի է այդ փորձից մեզ զրկած քաղաքական ու գիտական մտայնությունից: Ուրեմն, Հովհաննիսյանի գրքի ուսումնասիրությունը հնարավորություն է բացահայտելու, թե հայաստանյան քաղաքական մտքի ինչ պատմությունից ենք մենք այսօր զրկված ու թե ինչ կարող է ասել այդ պատմության բացակայությունը մերօրյա քաղաքական մտքի ու հայաստանյան իրականության հետ հարաբերման քաղաքական մեր ձևերի մասին:

1920-ականների ջնջված պատմությունը

Հովհաննիսյանի գրքի պատմության հետնախորքը վերջինիս պատմաբանության շուրջ 1950-1970-ականներին ծավալված քաղաքական ու գիտական զարգացումներն են: 1950-1970-ականները Հովհաննիսյանի հետաքսորական շրջանն էր: 1937-ին դատապարտվելուց ու աքսորվելուց հետո, Հովհաննիսյանն արդարացվեց ու Կոմունիստական կուսակցության շարքերում վերականգնվեց միայն 1954-ին:[1]

[1] Հովհաննիսյանի ձերբակալության քաղաքական հանգամանքները լուսաբանող արժեքավոր փաստաթուղթ է վերջինիս դիմումն ուղղված ԽՍՀՄ կուսակցական վերահսկողության կոմիտեին: Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի ֆոնդ, թղթապանակ 244[16], վավերագիր 491 ա: Իր գիտական ու կուսակցական կարգավիճակը վերականգնելու համար գրված Հովհաննիսյանի դիմումներից տե՛ս, օրինակ, Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 494, 495, 508, 511, 535 բ: Հովհաննիսյանի աքսորական տարիների մասին արժեքավոր հուշագրություն ունի Ալեքսանդր Տեր-Գաբրիելյանը: Տե՛ս

Ստալինիզմը փորձառած հայաստանյան իրականության պայմաններում, սակայն, Հովհաննիսյանն իր նախաստալինյան կյանքով ու գործով դարձել էր պատմական մի «անաքրոնիզմ»:[2] Հովհաննիսյանը պատկանում էր 1920-ականների այն պատմությանը, որի ջնջման ու մոռացման գնով 1930-ականներին հաստատվեց ստալինիզմը: Հայաստանում ստալինյան քաղաքականությունների հաստատումը 1920-ականների երկրորդ կեսին մեկնարկել էր հենց Հովհաննիսյանի պատմաքաղաքականության դեմ պայքարով:[3]

Գլխավոր քարտուղարի պաշտոնը զբաղեցնող (1922-1927) Հովհաննիսյանի պատմագիտությունը 1920-ականներին ուղենշում էր Կոմունիստական կուսակցության գաղափարաբանությունը: Հովհաննիսյանի պատմագիտական հայացքում Հայաստանի քաղաքական ղեկավարությունը ստանձնած ազգային կոմունիստները հայ քաղաքական մտքի զարգացման պատմության մեջ մի օղակ էին, ժառանգը հայաստանյան նախընթաց «գաղափարակիր հոսանքների»:[4] Հովհաննիսյանի համոզմամբ՝ հայաստանյան քաղաքական միտքը ծնունդն էր հայաստանյան իրականության և ի դեմս իրենց՝ մեծամասնական գործիչների, այն իր պատմական զարգացումն էր ապրում ներկայում:[5] Այս դիրքորոշմամբ էր պայմանավորված, որ Հովհաննիսյանի 1920-ականների պատմագիտական ուսումնասիրությունների առանցքում հայտնվեց հայաստանյան քաղաքական մտքի զարգացումը պատմականացնելու և ըստ այդմ՝ այդ մտքի սոցիալ-տնտեսական հիմքերը վեր հանելու խնդիրը: Այս խնդիրը, սակայն, Հովհաննիսյանի ու ազգային կոմունիստների համար արտաքին խնդիր չէր. ազգային կոմունիստները հայաստանյան քաղաքական մտքի կրողներն էին, իսկ իրենց քաղաքականությունը կայանում էր հայաստանյան նույն իրականության պայմաններում: Հովհաննիսյանի համար ելակետային էր, որ քաղաքական կարգի փոփոխությունն ինքնաբերաբար չէր ենթադրում իրականության փոփոխություն: Հակառակը՝ հանուն հաստատված քաղաքական նոր կարգի գոյության քաղաքականությունը պետք է հաշվի նստեր հայաստանյան իրականության այն կոնկրետ սոցիալ-տնտեսական պայմանների հետ, որտեղ ինքը կայանում էր: Քաղաքականության ու իրականության հարաբերության այս ըմբռնումը Հովհաննիսյանի համար առանցքային էր Կոմունիստական կուսակցության որդեգրած քաղաքական պայքարի, հատկապես քաղաքական հակառակորդի՝ Դաշնակցություն կուսակցության դեմ պայքարի խնդրում:

Ալեքսանդր Տեր-Գաբրիելյան, ««Տխուր հուշարձաններ». Վիրավոր առյուծ. կյանքը շշուկով», https://tinyurl.com/y9xbu874, այց՝ 11 դեկտեմբերի 2024 թ.:

[2] Հովհաննիսյանի պատմագիտության վերաբացահայտման գործում մեծ աշխատանք է տարել Վարդան Ազատյանն իր ««Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն». Աշոտ Հովհաննիսյանի ավարտաճառը և նրա գործուն պատմագիտությունը» ուսումնասիրության մեջ: Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը/Israel Ory und die Armenische Befreiungsidee* (Երևան: Հովհաննիսյան ինստիտուտ, 2016), էջ 567-709:

[3] 1920-ականներին Հովհաննիսյանի պատմաքաղաքականությանն ենք անդրադարձել մեր *«Դաշնակցության առիթով». Աշոտ Հովհաննիսյանի պատմաքաղաքականությունը 1920-ականներին* (2023) հետազոտության մեջ, https://tinyurl.com/yyfm7v26, այց՝ 10 սեպտեմբերի 2024 թ.:

[4] Տե՛ս Անուրջ, «Հ.Ս.Խ. Հանրապետութեան լուսժողկոմ ընկեր Աշոտ Յովհաննիսեանի զեկոյցը «Հայարտան»», *Կարմիր աստղ,* 2 սեպտեմբերի 1921 թ.:

[5] Մեր հետազոտության պարագայում հարկ է մեթոդաբանական պարզաբանում անել մասնավորապես «Հայաստան» և «հայաստանյան» եզրույթների կիրառման հարցում: Պետք է նկատի ունենալ, որ արդի հայաստանյան քաղաքական մտքի կրողների՝ դաշնակցականների, հնչակյանների, մեծամասնականների կամ այլ կուսակցությունների հարած գործիչներից ամեն մեկի համար Հայաստանն ըստ էության տարբեր սահմանում ունեցող հասկացություն է եղել: Ուրեմն պետք է հաշվի առնել, որ հատկապես 19-րդ դարի հայ քաղաքական խոսույթում Հայաստանն անհստակ սահմանմամբ հասկացություն էր: Ըստ այդմ հետազոտության ծավալմանը զուգահեռ «Հայաստան» կամ «հայաստանյան» եզրույթները կիրառվել են ելնելով քննարկվող այն կոնկրետ քաղաքական ծրագրից կամ գործչի ըմբռնումներից, որոնք ունեցել են Հայաստանի իրենց պատկերացումները: Սույն հետազոտության մեջ այդ պատկերացումները հստակեցնելու, դրանք որոշակիացնելու հարց մենք մեր առջև չենք դրել:

Հովհաննիսյանի գնահատմամբ Դաշնակցությունն իր սոցիալական ծագմամբ մանրբուրժուական կուսակցություն էր:[6] Ի՞նչ էր նշում մարքսիստական բառապաշարի գնահատողական այս ձևակերպումն ըստ էության: Հովհաննիսյանի՝ Դաշնակցության *մանրբուրժուականության* տեսությունը երևան էր բերում հայաստանյան սոցիալ-հասարակական այն իրականությունը, որից ծնունդ էր առել կուսակցությունը: Դաշնակցության մանրբուրժուականությունը, ուրեմն, բացահայտում էր հայաստանյան սոցիալ-տնտեսական կյանքի պատկերը՝ քաղաքային ու գյուղական մանր սեփականատերերի, մանր վաճառականների, քաղաքի ու գյուղի մտավորականության, արհեստավորի ու գյուղացու իրականությունը: Ըստ այդմ Դաշնակցության դեմ քաղաքական պայքարի հաջողումը Հովհաննիսյանը կապում էր շատ կոնկրետ խնդրի՝ հենց մանրբուրժուական այն իրականության փոփոխության հետ, որին պատկանում էր Դաշնակցությունը: Ուրեմն, հայաստանյան իրականության սոցիալ-տնտեսական նկարագրի փոփոխությունից էր կախված իրենց՝ մեծամասնականների քաղաքական նախագծի հաջողումը: Այդ նկարագրի փոփոխությունը, սակայն, ըստ Հովհաննիսյանի, ենթադրում էր երկարաժամկետ տնտեսական պայքար՝ հանուն իրականության, այլ ոչ թե քաղաքական ուժով այդ նկարագրի ոչնչացում՝ հանուն քաղաքականության:

Ստալինյան առաջին հնգամյակի քաղաքական բռնությունները ոչ մի արդարացում չէին կարող ունենալ, եթե հայաստանյան իրականությանը տված Հովհաննիսյանի գնահատականը մնար անփոփոխ: Ստալինիզմի հավակնությունը վերևից հեղափոխություն իրագործելն էր՝ իրականությունը փոխելը ուղիղ քաղաքական հրահանգով: Այս նպատակին էր միտված Հայաստանում ղեկավարման անցած ստալինյան գծի մեծամասնականների 1928-ին ընդունած հատուկ որոշումը, որով Դաշնակցությունը հռչակվեց *բուրժուական* կուսակցություն:[7] Ստալինյան այս գնահատականը կտրում էր Դաշնակցությունը հայաստանյան իրականությունից՝ այն դարձնելով տեղ ու ազգային քաղաքական օրակարգ չճանաչող բուրժուազիայի կուսակցություն: Դաշնակցությունն ըստ այս գնահատականի, դադարում էր լինել հայաստանյան իրականությունից ծնունդ առած, այդ իրականությունը պայմանավորող հայ մանր բուրժուազիայի հարազատ կուսակցությունը: Եթե փոխվում էր Դաշնակցությանը տրված գնահատականը, նշանակում է փոխվում էր նաև հայաստանյան իրականության հանդեպ քաղաքական դիրքորոշումը: Ստալինյան քաղաքականությունն այլևս չէր ելնում հայաստանյան կյանքի սոցիալ-տնտեսական պայմաններից, այլ վերևից հավակնում էր փոխել դրանք: Այս տրամաբանությունն էր արդարացնում քաղաքական այն բռնությունները, որոնք գործադրվում էին ստալինյան առաջին հնգամյակի ընթացքում տնտեսության հիմքերն արմատապես փոխելու համար:[8]

---

[6] Դաշնակցության մանրբուրժուական ծագման Հովհաննիսյանի տեսության քննարկման համար տե՛ս մեր *«Դաշնակցության առիթով». Աշոտ Հովհաննիսյանի պատմաքաղաքականությունը 1920-ականներին* հետազոտությունը, https://tinyurl.com/yyfm7v26:

[7] Դաշնակցության մասին Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի ընդունած որոշումը տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ 1, ցուցակ 8, գործ 8, թերթ 161-166: Դաշնակցությանը տրված ստալինյան քաղաքական գնահատականի հաստատումը քննարկում ենք *«Դաշնակցության առիթով». Աշոտ Հովհաննիսյանի պատմաքաղաքականությունը 1920-ականներին* մեր հետազոտության մեջ, https://tinyurl.com/yyfm7v26, էջ 36-61:

[8] Ստալինյան հնգամյակի մասին տե՛ս, օրինակ, Sheila Fitzpatrick, *Stalin's Peasants: Resistance and Survival in the Russian Village after Collectivization* (New York, Oxford: Oxford University Press, 1994); Moshe Lewin, *Russian Peasants and Soviet Power: A Study of Collectivization* (New York: W. W. Norton and Company, 1975); Jonathan Daly, *Hummer, Sickle, and Soil: The Soviet Drive to Collectivize Agriculture* (Stanford: Hoover Institution Press, 2017); Lynne Viola և այլք (խմբ.), *The War Against the Peasantry, 1927-1930: The Tragedy of the Soviet Countryside* (New Haven, London: Yale University Press, 2005):

1928-ի՝ Դաշնակցությունը բուրժուական կուսակցություն հռչակած որոշումը հետահայաց կեղծեց ու աղճատեց հայաստանյան քաղաքական մտքի պատմությունը. հայաստանյան քաղաքական մտքի զարգացումը կտրվեց իր սոցիալ-տնտեսական կոնկրետ պայմաններից: Բայց այդ պատմությունն աղճատելու գինը պետք է լիներ Հովհաննիսյանի ու ազգային կոմունիստների ամբողջ սերնդի ֆիզիկական կամ քաղաքական ոչնչացումը, որոնք հայաստանյան քաղաքական մտքի ավանդույթի կրողն էին անձնապես:[9] Ստալինը «մաքրեց» կոմունիստական կուսակցության պատմությունը՝ դրանից ջնջելով ազգային կուսակցությունների ու կոմունիստների միջև բարդ կապերը:[10] Իսկ խզել այդ կապերը, նշանակում էր անտեսել իրականությունը, այն իրականությունը, որտեղ կայացել էին հայաստանյան քաղաքական մտքի բարդ զարգացումները: Քաղաքականությանը ենթակա իրականություն ունենալու ստալինյան օրակարգն, ուրեմն, նախևառաջ պետք է ստեղծեր քաղաքականապես նպատակահարմար պատմություն: Ստալինը պատմությունը զրկեց իր ծավալման ընթացքից՝ վերածելով այն պատմական ժամանակ չճանաչող, քաղաքական ժամանակի մեջ քարացած իրադարձությունների հաջորդականության: Արդյունքում՝ հայաստանյան իրականությունը զրկվեց պատմությունից, այն վերածվեց ապապատմական մի ասպարեզի, որն այլևս ենթակա էր քաղաքականությանը:

Շարունակվող պատմության կամ շարունակվող ստալինիզմի հետազոտումը

Այն, որ Հովհաննիսյանը վերապրեց աքսորը, ակնհայտորեն ստալինյան քաղաքական տրամաբանությունից դուրս էր, եթե չասենք ստալինյան քաղաքականության բացթողումը: Մյուս կողմից՝ Հովհաննիսյանի ողջ մնալն ու հետաքսորական կյանքի իր պատմաբանությունը մեր եզակի ժառանգությունն է, որ թույլ է տալիս ստալինյան ջնջումների միջով հասու դառնալ նախաստալինյան իրականությանն ու պատմությանը: Բայց անգամ Հովհաննիսյանի հետաքսորական կյանքը՝ ռեաբիլիտացիայից մինչև 1972-ին իր մահը, պիտի հատկանշվեր ստալինիզմի դեմ պայքարով: Այդ պայքարը 1920-ականներին ազգային կոմունիստների ու հաստատվող ստալինյան քաղաքականությունների առճակատումը չէր: Խրուշչովյան «ձնհալի», ապա բրեժնևյան «լճացման» տարիներին ստալինիզմն ինքը վերափոխման իր շրջանն էր ապրում:[11] Ստալինի անձի հետ ուղիղ կապվող ու վերևից գործադրվող քաղաքականություններից ստալինիզմը վերածվել էր «տակից գործող», դժվար որսալի ու ինքն իրեն քողարկող

---

[9] 1920-ականների քաղաքական ղեկավարության ոչնչացումը միայն Հայաստանի փորձը չէր: Այդ գործընթացը խորհրդային երկրի կենտրոնում՝ Ռուսաստանում կատարվող քաղաքական այն բեկումների ուղիղ հետևանքն էր, որոնք չշրջանցեցին խորհրդային երկրներից և ոչ մեկին: Տե՛ս, օրինակ, J. Arch Getty, *Origins of the Great Purges: The Soviet Communist Party Reconsidered, 1933–1938* (Cambridge: Cambridge University Press, 1987); Robert Conquest, *The Great Terror: A Reassessment* (Oxford: Oxford University Press, 1990); J. Arch Getty, Roberta T. Manning, (խմբ.), *Stalinist Terror: New Perspectives* (New York: Cambridge University Press, 1993); James Harris, *The Great Fear: Stalin's Terror of 1930s* (Oxford: Oxford University Press, 2017): Տե՛ս նաև Վլադիմիր Ղազախեցյան, *1937-ը Հայաստանում* (Երևան: Զանգակ, 2005): Արմենակ Մանուկյան, *Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953թթ.* (Երևան: «Առերեսում»-Անի, 1999); Հրանուշ Խառատյան, Գայանե Շագոյան, Հարություն Մարության, Լևոն Աբրահամյան, *Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա* (Երևան: Գիտություն, 2015):

[10] Ստալինյան քաղաքականությունն իբրև «մաքրության» քաղաքականություն քննարկում ենք մեր *«Մաքրության» քաղաքականությունը. ստալինյան մշակութային հեղափոխությունը 1920-ականների երկրորդ կեսին* (2022) հետազոտության մեջ, https://tinyurl.com/2a9ndwjt, այց՝ 10 սեպտեմբերի 2024 թ.:

[11] Տե՛ս, օրինակ, Thomas M. Bohn, Rayk Einax, Michel Abeßer (խմբ.), *De-Stalinisation Reconsidered: Persistence and Change in the Soviet Union* (Frankfurt, New York: Campus Verlag, 2014); Polly Jones (խմբ.), *The Dilemmas of De-Stalinization: Negotiating Cultural and Social Change in the Khrushchev Era* (London, New York: Routledge, 2006); Donald Filtzer, *The Khrushchev Era: De-Stalinization and the Limits of Reform in the USSR, 1953-1964* (London, New York, Dublin: Bloomsbury Academic, 2002); Юрий Аксютин, *Хрущевская «оттепель» и общественные настроения в СССР в 1953-1964 гг.* (Москва: РОССПЭН, 2010); Edwin Bacon, Mark Sandle (խմբ.), *Brezhnev Reconsidered* (London: Palgrave Macmillan, 2002); Polly Jones, *Myth, Memory, Trauma: Rethinking the Stalinist Past in the Soviet Union, 1953-70* (New Haven, London: Yale University Press, 2013); William Tompson, *The Soviet Union under Brezhnev* (London, New York: Routledge, 2003):

քաղաքական տրամաբանության:[12] Ստալինիզմի վերափոխման այս ընթացքին զուգահեռ էր ծավալվում Հովհաննիսյանի գործուն պատմագիտությունը: Հովհաննիսյանը խտացնում էր հայաստանյան քաղաքական մտքի ավանդույթն ու այդ ավանդույթի մոռացման պատմությունը: Բայց Հովհաննիսյանը պարզապես պատմական մի դեմք չէր: Նա միաժամանակ նույն այդ ավանդույթի ուսումնասիրողն էր, հայաստանյան արդի քաղաքական մտքի պատմաբանը: Հովհաննիսյանի դեպքում լինել հայ արդի քաղաքական մտքի պատմաբան, ուրեմն, նշանակում էր զբաղվել ինքնահետազոտմամբ, պատմականացնել ոչ միայն անցյալը՝ իբրև ներկայից հստակորեն տարանջատված մի ժամանակափուլ, այլ պատմականացնել ներկան:[13] Հետստալինյան շրջանում հանուն ստալինիզմի հաղթահարման Հովհաննիսյանը հետևողականորեն հետ էր բերում 1920-ականների քաղաքական ու պատմագիտական ավանդույթը: Բայց հետստալինյան իրականությունն ինքնին հետ-*ստալինյան* էր, ուրեմն և հետստալինյան իրականության հիմքերն էին ստալինյան:[14] Պատահական չէ, որ 1960-ականներին պատմագիտության մեջ հրապարակ իջած ազգայնական մտայնությունների մեջ իրեն՝ Հովհաննիսյանին ճանաչելի էր ստալինյան նույն տրամաբանությունը: Պատմական իրականությունը ժխտելու իր մոտեցմամբ 1960-ականների ազգայնական պատմագիտությունը երևան էր բերում ստալինիզմի նոր այլափոխումը: Այնինչ Հովհաննիսյանի պատմագիտական ավանդույթի հիմքում նախաստալինյան 1920-ականների իրականությունն էր. այն իրականությունը, որտեղ կենդանի էր հայ քաղաքական մտքի ավանդույթն ու այդ ավանդույթը պատմականացնելու գիտական ներուժը: Ստալինյան ապապատմական իրականության պայմաններում 1950-1970-ականներին Հովհաննիսյանն իր պատմագիտությամբ պայքարում էր պատմությունը վերականգնելու համար: Հենց այդ պայքարի հետագիծն ենք փորձել բացահայտել սույն հետազոտության մեջ:

Հետազոտության առաջին գլխում քննում ենք, թե աքսորից վերադարձած Հովհաննիսյանի պատմագիտությունն ինչ արձագանք է ստանում 1950-1960-ականներին: 1950-1960-ականներին՝ խրուշչովյան «ձնհալի» ապաստալինացման քաղաքականությունների պայմաններում է, որ Հովհաննիսյանի պատմագիտության առանցքում հայտնվում է *ստալինիզմի* ու դրա քննադատության խնդիրը: Նախաստալինյան 1920-ականների իրականությանը պատկանելով՝ 1950-ականներին Հովհաննիսյանն առերեսում էր ստալինիզմի արդյունքում հետահայաց աղճատված խորհրդային պատմությունն ու պատմագիտությունը: Այս գլխում փորձել ենք երևան բերել, թե Հովհաննիսյանի ապրելն ու գործելը 1950-1960-ականներին ինչպես էր հաղթահարում ստալինիզմով հաստատված պատմական խզումը՝ խորհրդային պատմագիտություն հետ բերելով 1920-ականների պատմությունն ու պատմագիտական ավանդույթը: Այս կերպ, բացահայտվում է նաև, թե պատմության վերականգնման Հովհաննիսյանի հայտը միաժամանակ քաղաքական ինչ հետևանքների է հանգեցնում,

---

[12] Ստալինիզմի վերափոխման այս տրամաբանությունը թերևս ամենադիպուկ կերպով բացահայտում են Ստալինի մահվան առթիվ Ֆրանսիայի նախագահ Շառլ դը Գոլի արտասանած խոսքերը. «Ստալինը չմնաց անցյալում. նա տարրալուծվեց ապագայում»: Տե՛ս Анатолий Кульгавов, «Шарль Де Голль о Сталине», https://tinyurl.com/uea6w7ef, այց՝ 1 դեկտեմբերի 2024 թ.: Մեզ չհաջողվեց գտնել Դը Գոլի այս խոսքերի ֆրանսերեն բնագիրը:

[13] Հովհաննիսյանի պատմաբանության մեջ ժամանակի ըմբռնման մասին տե՛ս Ազատյան, ««Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն»», էջ 650-654: Ազատյանը մասնավորապես նշում է, որ Հովհաննիսյանի համար «պատմագիտությունն իմաստ ունի միայն որպես պատմական շարժուն ժամանակի գիտություն, որն իր հերթին ներհայտ կապված է այդ ժամանակի հետ» (էջ 651):

[14] Ինչպես իր հոդվածում նկատում է Սթեֆան Փլագենբորգը, «հետստալինյան» եզրույթն ինքնին նշում է խնդիրը. «Արևմտյան պատմաբանները խոսում են «հետստալինիզմից» կամ «ապաստալինացումից»: Նրանք չեն խոսում «խրուշչովիզմից» կամ «բրեժնևիզմից»»: Տե՛ս Stefan Plaggenborg, «Soviet History after 1953. Stalinism under Repair», ըստ՝ Bohn, Einax, Abeßer, *De-Stalinisation Reconsidered,* էջ 44:

երբ ելնում է պատմական անցյալը խեղած ու կամայական պատմություն ստեղծած ստալինիզմի դեմ:

Երկրորդ գլխի առանցքում բրեժնևյան «լճացման» տարիներին՝ 1960-1970-ականներին Հովհաննիսյանի *Ուրվագծեր 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ հասարակական-քաղաքական մտքի պատմության* հատորի շուրջ ծավալված քաղաքական ու պատմագիտական բանավեճն է: Գրքում Հովհաննիսյանն առաջադրում է արևելահայ ազգային-քաղաքական կուսակցությունների սկզբնավորման իր տեսությունը: Հովհաննիսյանը բացահայտում էր հայաստանյան արդի կյանքն ու այդ կյանքի սոցիալ-տնտեսական պայմաններից ծնունդ առած քաղաքական մտքի պատմությունը: Այս գլխում քննում ենք, թե ինչպես է կուսակցությունների ծագման ու զարգացման խնդրին պատմականորեն մոտենալու Հովհաննիսյանի դիրքորոշումը բացահայտում վերջինիս քննական հայացքի միաժամանակ թե՛ հակաստալինյան, թե՛ հակաազգայնական բնույթը: Ի վերջո պարզորոշվում է, թե հրաժարվելով կուսակցությունների պատմությանն ի սկզբանե տրված քաղաքական գնահատականից, Հովհաննիսյանն ինչպես է հաղթահարում պատմությունը քաղաքականությանը ենթարկելու ստալինիզմից ժառանգված մոտեցումը:

Հետաքսորական իր կյանքի ընթացքում հայաստանյան քաղաքական մտքի պատմությունը հրատարակելու Հովհաննիսյանի ձեռնարկը քաղաքական ու գիտական քաշքշուկից հետո ի վերջո վիժեցվեց: Հովհաննիսյանի *Ուրվագծերը* մինչ այժմ մնում է անտիպ՝ փաստելով, որ հայ քաղաքական մտքի մեր պատմությունից մինչ օրս էլ դուրս է մնացել հայաստանյան սոցիալական իրականությունն ու դրանից ծնունդ առած քաղաքական միտքը հասկանալու Հովհաննիսյանի փորձը:

Գլուխ 1. Պատմագիտությո՞ւն, թե՞ քաղաքական «աճպարարություն»

«Դժբախտությունը միայն Ստալինը չէ»

1956-ին՝ Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության 20-րդ համագումարում Նիկիտա Խրուշչովն ընթերցեց «գաղտնի ճառը», որտեղ քննադատեց անձի պաշտամունքն ու ստալինյան բռնաճնշումները:[15] Նույն թվականին Հայաստանում համագումարի արդյունքները քննելու համար գումարված Երևանի Կիրովյան շրջանի կուսակցական ակտիվի նիստի ժամանակ Աշոտ Հովհաննիսյանն առաջին անգամ աքսորից հետո հանրայնորեն հանդես եկավ ելույթով:[16] Հովհաննիսյանի ելույթն

[15] «О культе личности и его последствиях: доклад Первого секретаря ЦК КПСС тов. Хрущева Н. С. XX съезду Коммунистической партии Советского Союза», *Известия ЦК КПСС,* 1989, թիվ 3, էջ 128-170, https://tinyurl.com/mt6rzb5a, այց՝ 31 մայիսի 2024 թ.: Տե՛ս, օրինակ, James Ryan, Susan Grant, «Introduction: Revisioning Stalin and Stalinism», ըստ՝ Ryan, Grant (խմբ.), *Revisioning Stalin and Stalinism: Complexities, Contradictions and Controversies* (London, New York: Bloomsbury Academic, 2022), էջ 1-3; Jones, *Myth, Memory, Trauma,* էջ 17-56; Filtzer, *The Khrushchev Era,* էջ 17-29; Ստալինի իշխանության ու անձի պաշտամունքի մասին տե՛ս, օրինակ, Jan Plamber, *The Stalin Cult: a Study in the Alchemy of Power* (New Haven, London: Yale University Press, 2012); Sarah Davies, James Harris, *Stalin's World: Dictating the Soviet Order* (New Haven, London: Yale University Press, 2014), էջ 133-182; Anita Pisch, *The Personality Cult of Stalin in Soviet Posters, 1929-1953: Archetypes, Inventions and Fabrications* (Canberra: Australian National University Press, 2016):

[16] Երևանի կազմակերպության Կիրովյան շրջանի կուսակցական ակտիվի նիստի ելույթը կարող ենք համարել քաղաքական ու գաղափարական խնդիրների շուրջ Հովհաննիսյանի առաջին ելույթը՝ հաշվի առնելով, որ Հովհաննիսյանին ըստ էության արգելված է եղել հանրայնորեն ելույթներ ունենալ այդ թեմաներով: Մինչ այդ Հովհաննիսյանը երկու ելույթ է ունեցել միայն. առաջինի ընթացքում կիսվել է Լենինի մասին իր

արձագանքում էր Ստալինի անձն ու քաղաքական ամենաթողությունը քննադատող Խրուշչովի ճառին, սակայն չէր սահմանափակվում Ստալինի անձի դեմ ուղղված մեղադրանքներով: Հովհաննիսյանի ելույթի առանցքում *ստալինիզմի* ու դրա քննադատության խնդիրն էր:

Ստալինիզմի այս քննադատությունը հնչում էր Հովհաննիսյանի նախաստալինյան գործուն պատմաբանության ու հետստալինյան պաշտոնական քաղաքականության ելակետային տարբերությունների հետևախորքին: Խրուշչովը, որ Ստալինի ղեկավարման տարիներին Կենտրոնական կոմիտեի անդամ էր եղել, պատկանել Ստալինի ամենամոտ մարդկանց շրջանակին, ի վերջո ստալինյան քաղաքականությունների գործադրողներից էր, ստանձնել էր Ստալինից ժառանգված կուսակցական համակարգի ու խորհրդային իշխանության ղեկավարությունը:[17] Այս ժառանգորդությունն ուղղակիորեն պայմանավորում էր Խրուշչովի «գաղտնի ճառում» հնչած քննադատության հստակ շրջանակը. անձի պաշտամունքի քննադատությունից նա չէր անցնում ստալինիզմի՝ որպես համակարգի քննադատության:[18] Սրան հակառակ՝ Հովհաննիսյանը ստալինյան աշխարհի մաս չէր եղել: Հովհաննիսյանը, որ 1920-ականների պատմաքաղաքական ավանդույթի կրողն էր 1950-ականներին, ստալինիզմն ըմբռնում էր իբրև քաղաքական

հիշողություններով, իսկ երկրորդի ժամանակ անդրադարձել է Միքայել Նալբանդյանին: Այս մասին տե՛ս ՀԱԱ, ֆ. 88, ց. 17, գ. 67, թթ. 103-105: Նշենք նաև, որ ինչպես Հովհաննիսյանն է փաստում, Կիրովյան շրջանի կուսակցական ակտիվի ժողովի ընթացքում իր բարձրաձայնած նույն մտքերն արտահայտել է ավելի վաղ՝ 20-րդ համագումարից անմիջապես հետո՝ «Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմում հրավիրված կոմունիստ գիտնականների բազմամարդ մի հավաքույթում»: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 169 ա, թ. 3: Արդյոք այս հավաքույթի ընթացքում հնչած ելույթները սղագրվել են, թե ոչ, մեզ դեռևս հայտնի չէ: Կիրովյան շրջանի կուսակցական ակտիվի սղագրական հաշվետվությունը տե՛ս ՀԱԱ, ֆ. 88, ց. 17, գ. 67, թթ. 46-130: Նիստում Հովհաննիսյանի ելույթի սղագրությունը տե՛ս ՀԱԱ, ֆ. 88, ց. 17, գ. 67, թթ. 103-111:

[17] Խրուշչովի՝ ստալինյան համակարգի ժառանգը լինելու մասին տե՛ս, օրինակ, Martin Malia, *The Soviet Tragady: A History of Socialism in Russia, 1917-1991* (New York: Free Press, 1994), էջ 315-404. հղումն ըստ՝ Bohn, Einax, Abeßer, *De-Stalinisation Reconsidered*, էջ 35: Սթեֆան Փլագենբորգի կարծ, բայց և կտրուկ դիտարկմամբ՝ 1956-ից 1964 թվականն ընկած ժամանակաշրջանում փորձ է արվել հաշտվել ստալինիզմի հետ՝ օգտագործելով ստալինիզմի մեթոդները՝ «հանած տեռորը»: Տե՛ս Plaggenborg, «Soviet History after 1953», ըստ՝ Bohn, Einax, Abeßer, *De-Stalinisation Reconsidered,* էջ 50: Տե՛ս նաև Stephan Merl, «Political Communication under Khruschev. Did the Basic Modes Really Change after Stalin's Death?», ըստ՝ Bohn, Einax, Abeßer, *De-Stalinisation Reconsidered,* էջ 65: Իրենց հերթին, օրինակ, Ջեյմս Ռայանը և Սյուզան Գրանթը նշում են, որ անձի պաշտամունքի իր քննադատությամբ Խրուշչովն այնուամենայնիվ հսկայական ռիսկի դիմեց: Տե՛ս Ryan, Grant, «Introduction», ըստ՝ Ryan, Grant, *Revisioning Stalin and Stalinism,* էջ 1:

[18] Ինչպես Ռայանը և Գրանթն են նշում, Խրուշչովն իր ճառում Ստալինին տարանջատում էր կուսակցական համակարգից: Տե՛ս Ryan, Grant, «Introduction», ըստ՝ Ryan, Grant, *Revisioning Stalin and Stalinism,* էջ 2: Խրուշչովը չէր հարցադրում համակարգի հիմքերը որպես այդպիսին: Տե՛ս Bohn, Einax, Abeßer, «From Stalinist Terror to Collective Constraints. 'Homo Soveticus' and the 'Soviet People' after Stalin», ըստ Bohn, Einax, Abeßer, *De-Stalinisation Reconsidered*, էջ 16-18: Խրուշչովն, իր ելույթում քննադատելով անձի պաշտամունքն ու Ստալինի ոճրագործությունները, միաժամանակ նրան բնորոշում էր իբրև «ամենաուժեղ մարքսիստներից մեկը»: Տե՛ս «О культе личности», https://tinyurl.com/mt6rzb5a, էջ 162: Այս՝ առաջին հայացքից հակասական փաստարկումները պարզում են հենց այն, որ Խրուշչովը ստալինյան կուսակցական իշխանության ժառանգն էր ու ստալինիզմի՝ իբրև համակարգի քննադատություն չէր կարող առաջ քաշել: Այս տրամաբանությունը հատկանշորեն երևան էին բերում Հայաստանում 20-րդ համագումարի արդյունքները քննարկելու համար գումարված կուսակցական ժողովների մասնակիցների ելույթները: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 72: Օրինակ՝ կուսակցականներ Հովհաննիսյանը, Արարատյանը, Մարուխյանը և Սնխչյանը, «սուր քննադատության ենթարկելով անհատի պաշտամունքը, նշեցին, թե ըստ երևույթին ընկ. Խրուշչովը սխալվում է՝ այս ամենից հետո Ստալինին անվանելով մարքսիստ....: Միաժամանակ ելույթ ունեցողները հարց տվեցին. ուր էին այն ժամանակ քաղբյուրոյի անդամները և ինչու ժամանակին միջոցներ չեն ձեռնարկել» (բնագիրը՝ ռուսերեն): Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 72, թ. 5: Միաժամանակ այս քննադատությունն ուղղվում էր նաև հայաստանյան ղեկավար պաշտոններ զբաղեցրած կուսակցականների դեմ: Օրինակ, ոմն Հովսեփյան իր ելույթում նշում էր. «Ասում եք, որ Ստալինը և Բերիան ոչնչացրել են մարդկանց, կադրերին, բայց չէ որ Հայաստանում այն ժամանակ աշխատող մարդիկ՝ Թովմասյան, Առուշանյան և ուրիշ զահրումարներ, ցուցակներ են կազմել, ներկայացրել և մարդկանց ոչնչացրել»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 72, թ. 2: 20-րդ համագումարից հետո նույնպիսի քննադատություններ հնչում էին Խորհրդային Միության տարբեր երկրների կուսակցական կազմակերպությունների քննարկումների ընթացքում: Այս մասին տե՛ս, օրինակ, Polly Jones, «From the Secret Speech to the Burial of Stalin: Real and Ideal Responses to De-Stalinization», ըստ՝ *Jones, The Dilemmas of De-Stalinization,* էջ 41-63:

ղեկավարման մեթոդների ու ձևերի *համակարգ*, որը խեղել էր կուսակցական ու խորհրդային իշխանությունը:[19] Հովհաննիսյանն ինքը այս անկյան տակ էր մեկնաբանում հենց 20-րդ համագումարի ցուցումները, մասնավորապես նշելով.

> Ինքնըստինքյան հասկանալի է, որ հարց դնել 20-րդ համագումարում լենինյան պարտիական ղեկավարության սիստեմի վերականգնման մասին, դա նշանակում է քննադատել, նշանակում է հարվածել պարտիական ղեկավարության այն սիստեմը, որ մինչև 20-րդ համագումարը երկար տարիների ընթացքում, կարող ենք ասել առնվազն 1934 թվից հետո իշխել է: Ստալինը անձնավորում էր այդ սիստեմը, խտացնում իր անձնավորության մեջ այդ սիստեմի բոլոր բացասական հատկանիշները:[20]

Ուշագրավ է, որ ստալինիզմն իբրև համակարգ քննադատող Հովհաննիսյանն իր խոսքը սկսում է այն փաստի շեշտմամբ, որ մինչև 1956-ին գումարված Կիրովյան շրջանի ակտիվի նիստը, կուսակցական ղեկավար մարմիններն ըստ էության թույլ չեն տվել իրեն ելույթ ունենալ: Այդ արգելքը մասնավորապես վերաբերել է այն ելույթներին, որտեղ Հովհաննիսյանը պետք է անդրադառնար Կոմունիստական կուսակցության կամ Հայաստանի խորհրդայնացման պատմության հարցերին: Ինչպես Հովհաննիսյանն է իր ելույթում պարզաբանում, այդ արգելքի վերաբերյալ կուսակցական ղեկավարությունն իրեն տեղեկացնում էր, թե՝

> Պարտիայի պատմության կամ Հայաստանի սովետականացման մասին միասնական, պարզորոշ տեսակետ չկա, պատմությունը դեռ նոր է գրվում: ԻՄԷԼՍ-ը (ИМЭЛС, Մարքսի-Էնգելսի-Լենինի-Ստալինի ինստիտուտ՝ Ի. Շ.) զբաղվում է դրանով, և քանի դեռ ներկայիս չի գրված պարտիայի ու Սովետական իշխանության սկզբնավորման պատմությունը, մինչև այդ դժվար է ելույթ ունենալ:[21]

Պատմությունը վերականգնելու Հովհաննիսյանի մոտեցումը, սակայն, չէր առնչվում միայն գիտական հարցերին:[22] Այդ մոտեցումն իր քաղաքական կողմն ուներ պարզ այն

---

[19] Ստալինիզմն իբրև համակարգ քննադատելու Հովհաննիսյանի մոտեցումն ինքնին հուշում է նրա նախաստալինյան պատմաքաղաքական ավանդույթին պատկանելու փաստը: Հովհաննիսյանի այս դիրքորոշումն արձագանքում էր 1950-ականներին արդեն մոռացված Լև Տրոցկու առաջ քաշած ստալինիզմի քննադատությանը: Տրոցկին առաջինն էր, որ ստալինիզմը քննեց ու քննադատեց իբրև համակարգ: Այս մասին տե՛ս Տրոցկու *Преданная революция: Что такое СССР и куда он идёт?* (1936), https://tinyurl.com/58kc4bus, այց՝ 16 սեպտեմբերի 2024 թ., նաև «Сталинизм и большевизм» (1937), https://tinyurl.com/yc4fa9r5, այց՝ 16 սեպտեմբերի 2024 թ.: Պատահական չէ, որ 1930-ականներին այլ մեղադրանքների թվում Հովհաննիսյանին մեղադրում էին նաև տրոցկիզմի մեջ, իսկ 1960-ականների վերջին, երբ սկսվել էր Հովհաննիսյանի գրքի հրատարակության շուրջ քաշքշուկը, գրքի տպագրության դեմ հանդես եկող Աբգար Հովհաննիսյանը պնդում էր, թե Դաշնակցության մասին Հովհաննիսյանի գրածը հնարավոր չէ հրատարակել, քանի որ Դաշնակցության մասին գրելը «ներկայիս այնքան անհարիր է, որքան Զինովյեվի կամ Տրոցկու»: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[13], վավ. 319, թ. 2:

[20] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 88, ց. 17, գ. 67, թ. 105: Արխիվային նյութերը մեջբերելիս ավելի սահուն ընթերցման համար զերծ ենք մնացել բոլոր ջնջումները կամ հավելումներն առանձին նշելուց: Ջնջումներն ու հավելումները նշել ենք միայն այն դեպքերում, երբ բովանդակային իմաստով դրանք հարկ ենք համարել ընդգծել: Ջնջված հատվածները վերցրել ենք ձևավոր փակագծերի ({}), իսկ ավելացրած հատվածները՝ սուրանկյուն փակագծերի (<>) մեջ:

[21] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 88, ց. 17, գ. 67, թ. 103:

[22] 1920-ականների պատմությունը հետ բերելու Հովհաննիսյանի դիրքորոշումը պարզող ուշագրավ մի վավերագիր է 1967-ին Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ծատուր Աղայանին ուղղված դիմումը: Դիմումում Հովհաննիսյանը ներկայացնում է Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու օրից մինչև 1927 թվականը ներառյալ գործած այն կոմունիստ ընկերների անունները, որոնք իրենց աշխատանքով խոշոր ներդրում են կատարել «սոցիալիստական շինարարության մարտում», բայց համապատասխան կերպով նշված չեն մամուլի էջերում կամ նրանց հիշատակը հավերժացված չէ պետական որևէ ակտով: Ըստ այդմ Հովհաննիսյանը գտնում էր, որ «Հոկտեմբերյան հեղափոխության առաջիկա հիսունամյակը լավագույն առիթն է տալիս շտկելու հիշատակված ընկերների, ինչպես նաև իմ կողմից ևս թերևս շրջանցված ընկերների նկատմամբ կատարված թերացումը»: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 528:

պատճառով, որ պատմության վերականգնումը միաժամանակ քայլ էր ընդդեմ պատմական անցյալը ջնջած ու պատմությունը քաղաքական կամայականության ենթարկած ստալինիզմի:[23] Պատահական չէ, որ իբրև ուղենիշ ունենալով 20-րդ համագումարը, Հովհաննիսյանն, այնուամենայնիվ, չէր կիսում համագումարի ընդգծված այն մոտեցումը, թե «Ստալինի անձնավորությունն է այն գլխավորը, ինչ մենք պետք է հաղթահարենք»:[24]

> …. Ինձ թվում է խոսելով Ստալինի թույլ տված սխալ քաղաքականության մասին չի կարելի կենտրոնացնել կրակը Ստալինի անձնավորության դեմ: Դժբախտությունը միայն Ստալինը չէ, այլ այն սիստեմը, որը գլխավորել էր Ստալինը: Ոչ թե մեզ Ստալինի անձնավորությունն է, որ պետք է զբաղեցնի, այլ այն երևույթը, որ մենք իրավունք ունենք որակել *«ստալինիզմ»* տերմինով (ընդգծումը՝ Ի. Շ.):[25]

Հովհաննիսյանի առաջ քաշած ստալինիզմի քննադատությունն, ուրեմն, ենթադրում էր, որ ստալինյան քաղաքական մեթոդներն ու համակարգը Ստալինի անձի հետ չպետք է նույնացվեին: Հետևաբար Հովհաննիսյանի քննադատությունը չէր կարող սահմանափակվել պարզապես Ստալինի անձի վարկաբեկմամբ, ինչը կենթադրեր խորհրդային պատմության մեջ ստալինյան կառավարման փուլի շրջանցում կամ ջնջում: Իսկ պատմության ջնջումն իր բնույթով հենց ստալինյան արարք էր: Հովհաննիսյանի՝ պատմական շարունակականությանը հավատարիմ այս մոտեցումն էր, ուրեմն, բացահայտում ստալինիզմից տարբեր 1920-ականների պատմաքաղաքական ավանդույթը:[26] Խորհրդային երկրի ու Կոմունիստական կուսակցության «չգրված» պատմությունը բարձրաձայնելիս Հովհաննիսյանը չէր դիմում պատմության հետ հարաբերման ստալինյան ձևերին՝ չէր հրաժարվում պատմությունից, չէր դատապարտում այն: Հակառակը՝ նախաստալինյան իրականությունն ու ստալինիզմի հաստատումը Հովհաննիսյանի համար պատմականորեն քննելի էին: Բայց այս շեշտադրումները չկային 20-րդ համագումարում, որը սահմանափակվում էր միայն անձի պաշտամունքի քննադատությամբ և լենինյան ղեկավարման սկզբունքներին վերադառնալու պահանջով:[27] Ուրեմն, որքանո՞վ կարող էր ստալինիզմի հաղթահարման Հովհաննիսյանի

Վավերագիրն առանձին նախաբանով հրապարակել ենք *Մշակույթ և արդիականացում* ծրագրի կայքում: Տե՛ս ««Կոմունիստ ընկերների նկատմամբ կատարված թերացումը». Աշոտ Հովհաննիսյանի դիմումը», ըստ՝ https://tinyurl.com/y6ybx7rj, այց՝ 20 հոկտեմբերի 2024 թ.:

[23] Պատմական անցյալը ջնջելու ու պատմությունը քաղաքական կամայականության ենթարկելու Ստալինի հայտը նշանավորեցին հատկապես Ստալինի թելադրանքով գրված իր կենսագրությունը և Կոմունիստական կուսակցության պատմությունը: Տե՛ս Иосиф Сталин, *Краткая биография*, 2-րդ հրատ. (1947), https://tinyurl.com/4ju7ud7r, այց՝ 16 սեպտեմբերի 2024 թ. և Иосиф Сталин, *История ВКП(б). Краткий курс* (1938), https://tinyurl.com/39b5edbe, այց՝ 16 սեպտեմբերի 2024 թ.: Այս գրքերին իր ելույթում անդրադառնում է նաև Խրուշչովը: Տե՛ս «О культе личности», https://tinyurl.com/mt6rzb5a, էջ 157-160:

[24] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 88, ց. 17, գ. 67, թ. 105:

[25] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 88, ց. 17, գ. 67, թ. 108: Խրուշչովն իր ճառում «ստալինիզմ» եզրույթ չի օգտագործում: Գլխավորապես անգլիալեզու պատմագիտության մեջ ստալինիզմի ուսումնասիրման մեթոդաբանական տարբեր դպրոցների ու ստալինիզմի պատմագրության մասին տե՛ս, օրինակ, Ryan, Grant, «Introduction», ըստ՝ Ryan, Grant, *Revisioning Stalin and Stalinism,* էջ 6-14; Mark Edele, *Debates on Stalinism* (Manchester: Manchester University Press, 2020):

[26] Խրուշչովյան «ձնհալի» շրջանում Հովհաննիսյանի պատմագիտական մոտեցումն ավելի լայն՝ խորհրդային պատմագիտության ու քաղաքականության փոխառնչությունների համատեքստում տեսնելու հնարավորություն է տալիս Ռոջեր Մարկվիքի *Վերաշարադրելով խորհրդային Ռուսաստանի պատմությունը* աշխատությունը: Տե՛ս Roger Markwick, *Rewriting History in Soviet Russia: The Politics of Rvisionist Historiography,* 1956-1974 (Houndmills, New York: Palgrave, 2001): Տե՛ս նաև Փոլի Ջոնսի անդրադարձը կուսակցական պատմությանն ու խորհրդային գրականությանը 1956-1957 թվականներին (Jones, *Myth, Memory, Trauma,* էջ 57-96):

[27] Խրուշչովյան «ձնհալի» փոփոխություններն ըստ էության կապված էին ««ստալինյան պետությունը» «ապաստալինացնելու» ցանկության հետ»: Տե՛ս «The Dilemas of De-Stalinization», ըստ՝ Jones, *The Dilemas of De-Stalinization,* էջ [1]: Պատահական չէ, որ ինչպես նշում է Սթեֆան Փլագենբորգը ստալինյան համակարգը փոփոխության ենթարկող պետական ղեկավարները նախկինում լոյալ ստալինիստներ էին: Տե՛ս Plaggenborg,

պատմաքննական մոտեցումը տեղ գտնել 1950-ականներին, երբ իր հերթին խրուշչովյան «ձնհալի» քաղաքական առաջնահերթությունն էր մաքրել ու ջնջել ստալինյան քաղաքականությունների խարանը Կոմունիստական կուսակցության ու դրա պատմության վրայից:[28]

1956-ին Հովհաննիսյանի ընթերցած ելույթը պաշտոնապես քննադատվեց:[29] Ինչպես ինքը՝ Հովհաննիսյանն էր պարզաբանում, կուսակցական հաշվետու զեկուցումն իրեն բնութագրում էր որպես մի մարդու, որը «անհատի կուլտը քննադատելու պատրվակով քննադատում [է] պարտիական և սովետական ամբողջ սիստեմը, համարելով այդ սիստեմը «անհատի կուլտի և Ստալինի գործած սխալների բուն աղբյուրը»»:[30] Իր հերթին Հովհաննիսյանն իր դեմ հնչած այս մեղադրանքի կապակցությամբ կուսակցական կոնֆերանսին ուղղված դիմումում նշում էր.

> Կիրովյան ակտիվի ստենոգրամմայում մի տեղ գործ եմ ածել «ստալինիզմ» տերմինը: Սակայն ծանոթանալով ելույթիս բնագրին, դժվար չէ նկատել, որ այդ տերմինի տակ ես դարձյալ հասկացել եմ անհատի կուլտի ժամանակ կատարված խեղաթյուրումների ու խոտորումների ուղեգիծը: Ծառերի ետևում չի կարելի անտեսել անտառը: Կարևոր[ը] պայմանական տերմիններ[ը] չեն, այլ նրանց ընդգրկած կոնկրետ երևույթներն ու հասկացողությունները:[31]

Հովհաննիսյանի մատնանշած ստալինյան խեղաթյուրումների ու խոտորումների ուղեգիծը, սակայն, ակնհայտորեն չէր ընդհատվել: Այդ ուղեգծի մի հերթական հանգրվանում էր, որ Կոմունիստական կուսակցության կողմից նա ենթարկվում էր պաշտոնական քննադատության: Մինչ Հովհաննիսյանը պնդում էր, որ պետք էր «վեր հան[ել] և լիկվիդացն[ել] բացասական այն *հետևանքները*, որ ունեցել էր անհատի կուլտը պարտիական և քաղաքական կյանքի համար», այդ «բացասական հետևանքները» սկսել էին գործել հենց իր դեմ (ընդգծումը՝ Ա. Հ.):

«Soviet History after 1953», ըստ՝ Bohn, Einax, Abeßer, *De-Stalinisation Reconsidered,* էջ 47: Տե՛ս նաև Ryan, Grant, «Introduction», ըստ՝ Ryan, Grant, *Revisioning Stalin and Stalinism,* էջ 1-2: Ապաստալինացման քաղաքականությունների քննարկման համար տե՛ս, օրինակ, Bohn, Einax, Abeßer, *De-Stalinisation Reconsidered* և Jones, *The Dilemmas of De-Stalinisation* հոդվածների ժողովածուները:

[28] Այն, որ խրուշչովյան «ձնհալի» քաղաքականությունը շարունակում էր մնալ ստալինյան «մաքրության» ու «ջնջման» քաղաքականության ուղեծրում, երևում է հենց Խրուշչովի ճառում: Ստալինիզմին հատուկ ձևով Խրուշչովն անձի պաշտամունքն ու քաղաքական բռնությունները բարդում էր կոնկրետ մեկի՝ Ստալինի վրա՝ արդյունքում անմեղացնելով Կենտկոմի անդամներին ու «մաքրելով» իրենց վրայից ստալինյան մեղքերը: Տե՛ս «О культе личности», https://tinyurl.com/mt6rzb5a, էջ 152-157: Թվում է օրինաչափ, որ «ձնհալի» տարիներին տեղի ունեցած քաղաքական բացթողումներն իրենց հերթին բարդվեցին անձնապես հենց Խրուշչովի վրա: Տե՛ս Merl, «Political Communication under Khruschev», ըստ՝ Bohn, Einax, Abeßer, *De-Stalinisation Reconsidered,* էջ 91:

[29] Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի բյուրոն 1956-ի ապրիլի 20-ի նիստում քննեց այն կուսակցականների հարցը, որոնք 20-րդ համագումարի որոշումների շուրջ սկսված քննարկումների ժամանակ «թույլ էին տվել հակապարտիական հարձակումներ ընդդեմ կուսակցության քաղաքականության, կուսակցական և խորհրդային մարմինների հասցեին զրպարտիչ արտահայտություններ....»: Այդ կուսակցականների շարքում նշվում էր նաև Հովհաննիսյանի ազգանունը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, g. 36, գ. 22, թթ. 93-95: Խրուշչովի «գաղտնի ճառից» հետո հնչած «հակապարտիական» ելույթների ու դրանց պաշտոնական քննադատության համար տե՛ս, օրինակ, Jones, «From the Secret Speech to the Burial of Stalin», ըստ՝ *Jones, The Dilemmas of De-Stalinization,* էջ 41-63:

[30] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244^{12}, վավ. 169 ա, թ. 1:

[31] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244^{12}, վավ. 169 ա, թթ. 1-2: Հովհաննիսյանն իր ելույթում օգտագործած հասկացությունների մասին հատուկ նշում էր. «Իմ ելույթի մեջ «սիստեմ» տերմինը ունեցել է ճիշտ նույն իմաստը, ինչ իմաստ մտցնում էին իրենց ելույթների մեջ 20-րդ համագումարի դելեգատները, երբ խոսում էին անհատի կուլտի շրջանում տեղի ունեցած լենինյան «մեթոդների», «նորմերի», «սկզբունքների» և «ոճի» խախտումների մասին»: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244^{12}, վավ. 169 ա, թ. 1:

Հովհաննիսյանի համոզմունքն էր, որ «իր խոսքն ու գրիչը» ինքը բանեցրել է հանուն Կոմունիստական կուսակցության՝ «իրականության գիտական ճանաչման» գործում:[32] Ուրեմն, ըստ Հովհաննիսյանի, քաղաքականությունն իրականության ճանաչման խնդիր ուներ, իսկ այդ ճանաչման հնարավորությունն ընձեռողը գիտությունն էր: Սակայն հենց գիտության ու հատկապես պատմագիտության ստալինացումն էր, որ այլևս անհնար էր դարձրել իրականության ճանաչումը: Բնական է, ուրեմն, որ «իրականության գիտական ճանաչման» խնդիր սահմանողը պետք է քննադատվեր, քանի որ փորձ էր անում ճանաչելի դարձնել ստալինյան պատմագիտության վահանով պաշտպանված ստալինյան իրականությունը:

1950-ականներին, երբ Հովհաննիսյանը բարձրաձայնում էր ստալինիզմի հաղթահարման խնդրի մասին, կուսակցական պաշտոնական ղեկավարությունը քննադատում էր Հովհաննիսյանին՝ հրապարակ բերելով հետահայաց վարկաբեկված 1920-ականների պատմական իրողությունները: Այդ իրողությունները, սակայն, 1950-ականներին հայտնի էին այնպես, ինչպես դրանք ժառանգել էր պատմությունը հետահայաց այլափոխած ստալինիզմը:[33] Իսկ քանի դեռ գիտականորեն չէր վերանայվում 1920-ականների պատմությունը, քաղաքականապես ստվերված էին մնում ստալինյան իրականությունն ու ստալինիզմի գոյությունը:

Նույն 1956-ին կայացած Կենտրոնական կոմիտեի պլենումում Կենտկոմի բյուրոյի անդամ, Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Շմավոն Առուշանյանի ելույթը փաստում էր, թե ստալինիզմով այլափոխված խորհրդային անցյալն ինչ ներկայություն ու ներգործություն ուներ 1950-ականներին: Առուշանյանը քաղաքական այն գործիչն էր, որը պլենումի նիստում քննադատեց Հովհաննիսյանի ելույթն ու հատուկ մեղադրական դիմում ուղարկեց Կենտրոնական կոմիտե:[34] Առուշանյանը Հովհաննիսյանի ելույթը գնահատեց իբրև «խորթ, վտանգավոր և թշնամական»:[35] Ըստ նրա, Հովհաննիսյանն անձի պաշտամունքի քննադատությունն առիթ էր դարձրել կուսակցական և խորհրդային ամբողջ քաղաքականությունը քննադատելու համար:[36] Ավելին, Առուշանյանը Հովհաննիսյանին էր մեղադրում պաշտամունքի առարկա դառնալու մեջ: Հովհաննիսյանի «հակապարտիական, թշնամական և հակասովետական դեմքը» պարզող Առուշանյանի ելույթը վկայում էր վերջինիս կոնկրետ մի անհանգստության մասին: Առուշանյանին իրապես վրդովել էր այն փաստը, որ նախկին Կենտրոնական կոմիտեի քարտուղար Հովհաննիսյանին շատերը ցանկանում էին տեսնել նույն պաշտոնում: Առուշանյանը հայտարարում էր, թե Երևանում կային մարդիկ, որոնք անգամ չճանաչելով

---

[32] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 169 ա, թ. 6:

[33] Ստալինյան քաղաքականությանը ենթակա դարձած պատմագիտության խնդիրներին 20-րդ համագումարի իր ելույթում անդրադարձավ Անաստաս Միկոյանը: Քննադատելով ստալինյան պատմագիտությունն ու դրա հետևանքները՝ Միկոյանը Կոմունիստական կուսակցության և խորհրդային հասարակության պատմության բնագավառում գիտական աշխատանքը գնահատեց իբրև «իդեոլոգիական աշխատանքի ամենահետամնաց հատվածը»: Տե՛ս *XX съезд Коммунистической партии Советского Союза. 14-25 февраля 1956 года. Стенографический отчет,* հ. 1, https://tinyurl.com/3uknz3mn, այց՝ 18 սեպտեմբերի 2024 թ., էջ 325: Ուշագրավ է Փոլի Ջոնսի մենագրության մեջ մեջբերվող կուսակցական պատմաբան Սմիրնովի խոսքերը, թե «իդեոլոգիական աշխատանքում» անձի պաշտամունքը հաստատել են կուսակցական պատմաբանները: Տե՛ս Jones, *Myth, Memory, Trauma,* էջ 67:

[34] 1956-ին Հայաստանի Կոմունիստական կուսակցության 2-րդ պլենումի ժամանակ Առուշանյանի ելույթի սղագրությունը տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 18, թթ. 60-90: Կենտկոմին ուղղված Առուշանյանի դիմումը տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 72, թթ. 74-77:

[35] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 72, թ. 74:

[36] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 18, թ. 67: Առուշանյանն իր դիմումում հատուկ շեշտում էր, որ 20-րդ համագումարը «քննության չառավ պարտիայի գլխավոր գծի և նրա քաղաքականության հարցը մինչև 19-րդ համագումարը, քանի որ այդ պարզ էր, այլ ցույց տվեց Ստալինի սխալները և նրա պաշտամունքի հետևանքները»: Պարզ է, ուրեմն, որ Առուշանյանն իրեն դիրքավորում էր իբրև կուսակցական քաղաքականության պաշտպան և դրա քննադատությունը համարում էր անթույլատրելի: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 72, թ. 74:

Հովհաննիսյանին, նրան «ընդունում են որպես պաշտամունք, սուրբ»:[37] Առանցքայինն այստեղ այն է, որ Առուշանյանը 1950-ականներին Հովհաննիսյանի դեմ հնչող այս մեղադրանքները տեղակայում էր 1920-ականների քաղաքական անցքերի հետնախորքին: Այսպես, 1956-ի պլենումի ժամանակ Առուշանյանը մեղադրում էր Հովհաննիսյանին Կոմունիստական կուսակցության ողջ քաղաքականությունը քննադատելու մեջ, բայց միաժամանակ Հովհաննիսյանին քաղաքականապես վարկաբեկելու համար իր ելույթում հրապարակ էր բերում 1927-ին Հովհաննիսյանի Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղարի պաշտոնը թողնելու փաստը:[38]

> …. Ես համաձայն եմ, որ Աշոտ Հովհաննիսյանին չպետք է պարտիայից հեռացնեին, բանտարկեին և այլն, բայց նա շատ անտաղանդ քարտուղար է եղել և նա ըստ էության թողել է Կենտրոնական Կոմիտեի քարտուղարի պոստը…. Նա իր ժամանակին չի կարողացել գլխավորել ՀԿ/բ/Կ-ին և թողել գնացել է:[39]

1920-ականների երկրորդ կեսին Հովհաննիսյանի ու նրա գլխավորությամբ ազգային կոմունիստներից կազմված Խորհրդային Հայաստանի կառավարության հեռացումն ու ստալինյան քաղաքականությունների հաստատումը պատմական իրադարձությունների պատճառահետևանքային ոչ մի կապով կապված չէին:[40] Այնինչ Հովհաննիսյանը մեկն էր, որ երևան էր բերում հետահայաց կտրված ու ջնջված այդ կապերը.

> Դիմումիս դրդապատճառը ընկ. Առուշանյանը որոնել է ոչ թե այն իրադրության մեջ, որ 1920-ական թվականների կեսերից ի վեր և մինչև 1930-ական թվականների կեսերը ստեղծված է եղել Հայաստանի կոմպարտիայի համար, այլ պարզապես նրանում, որ Աշոտ Հովհաննիսյանը «շատ անտաղանդ քարտուղար է եղել….»:[41]

Ստալինիզմն ինքը քողարկել էր իր իսկ հաստատման պատմությունը: Պատահական չէ, ուրեմն, որ Հովհաննիսյանի այն փաստարկները, որոնք հերքում էին իր դեմ հնչած մեղադրանքները, միաժամանակ դառնում են «պատմական իրողությունը վերականգն[ող]» փաստարկներ (թ. 2): Ի վերջո, Առուշանյանի մեղադրանքներին արձագանքող Հովհաննիսյանը հենց ստալինիզմի հետքն է մատնացույց անում վերջինիս ելույթում.

> Ընկ. Առուշանյանի ելույթից ակներև է, որ վերջին երեք տարվա ընթացքում կատարված մերկացումներից ու վերագնահատումներից հետո իսկ նա շարունակում է մոտենալ Հայաստանի Կոմպարտիայի անցյալին տրորված ու մաշված այն հայացքների տեսանկյունից, որոնք տարիներ շարունակ - մանավանդ՝ 1936-37 թվականներին ու հաջորդ մեկ ու կես տասնամյակների

---

[37] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 18, թ. 67:

[38] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 18, թթ. 67-68: Ուշադրություն է գրավում հանգամանքը, որ արխիվային նյութի մեջ Առուշանյանի ելույթի այն հատվածը, որտեղ նա Հովհաննիսյանի պաշտոնավարման հետ կապված փաստաթուղթ է ներկայացնում, բացակայում է: Ամենայն հավանականությամբ էջերը հանվել են մինչև նյութի արխիվացումը, քանի որ ընդհատվում է բնօրինակի համարակալումը (8-րդ էջին հաջորդում է 11-րդը), իսկ արխիվի համարակալումը շարունակական է:

[39] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 18, թ. 68:

[40] Արժեքավոր է ստալինյան քաղաքականությունների հաստատման շրջափուլում Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեում ստեղծված իրադրության այն նկարագիրը, որ անձամբ տալիս է Հովհաննիսյանը: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 492 ա, թ. 1-2: 1920-ականների երկրորդ կեսին ազգային կոմունիստներից կազմված Խորհրդային Հայաստանի կառավարության հեռացման ու ստալինյան քաղաքականությունների հաստատման դրվագն ենք քննում մեր *«Դաշնակցության առիթով». Աշոտ Հովհաննիսյանի պատմաքաղաքականությունը 1920-ականներին* հետազոտության մեջ, https://tinyurl.com/yyfm7v26, էջ 36-61:

[41] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 492 ա, թ. 1: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

> ընթացքում - արհեստականորեն՝ պատվաստվում էին մեզանում և հրամցվում որպես անտարակուսելի ճշմարտություններ (թ. 2):

Հովհաննիսյանը հավատացած էր, թե Ստալինի մահից հետո կատարված «վերագնահատումները» կարող էին երաշխիք լինել քաղաքականության ու պատմագիտության մեջ ստալինյան «ճշմարտությունները» վերանայելու համար: Սակայն Հովհաննիսյանին ուղղված մեղադրանքներն ինքնին վկայում էին, որ ստալինիզմի հրամցրած «ճշմարտությունները» չէին դադարել համարվել այդպիսին: Այդ «ճշմարտությունները» պահպանելու դիրքից հանդես եկողներն էին, որ Հովհաննիսյանին «նշավակ[ում էին] սովետական և պարտիական ամբողջ սիստեմը քննափետողի դերում» (թ. 5):

Այսպես, Հովհաննիսյանի պատմագիտության դատապարտման մեջ երևան էին գալիս այն խոր կապերը, որ գոյություն ունեին 1930-ականներին հաստատված ստալինիզմի ու 1950-ականներին անձի պաշտամունքը քննադատող, բայց ստալինյան ժառանգության վրա կայացող իրականության միջև: Հովհաննիսյանը հետևողականորեն պահանջում էր, որ խնդրի քննարկման ընթացքում «*չաղճատվ[եր]* քննության ենթակա հարցը» (ընդգծումը՝ Ա.Հ.): Սակայն այդ պահանջը բախվում էր ստալինյան պատմագիտական ու քաղաքական այն ժառանգությանը, որի գոյության ու կայացման գինը հենց անցյալի աղճատումն էր եղել: Հովհաննիսյանն ինքը մատնանշում էր 1930-ականների ստալինյան մոտեցումների և 1950-ականներին բնորոշ գործելակերպի միջև զուգահեռը: Իրեն Կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության հակառակորդի դերում ներկայացնող Շմավոն Առուշանյանի 1956-ի զեկույցին անդրադառնալիս Հովհաննիսյանը հիշեցնում էր վերջինիս ելույթը 1938-ի Կոմունիստական կուսակցության 11-րդ համագումարում: Այս ելույթների հետապնդած միևնույն նպատակն էր մատնանշում Հովհաննիսյանը Կենտկոմի բյուրոյին ուղարկված իր դիմումում (թ. 7):[42]

Հովհաննիսյանի՝ ստալինիզմի քննադատությունը բացահայտում էր 1950-ականներին դրա շարունակականության իրական հիմքերը: Հովհաննիսյանը 1950-ականներին Ստալինի անձի քննադատության ձևերում տեսնում էր նույն այդ ձևերի վերարտադրությունը, այլ ոչ թե դրանցից հրաժարումը: Կիրովյան շրջանի կուսակցական ակտիվի նիստում ունեցած իր ելույթը քննադատողներին արձագանքելով՝ Հովհաննիսյանը շեշտում էր, թե իր ելույթը «ուղղված էր այն ընկերների դեմ»,

> որոնք 20-րդ պարտհամագումարի որոշումների կատարման մասին խոսելով ասում էին, թե պետք է հրաժարվել պաշտամունքի առարկա դարձած անհատի անվան ու երկերի հիշատակումից, իջեցնել մեր հիմնարկների պատերից նրա պատկերը, վայր գլորել նրա արձանները կամ դուրս նետել դամբարանից նրա դին: Ես առարկում էի նրանց, ովքեր փորձում էին մշակել պաշտամունքի առարկա

[42] Թեև 1938-ի Կոմունիստական կուսակցության 11-րդ համագումարում Առուշանյանի ընթերցած ելույթում ակնհայտ է վերջինիս հավատարմությունը ստալինյան քաղաքական գծին, այնուամենայնիվ Հովհաննիսյանի մասին հիշատակում այդ ելույթում չենք հանդիպում: Գուցե համագումարն ամփոփող քննարկման ժամանակ է Առուշանյանն անդրադարձել Հովհաննիսյանին, սակայն նման ելույթ արխիվային նյութերում մենք դեռ չենք գտել: Առուշանյանի ելույթը տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 18, գ. 3, թ. 118-123: Ուշագրավ է, որ 1956-ի Կիրովյան շրջանի կուսակցական ակտիվի նիստում ելույթ ունեցողներից ոմանք բացահայտ հիշեցնում էին 1930-ականներին Առուշանյանի գործելակերպի մասին: Պետական համալսարանի կուսակցական կազմակերպությունից ոմն Ռ. Մովսեսյան մասնավորապես նշում էր. «Ես չգիտեմ, թե ինչպիսի հիշողություն ունի ընկ. Առուշանյանը, բայց եթե այդպիսին թույլ է նրա մոտ, հարկավոր է մեկ անգամ նայել պարտիական արխիվը և տեսնել, թե ինչ ելույթներ է ունեցել նախորդ համագումարներում և պլենումներում, որտեղ նույն բառերով Ամատունուն գովում էր Խանջյանի դեմ, Հարությունյանին գովում էր Ամատունու դեմ: Այժմ էլ Թովմասյանին գովում է Հարությունյանի դեմ, այդպիսի վարքը ոչ մի դաստիարակչական նշանակություն չունի և հարկավոր է որոշ ընկերների հիշեցնել այդ մասին»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 88, ց. 17, գ. 67, թթ. 78-79:

դարձած անհատին նույն եղանակով, որով ինքը պաշտամունքի առարկա դարձած անհատը սովոր էր քննադատել ու անվանարկել քաղաքական իր հակառակորդներին (թ. 5-6):

1950-ականներին Հովհաննիսյանը չէր դադարել լինել ստալինիզմի քաղաքական հակառակորդը: Ու հենց իրեն՝ Հովհաննիսյանին քննադատելու ձևի մեջ էր երևում շարունակվող ստալինիզմը:

Առուշանյանը, որ անհանգստացած էր Հովհաննիսյանին քաղաքական պաշտոնում տեսնելու փաստից, վերջինիս մեղադրում էր ոչ միայն «անտաղանդ քարտուղար» լինելու մեջ, այլև հատուկ շեշտում, թե Հովհաննիսյանը «գրականագետ է և ուրիշ ոչինչ»:[43] Թվում է, Առուշանյանը Հովհաննիսյանին միայն գրականագետի դեր տալով, այնուամենայնիվ սխալ տեղում էր փնտրում Հովհաննիսյանի քաղաքական կշիռը նվազեցնելու հնարավորությունը: Հովհաննիսյանի քաղաքական դիրքորոշումը կապված չէր քաղաքական պաշտոն զբաղեցնելու հետ: Հովհաննիսյանի պատմագիտությունն էր քաղաքական: Հովհաննիսյանի պատմաքաղաքականությունը վերականգնում էր ստալինիզմով ջնջված այն կապերը, որոնք կառուցում էին հայաստանյան քաղաքական մտքի պատմությունը, և դրանով հենց բացահայտում պատմությունը պատմականությունից զրկելու, պատմական կապերը խզելու ու այլափոխելու սկզբունքները, որոնց վրա հենվում էր ստալինիզմը:

Պատահական չէ, որ արձագանքելով Առուշանյանի գնահատականներին՝ Հովհաննիսյանը նշում էր, թե «անձնապես հույժ բավարարված [է] և շնորհապարտ» Կոմունիստական կուսակցությանն իր կուսակցական տոմսը վերադարձնելու համար և «միանգամայն գոհ համեստ գիտաշխատավորի կամ թեկուզ, ինչպես ընկ. Առուշանյանն է ասում, «միայն գրականագետի» աշխատանքով»:[44] Հովհաննիսյանին «բնավ չէր խոցում» միայն գրականագետ համարվելու հանգամանքը, բայց ո՞ւմ էր խոցում Հովհաննիսյանի «գրականագիտությունը»:

Անցյալից «երես շուռ տված» պատմությունը

Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության 20-րդ համագումարի նշանակությունը Հովհաննիսյանը շրջադարձային էր համարում պատմագիտության համար:[45] Համագումարում, ըստ Հովհաննիսյանի, «մերկացվեցին բացասական այն հետևանքները, որ ունեցել է անհատի պաշտամունքի պրակտիկան ինչպես սովետական հասարակագիտության բազմաթիվ այլ բնագավառների, այնպես և սովետական պատմագիտության համար» (թ. 1):

Ինչպես Հովհաննիսյանն էր պարզաբանում, մարքս-լենինյան պատմագիտությունը չէր ժխտում պատմության մեջ անհատի կատարած դերը: Ավելին, ըստ Հովհաննիսյանի, այն կարողացել էր վեր հանել ու լուսաբանել անհատի դերի կոնկրետ պայմաններում դրսևորված հասարակական օրինաչափությունը (թ. 2): Պատմագիտական այս սկզբունքներից, սակայն, հեռու էին այն մոտեցումները, որոնք որդեգրվեցին անհատի պաշտամունքի շրջանում. «Խնդիրն այն է,- գրում էր Հովհաննիսյանը,- որ անհատի պաշտամունքի քուրմերը ոչ թե լուսաբանում, այլ փառաբանում էին իրենց ստեղծած

[43] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 18, թ. 68:
[44] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 492 ա, թ. 4:
[45] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[7], վավ. 35 ա, թ. 1: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

պողպատե կուռքի չկատարած հրաշքներն ու չգործած սխրագործությունները» (թ. 2): Բարձրաձայնելով հայաստանյան պատմագիտության վրա թողած անհատի պաշտամունքի հետևանքների մասին՝ Հովհաննիսյանը միաժամանակ բացահայտում էր ստալինյան պատմագիտության կայացման պատմությունը: Դրանով Հովհաննիսյանն ըստ էության երևան էր բերում ստալինյան պատմագիտության հաստատման արդյունքում Անդրկովկասի ու Խորհրդային Միության «կեղծված» պատմությունն ու պատմությունը «կեղծելու» ստալինյան քաղաքական ձևերն ու մեթոդները (թ. 3).[46]

> Պաշտամունքի առարկա դարձած անհատի նկատմամբ հաճոյակատարությամբ զբաղված «պատմաբանները» իրենց ստեղծագործությունները հաճախ վահանավորում էին ժամանակակիցների «հիշողություններով»: Այս մի երևույթ է, որի զավեշտական նախանշանները Անդրկովկասում առկա էին տակավին քսանական թվականների կեսերին, բայց այլանդակ ու ոճրապարտ կերպարանք ստացան երեսնական թվականներից Բերիայի հուշարկումով հորինված «հիշողությունների» մրցավազքով ....
>
> Ավելի ուշ պատմագրական ուսումնասիրությունների մեջ Բերիան և բերիականներն օգտագործում էին համատարած ահաբեկման, վայրագ ծեծի ու խոշտանգումների միջոցով հոգեպես նվաղած իրենց զոհերի «անձնական սրտաբաց խոստովանությունները», նյութեր, որոնք փաստապես կազմում կամ թելադրում էին այսպես կոչված «ժողովրդի թշնամիների» անգո գործերի քննիչները՝ հասարակական կեղծված ու բարոյալքված կարծիքի մեջ ստանալով «անդրդվելի վկայությունների» զորություն (թթ. 3-4):[47]

Ստալինյան քաղաքականության ու ստալինան պատմագիտության միջև եղած ուղիղ կապերը նշելով՝ Հովհաննիսյանը քննում էր հայաստանյան պատմագիտության պատմությունը: Այդ պատմության մեջ ստալինիզմը քաղաքական ուղիղ հրամայականի էր ենթարկել պատմագիտությունը՝ այն վերածելով պատմությունը «կեղծող» ատյանի: Հովհաննիսյանն, ուրեմն, վեր էր հանում ստալինյան պատմագիտության մեթոդաբանությունը: Հովհաննիսյանի համար պատմագիտության չափանիշը հստակ էր. պատմաբանը պետք է ուսումնասիրեր պատմական սկզբնաղբյուրները, քննաբար ստուգեր դրանց մեջ եղած փաստերը և աներ դրանց հիման վրա գիտական արժեք ներկայացնող ընդհանրացումներ և եզրակացություններ (թ. 4):[48] Այնինչ ստալինյան պատմագիտությունը, ըստ Հովհաննիսյանի, հետևում էր այլ սկզբունքների.

---

[46] Հովհաննիսյանը մասնավորապես հիշատակում է «թխված «հիշողությունների» և պատմական փաստերի նենգափոխման ճանապարհով հերյուրված Բերիայի գիրքը», նաև «ոչ միայն Ստալինի կենսագրությունը, այլև Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ու վերջին հաշվով Սովետական Միության Կոմպարտիայի պատմությունը» կեղծած Բերիայի «օրապակաս երկվորյակներին»՝ Միր Ջաֆար Բագիրովին ու Արմո Հարենցին: Նշված հեղինակների աշխատություններից տե՛ս, օրինակ, Лаврентий Берия, *Величайший человек современности* (Краснодар: Краевое книгоиздательство, 1940); Л. Берия, *К вопросу об истории большевистских организаций в Закавказье: Доклад на собрании тбилисского партактива 21-22 июля 1935 г.* (Москва: Б. и., 1948); М. Д. Багиров, *Незабываемые страницы истории: [К 30-летию со дня гибели 26 бакинских комиссаров]* (Баку: ИМЭЛС при ЦК ВКП (б). Азерб. филиал, 1948); Ա. Հարենց, *Ստալինը յեվ հեղափոխական շարժումը Հայաստանում 1905-1907թթ.* (Երևան: Քաղպետհրատ., 1940):

[47] Քաղաքական բռնաճնշման ու պատմական փաստերի խեղաթյուրման մի օրինակ է հենց Հովհաննիսյանի բռնադատման պատմությունը: Այդ պատմությունը մեզ հասել է Հովհաննիսյանի՝ Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության կուսակցական վերահսկողության կոմիտեին ուղղված դիմումից: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 491 ա:

[48] Հովհաննիսյանը մի այլ տեղ նշում է. «Պատմագիտությունը հասարակական գիտություն է, որ նպատակ ունի հետազոտել ու լուսաբանել մարդկության կամ առանձին ժողովուրդների անցյալը կամ վեր հանել նրանց հասարակական զարգացման առանձին երևույթների օրինաչափություններն ու դրանց դրսևորման գիտական կոնկրետ պատկերը»: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 168, թ. 1:

> Նոր պատմական փաստերը հաճախ մոբիլիզացվում էին ոչ թե իրողություններ նշելու ու արժեքավորելու կամ պատմության օբյեկտիվ օրինաչափություններ հայտնաբերելու, այլ մեծարված անհատի հոգնեցնելու չափ կրկնված ու ձանձրույթի չափ հանրածանոթ այս կամ այն միտքն ու գործողությունը նորանոր առիթներով վերահաստատելու նպատակով (թ. 4):

Ուշագրավ է Հովհաննիսյանի ընդգծումը, որ առաջին հերթին Կոմունիստական կուսակցության և խորհրդային պետության պատմությունն ուսումնասիրող գիտությունն էր, որ պարտավոր էր ծառայել «պողպատյա կուռքի ուրույն կամ մուրածո հայտնությունների մեկնաբանմանը» (թ. 5): Հովհաննիսյանը մեկն էր, որի գիտության առանցքային խնդիրներից էր հայաստանյան քաղաքական մտքի զարգացման պատմության ուսումնասիրումը. պատմություն, որին պատկանում էին, Հովհաննիսյանի ըմբռնմամբ, նաև Կոմունիստական կուսակցությունն ու խորհրդային պետությունը:[49] Սակայն այդ պատմությունը ստալինիզմը կեղծել էր: Ուրեմն, անհնար էր այլևս վեր հանել Կոմունիստական կուսակցության և խորհրդային պետության պատմությունն առանց այդ պատմությունը հետահայաց յուրացրած ստալինիզմի ու ստալինյան պատմագիտության պատմության բացահայտման: Այդ բացահայտմամբ Հովհաննիսյանը պատմականացնում էր ստալինիզմը, հանձնում էր ստալինիզմն ու ստալինյան պատմագիտությունը պատմաբանության քննությանը: Այդ գնով էր, որ գիտական եզրակացությունները պետք է այլևս չենթարկվեին «քաղաքական կոնյունկտուրային պահանջին», իսկ գիտությունն ազատվեր «վախից ու ակնածանքից», «բացահայտ կարյերիզմից ու մոլեգին ստրկահաճությունից», որոնք, Հովհաննիսյանի գնահատմամբ, ստալինյան շրջանում դարձել էին գիտնականի «մտավոր ստեղծագործության» «խորհրդատուները» (թ. 5):[50] Ուրեմն, հանուն ներկայի գիտության ու հանուն ներկայի քաղաքականության Հովհաննիսյանը պատմականացնում ու դրանով իսկ ընդհատում էր ստալինիզմի ու ստալինյան պատմագիտության միջև հաստատված կապը.

> Եթե մի ժամանակ կային ասողներ, թե պատմությունն այլ ինչ չէ, քան դեպի անցյալը շրջված քաղաքականություն, հետագայում ստացվեց այնպես, որ երես շուռ տալով անցյալից, պատմությունը դարձավ քաղաքականություն՝ շրջված դեպի կոնյունկտուրայի ընթացիկ առաջադրանքը՝ անհատի պաշտամունքը: Անգիտացվում էր, որ ոչ թե գիտական եզրակացությունները պիտի բխեն քաղաքական ընթացիկ կոնյունկտուրայի պահանջից, այլ այս վերջինը փաստերի ուսումնասիրությունից հետևող եզրակացություններից: Այլ կերպ գիտությունը չէր լինի գիտություն, այլ կոնյունկտուրային աճպարարություն (թթ. 5-6):

Հովհաննիսյանի համար, ուրեմն, գիտությունը գիտություն պահելը քաղաքական հարց էր, և՛ անցյալում, և՛ ներկայում: Անխոս, գիտությունը և հատկապես պատմագիտությունը կապված էին քաղաքականության հետ. խնդիրն այդ կապի ձևն էր: Այդ կապն, ըստ Հովհաննիսյանի, որոշվում էր հենց քաղաքականության ու պատմագիտության միջև եղած հստակ սահմանով, երբ գիտությունը քաղաքական էր ոչ թե իր ծառայական դիրքով, այլ

---

[49] Պատահական չէ, որ դեռ 1920-ականներին Հովհաննիսյանին մեծապես զբաղեցնում էր Հայաստանի խորհրդայնացման պատմությունը գրելու հարցը, այսինքն՝ իր իսկ ներկայի պատմականացումը: Տե՛ս, օրինակ, Աշոտ Հովհաննիսյան, *Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը* (Յերեվան: Պետհրատ, 1923); Աշոտ Հովհաննիսյան, «Նվաճում, թէ՞ հեղափոխություն», *Խորհրդային Հայաստան*, 29 սեպտեմբերի 1923 թ.; Աշոտ Հովհաննիսյան, *«Համազգային կրիզիսը». Նոյեմբերյան հեղափոխության հինգերորդ տարեդարձի առթիվ* (Յերեվան: Պետհրատ, 1926):

[50] Ուշագրավ է Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի ուսանողության հետ հանդիպման ժամանակ Հովհաննիսյանի ունեցած ելույթը: Հանդիպման ընթացքում Հովհաննիսյանն ուսանողների հետ կիսվում է իր պատկերացմամբ, թե ինչպիսին պետք է լինի ապագա պատմաբանը: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 167 ա:

քաղաքական էր այնքանով, ինչքանով քաղաքականությունն ի վիճակի էր հաշվի նստել գիտնականի «մտավոր ստեղծագործության» եզրակացությունների հետ: Պատահական չէ, որ Հովհաննիսյանի համար պատմագիտությունն անցյալի ինքնանպատակ ուսումնասիրություն չէր, այլ միշտ և ամեն անգամ լծորդված էր քաղաքական ներկա ու արդիական խնդիրների հետ: 1959-ին Գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովում արտասանած իր ճառը Հովհաննիսյանն ամփոփում էր հենց այդ հարցը շոշափելով.

> Մարքսիստական պատմագիտությունը դեպի անցյալը շրջված քաղաքականություն չէ, ինչպես կարծում էր Պակրովսկին, այլ իսկական գիտություն, որը անցյալի օրինաչափությունների վերհանումը լծակ է դարձնում քաղաքական այժմեական մեր մարտերի պարտիական ղեկավարության համար: Ցավն այն չէ, որ պատմաբանը տարվում է անցյալով, այլ որ անցյալի ուսումնասիրությունը նա հաճախ չի կատարում այժմեաբար:[51]

«Իսկական գիտության» չափանիշն այժմեականությունը դարձնելով էր, որ Հովհաննիսյանը միաժամանակ պատմագիտության ուսումնասիրության առարկա էր դարձնում նաև Կոմունիստական կուսակցության ու խորհրդային երկրի պատմությունը: Հովհաննիսյանն իր ելույթում հատուկ ընդգծում էր, թե այժմեաբար կարող էր լուսաբանվել ոչ միայն հեռու անցյալի, այլև հենց խորհրդային պետության պատմությունը (թ. 2): Ավելին, խորհրդային շրջանի պատմությունը Հովհաննիսյանը չէր կտրում հայ ժողովրդի ընդհանուր պատմությունից: Քառասնամյա այդ պատմությունը «գիտական և քաղաքական խոր իմաստ ու արժեք» էր ստանում, Հովհաննիսյանի գնահատմամբ, հենց «հայ ժողովրդի բազմադարյան որոնումների ու ոգորումների պատմական հետնախորքի վրա» (թ. 2):

Պատմությունն իբրև ներհակ զարգացման ընթացք ընբռնող Հովհաննիսյանի համար այս կերպ անցյալը, ներկան ու ապագան չէին տրոհվում, կտրուկ ձևով չէին տարանջատվում իրարից. դրանք պատկանում էին միևնույն պատմական հակասալից զարգացման ընթացքին, որի ուսումնասիրմանն էր կոչված պատմաբանը: Այս մոտեցմանն էր հետևում Հովհաննիսյանը, երբ կոչ էր անում «ներթափանցել ոչ միայն մեր ժողովրդի պատմական անցյալը, այլև նրա ներկան ու նրա գալիք օրը» (թ. 2): Հովհաննիսյանն այս կերպ վերադարձնում էր պատմագիտությանը դրա «*գործնական* նպատակը» (ընդգծումը՝ Ա. Հ.).

> Պատմական անցյալի իմացությունը կարևոր է հասարակության համար՝ ապագայի ուղիները լուսավորելու կամ ապագան կերտելու համար: .... Եթե անտարբեր եք դեպի ձեր շրջապատը, դեպի մեր ժամանակաշրջանը հուզող խնդիրները, եթե չեք պատրաստվում ձեր ակտիվ մասնակցությունը բերելու այդ խնդիրների լուծման մեջ, ձեզ համար անօգուտ է պատմական գիտությունը.... (թթ. 2-3):

Ակնհայտ էր, սակայն, որ գիտության ստալինացումը փորձառած պատմաբանի համար ինքնին տրված չէր պատմական անցյալն ընթացիկ կյանքին կապելու հնարավորությունը: Այդ հնարավորությունն ուղղակիորեն կապված էր «սուր ու ակտիվ» այն պայքարի հետ,

---

[51] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 164, թ. 2: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում: Երիտասարդ պատմաբանների հետ մի հանդիպման ժամանակ Հովհաննիսյանն իր խոսքում շեշտում է. «Պատմական անցյալի իմացությունը կարևոր է հասարակության համար՝ ապագայի ուղիները լուսավորելու կամ ապագան կերտելու համար:.... Չի կարող հիրավի լինել պատմական ճշմարիտ ու պիտանի իմացություն, եթե այդ իմացությունը չի ընդառաջում այժմեականության, չի բխում ընթացիկ կյանքի խոր պահանջներից, չի զինում մեզ այդ պահանջներին բավարարելու համար անհրաժեշտ խոր գիտելիքներով, կամ չի նպաստում մեզ ճիշտ կողմնորոշվելու ժամանակակից կյանքը հուզող հարցերի մեջ»: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 168, թթ. 2-3:

որը, ըստ Հովհաննիսյանի, պետք է տարվեր «նաև անցյալի ճիշտ լուսաբանության համար»:[52] Պատմությունը «ճիշտ» լուսաբանելու այս կոչի կենսագործողը 1950-1960-ականներին ի վերջո դարձել էր ինքը՝ Հովհաննիսյանը: Հովհաննիսյանի սահմանած պատմագիտական չափանիշներով առաջնորդվող հայաստանյան գիտական ավանդույթն ընդհատվել էր 1920-ականներին: Ստալինիզմն էր, որ խզել էր անցյալն ու ապագան իրար կապող պատմական ժամանակը: Ուրեմն, վերականգնել 1920-ականների գիտական ավանդույթը միաժամանակ կնշանակեր պատմական ժամանակով իրար կապել ներկան, անցյալն ու ապագան: Հովհաննիսյանն իր ներկա՝ 1950-1960-ականներ էր բերում 1920-ականները, այդ կերպ հայաստանյան ապագայի համար ճանապարհ բացելով դեպի իր իսկ անցյալը: Պատմությունն իբրև հակասական առաջընթացի բարդ տրամաբանություն ընբռնող Հովհաննիսյանի այս մոտեցումը հաղթահարում էր ստալինյան պատմության ապապատմականությունը:

1962-ին Շմավոն Հարությունյանի «Սովետահայ պատմագիտությունը 20-ական թվականներին» հոդվածի մասին գրած իր կարծիքում Հովհաննիսյանը 1920-ականները հայ պատմագիտության մեջ գնահատում էր իբրև մի շրջափուլ, երբ՝

> Պատմագրության մեջ իշխում էր պատմական իրողությունները ճշմարտացիորեն ներկայացնելու, պատմական զարգացման օրինաչափ ընթացքը ճշմարտացիորեն վեր հանելու մտահոգությունը: Իշխող չէր տակավին այն քաղաքական ստրկամտությունը և գիտական մտավախությունը, որ թևատարած իշխանություն ստացավ հետագայում և նահանջի ուղի բռնեց միայն 20-րդ համագումարից հետո:[53]

1960-ականների դրությամբ Հովհաննիսյանն այն համոզմանն էր, որ ստալինյան պատմագիտությանը բնորոշ մոտեցումները նահանջի ուղին էին բռնել: Բայց հենց իր անդրադարձը նույն Շմավոն Հարությունյանի հոդվածին ակներևաբար հակառակն էր ապացուցում:[54] Ինքը՝ Հովհաննիսյանը, Հարությունյանի հոդվածը քննարկելիս անհնարին էր համարում չանդրադառնալ հոդվածագրի այն նկատողություններին, որոնք վերաբերում էին հենց իր պատմագրական գործերին. «Հարգելի հեղինակը կամա թե ակամա կրկնում է իմ մի շարք աշխատությունների մասին անհատի կուլտի թևատարած իշխանության օրոք շրջանառության մեջ մտած թյուրիմացությունները»:[55] Ըստ Հովհաննիսյանի՝ Հարությունյանը չէր ջանացել հավաստիանալու իր պաշտպանած հայացքների ստույգ բովանդակության մեջ: Հովհաննիսյանի դիտողություններից պարզ է

---

[52] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 168, թթ. 2-3: Նշել է պետք, որ Հովհաննիսյանի հետաքսորական շրջանի տպագիր երկու հիմնարար աշխատությունները՝ *Նալբանդյանը և նրա ժամանակը,* 2 հ. (Երևան: Հայպետհրատ, 1955, 1956) և *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության,* 2 հ. (Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1957, 1959), նա գրել է աքսորում: Այս երկհատորյակները ևս Հովհաննիսյանի կռիվն էին հաստատված խորհրդային պատմագիտության դեմ: Բնականաբար դրանք լույս չտեսան ստալինյան շրջանում ու հրատարակվեցին միայն «ձնհալի» տարիներին: Հովհաննիսյանի *Նալբանդյանի* և *Դրվագների* հրատարակության պատմությունը դեռևս կարոտ է հետազոտման. հետազոտություն, որը, սակայն, սույն աշխատանքի շրջանակից դուրս է:

[53] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 457 բ, թ. 3:

[54] Ըստ երևույթին Հովհաննիսյանը կարծիքը գրել է մինչև հոդվածի տպագրությունը, քանի որ մեզ հասու տվյալների համաձայն այն հրատարակվել է 1963-ին: Տե՛ս Շ. Հարությունյան, «Սովետահայ պատմագրությունը 1920-ական թվականներին», *ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների,* 1963, թիվ 3, էջ 3-28, https://tinyurl.com/mfu4dw6j, այց՝ 18 սեպտեմբերի 2024 թ.: Նույն թեմային Հարությունյանի անդրադարձը տե՛ս *Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում (1920-1963). ուրվագծեր* (Երևան: Հայաստան, 1967) մենագրության մեջ: Հարությունյանի «Սովետական Հայաստանի պատմական գիտության զարգացումը» աշխատության և «Սովետահայ պատմագրությունը» համառոտ ակնարկի Հովհաննիսյանի քննադատությունը տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 458 ա, 459 ա:

[55] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 457 բ, թ. 4:

դառնում, որ 1960-ականների դրությամբ պատմագիտության մեջ 1920-ականների վերանայումը չէր անցնում նույն 20-րդ համագումարի քաղաքական հռետորաբանության սահմանները. հայաստանյան պատմագիտությունն իր առջև չէր դնում ստալինիզմն ու ստալինյան պատմագիտությունն իրապես հարցադրելու խնդիր:[56] Հակառակը, այն մոտեցումը, որով Հարությունյանն իր հոդվածում քննադատում էր Հովհաննիսյանի 1920-ականների պատմագիտությունը, բացահայտում էր շարունակվող ստալինիզմի «տակից» գործելու նոր տրամաբանությունը: Այդ մոտեցումն է նկատելի Հովհաննիսյանի դիտարկումներից մեկում.

> Նրա (Հարությունյանի՝ Ի. Շ.) գրածից ընթերցողը կարող է ստանալ այն տպավորությունը, թե հետագա իմ աշխատությունները ոչ թե 10-20-ական թվականների իմ աշխատությունների մեջ առաջադրված մտքերի գիտական հետագա զարգացման արդյունք են, այլ դրանց սկզբունքային ժխտումը:[57]

1950-1960-ականներին Հովհաննիսյանը պայքարում էր քաղաքական ու պատմագիտական ավանդույթի խզումները վերականգնելու համար: Բայց փաստացիորեն հենց իր պատմագիտական ժառանգությունն էր, որ ստալինյան նույն մեթոդաբանությամբ ենթարկվում էր աղճատման: Հովհաննիսյանի 1920-ականների պատմագիտությունը քննադատվում էր այնպես, որ կտրվեին 1920-ականներն ու 1950-1960-ականները միմյանց կապող գիտական կապերը, խզվեր գիտական զարգացման ընթացքն ու հետահայաց հերքվեր 1920-ականների Հովհաննիսյանի պատմագիտությունը: Բայց Հովհաննիսյանի պատմագիտությունն ինքը պատմական կապերի պատմագիտություն էր: Մասնավորապես Հովհաննիսյանի 1920-ականների պատմագիտությունն էր բացահայտում հայաստանյան քաղաքական մտքի զարգացմանը հատուկ բարդ ու ներհակ կապերը, երևան բերում հայաստանյան իրականությունից ծնված քաղաքական մտքի ներքին ժառանգորդական կապերը: Ուրեմն, քողարկել Հովհաննիսյանի 1920-ականների պատմագիտությունը նշանակում էր շարունակել քողարկել հայաստանյան իրականությունն ու դրանից ծնված քաղաքական մտքի պատմությունը: Եթե հայաստանյան քաղաքական մտքի պատմությունը քողարկվում էր, ուրեմն իրենց՝ մեծամասնականների կուսակցության պատմությունը շարունակում էր մնալ «չգրված»: Իսկ թե Հովհաննիսյանի պատմագիտության մեջ ինչ կապով էին մեծամասնականները կապվում հայ քաղաքական մտքի պատմությանը՝ հստակ էր: Դաշնակցության մանրբուրժուականության տեսությունն էր բացահայտում հայաստանյան սոցիալ-տնտեսական այն կյանքը, որից ծնունդ էին առել ազգային կուսակցությունները, այդ թվում՝ Դաշնակցությունը: Իսկ իրենք՝ մեծամասնականները ըստ էության նույն այդ կուսակցություններից ելած քաղաքական գործիչներ էին, որոնց քաղաքականությունը կայանում էր հայաստանյան նույն իրականության պայմաններում: 1960-ականներին հերքվում էր Հովհաննիսյանի 1920-ականների պատմագիտությունը, քանի որ հենց 1920-ականներին առաջ քաշված Դաշնակցության մանրբուրժուականության տեսության ջնջման ու մոռացման գնով էր Հայաստանում հաստատվել ստալինիզմն ու ստալինյան

---

[56] *ԽՍՀՄ պատմության* 8-րդ հատորի խնդիրներին անդրադառնալիս՝ 1965-ին Ծատուր Աղայանին ուղղած իր նամակում Հովհաննիսյանը գրում էր. «Պատմական գիտության ճակատում մեզ մոտ [վիճակը] դեռ բարեհաջող չէ. թվում է, քիչ չեն գիտնական պոլիտիկանները, որոնք մինչև հիմա չեն կարողանում հրաժարվել *Կարճ կուրսի* ծեծված արտահայտություններից և դրա ազդեցությամբ կուտակված հակագիտական նախապաշարմունքների աղբից, որը ոչ մի կապ չունի իրական գիտության խնդիրների հետ» (բնագիրը ռուսերեն): Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 527, թ. 1:

[57] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 457 բ, թ. 4: Հավանական է, որ Հարությունյանը հոդվածի տպագրված տարբերակում փոփոխություններ է կատարել: Հոդվածում նկատելի է ոչ այնքան Հովհաննիսյանի առաջադրած մտքերը միմյանց հակադրելու, որքան նրա դիրքորոշումը «տակից» քննադատելու մոտեցում: Տե՛ս, օրինակ, Հարությունյան, «Սովետահայ պատմագրությունը 1920-ական թվականներին», https://tinyurl.com/mfu4dw6j, էջ 24:

պատմագիտությունը: Ուրեմն, Դաշնակցության սոցիալական ծագմանն ու հայաստանյան իրականությանը տված Հովհաննիսյանի գնահատականի հերքումն ինքնին նշում էր շարունակվող ստալինիզմի գոյությունը 1960-ականներին:

1963-ին *Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծերի* մակետի առթիվ Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ծատուր Աղայանին ուղարկված գրության մեջ Հովհաննիսյանը ստիպված էր հակադարձել 1920-ականներին իր դեմ ուղղված մեղադրանքներին, որոնք տեղ էին գտել գրքում:[58] Հովհաննիսյանը մասնավորապես անդրադառնում էր մակետի այն էջերին, որտեղ շարադրված էին 1926-1927 թվականներին Դաշնակցության սոցիալական ծագման հարցի մասին Կոմունիստական կուսակցության ղեկավար մարմինների ու կուսակցական մամուլի կողմից Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքները: Պատմական իրողությունը վեր հանելու սկզբունքին հավատարիմ՝ Հովհաննիսյանը պարզաբանում էր, որ նույն թվականի ամռանը *Ուրվագծերը* քննարկող նիստում, որին ներկա է եղել նաև Կենտկոմի քարտուղար Հովհաննես Բաղդասարյանը, Հովհաննիսյանը պահանջել է, որ գրքում հիշատակվող մեղադրանքները հասցեագրվեն ոչ թե «անորոշ «ոմանց»», այլ անձնապես իրեն, «որչափ 1926-1927 թվականներին հատկապես [ինքն է] եղել դաշնակցության մանր-բուրժուական ծագման տեսության պաշտպանողը»:[59] Միաժամանակ Հովհաննիսյանը ստիպված էր պահանջել *Ուրվագծերի* խմբագրությունից, որ վերջինս «վերոհիշյալ մեղադրանքները ձևակերպի այնպես, ինչպես դրանք արձանագրված են եղել ժամանակի պարտիական օրգանների կողմից՝ առանց հետսամուտ հավելումների»:[60]

Բայց 1960-ականների պատմագիտությունն այլևս լի էր ստալինյան հետսամուտ հավելումներով: Եթե 1920-ականներին Հովհաննիսյանը ստիպված էր ճակատել հաստատվող ստալինիզմի քաղաքական ուժի դեմ, ապա 1960-ականներին նա ստիպված էր առերեսել պատմագիտական քողարկող ու վարագուրող այն ձևերն ու մեթոդները, որոնցում նոր ուժ էր ստացել ստալինիզմը: Ի տարբերություն 1920-ականների՝ 1960-ականներին Հովհաննիսյանը ոչ միայն հարկադրված էր պաշտպանել իր դիրքորոշումը, այլև ինքն իրեն դարձնել անհասցե մեղադրանքների հասցեատերն ու ճշգրտել 1920-ականներին պաշտոնապես իր դեմ հնչած մեղադրանքները:

Տպագրված *Ուրվագծերի* մեջ Հովհաննիսյանի այս նկատողությունները չկան այն պարզ պատճառով, որ Դաշնակցության սոցիալական ծագման շուրջ բանավեճն ըստ էության հանված է գրքից ու փոխարինված անորոշ ձևակերպմամբ: Գրքում հիշատակվում է, թե 1920-ականներին Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը պայքարում էր «բուրժուական նացիոնալիզմի» դրսևորումների դեմ, բայց այդ պայքարը «նպատակասլաց չէր».

---

[58] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 248, թ. 1:
[59] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 248, թ. 1:
[60] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 248, թ. 1: Հովհաննիսյանի այս պահանջի առնչությամբ հիշատակելի է նաև Շմավոն Հարությունյանի «Սովետահայ պատմագրությունը 1920-ական թվականներին» հոդվածը: 1920-ականների պատմագիտական խնդիրները քննարկելիս Հարությունյանն անդրադառնում է նաև Դաշնակցությանը տված Հովհաննիսյանի գնահատականին: Հոդվածի ընթերցումից տպավորություն է ստեղծվում, թե Հարությունյանը մի կողմից անկարող է եղել հաշվի չնստել Դաշնակցությունն իր սոցիալական ծագմամբ մանրբուրժուական կուսակցություն համարելու Հովհաննիսյանի դիրքորոշման հետ: Մյուս կողմից, սակայն, Հարությունյանը Հովհաննիսյանի աշխատություններից վերցրած առանձին մեջբերումներով ակնհայտորեն ջանացել է ցույց տալ, թե Հովհաննիսյանը ևս պաշտպանել է Դաշնակցության բուրժուական կուսակցություն լինելու դիրքորոշումը: Պատահական չէ, որ իր անդրադարձը Հարությունյանն ամփոփում է Դաշնակցությունը պաշտոնապես բուրժուական կուսակցություն հռչակած ստալինյան որոշման վկայակոչմամբ: Տե՛ս Հարությունյան, «Սովետահայ պատմագրությունը 1920-ական թվականներին», https://tinyurl.com/mfu4dw6j, էջ 24:

> Մամուլում լույս տեսած հոդվածներում ոչ այնքան ցույց էր տրվում դաշնակցության հակաժողովրդական ու հակառևոլյուցիոն էությունը, նրա թշնամական գործունեությունը, որքան անտեղի վեճեր էին հարուցվում այդ պարտիայի սոցիալական ծագման ու բնույթի վերաբերյալ:[61]

Սկսվող բրեժնևյան «լճացման» շրջանի նախաշեմին Հովհաննիսյանը հայտնվել էր Դաշնակցության մանրբուրժուական ծագման տեսությունը վերահաստատելու խնդրի առաջ: Հայաստանյան իրականության ու հայաստանյան քաղաքական մտքի պատմության գնահատման համար 1920-ականների երկրորդ կեսին սկսված Հովհաննիսյանի պայքարը, ուրեմն, չէր ավարտվել: Քանի դեռ Հովհաննիսյանի պատմագիտության առանցքում հայ իրականությունը գիտականորեն բացահայտելու խնդիրն էր, Հովհաննիսյանը պաշտպանելու էր Դաշնակցության մանրբուրժուականության տեսությունը: Քանի դեռ Հովհաննիսյանը պաշտպանելու էր Դաշնակցության մանրբուրժուականության տեսությունը, ստալինիզմը պայքարելու էր դրա դեմ՝ իր ուժը գտնելով պատմության մոռացման ու իրականության քողարկման մեջ:

Ուրեմն, պատահական չէ, որ ընդդեմ ստալինիզմի և հանուն հայաստանյան իրականության ու մեր քաղաքական մտքի պատմության ճանաչման Հովհաննիսյանի պայքարը պիտի բյուրեղանար մի գրքի հղացմամբ, որտեղ նա առաջադրում էր 19-րդ դարի հայ սոցիալ-քաղաքական իրականության պատմական տեսությունը:

Գլուխ 2. «Ճշմարտություն», որը «հրատարակել չի կարելի»

«Հայ ժողովրդի նոր պատմության յուրահատկությունը»

1969-ին Խորհրդային Միության Գերագույն խորհրդի անդամ Անաստաս Միկոյանին գրած նամակներից մեկում Հովհաննիսյանն իր՝ *Ուրվագծեր 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ հասարակական-քաղաքական մտքի պատմության* հատորի մասին գրում է. «Կկամենայի առանց չափազանցման հավաստիացնել քեզ, որ այս գիրքը իմ լավագույն աշխատությունների շարքին եմ դասում»:[62] Հովհաննիսյանի կարծիքն իր իսկ ուսումնասիրության մասին ուշագրավ է թվում: Այն մի կողմից բացահայտում է արժեքը, որ Հովհաննիսյանն աներկբայորեն տալիս է գրքին, մյուս կողմից՝ փոխանցում մի զգացում՝ կարծես Հովհաննիսյանը փորձում է պաշտպանել գիրքն ու դրա կարևորությունը: Ուրեմն, ո՞րն էր Հովհաննիսյանի գրքի արժեքն ու ի՞նչն էր դրդում Հովհաննիսյանին պաշտպանել այն:

1960-ականների վերջին գրված «Հայ ժողովրդի պատմության բուրժուական էտապի մի քանի հարցերի շուրջը» անտիպ հոդվածում Հովհաննիսյանն անդրադառնում է մի խնդրի, որը նկատում է հայ ժողովրդի պատմագիտական հետազոտություններին ծանոթանալիս: Հովհաննիսյանի գնահատմամբ՝ այդ հետազոտություններից պարզ է դառնում, որ հայ պատմաբանները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել դեպի նախաֆեոդալական ու ֆեոդալական անցյալը, բայց նվազ հարցասիրություն են ցուցաբերել «նորադարյան կամ

---

[61] Ծ. Աղայան (խմբ), *Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր* (Երևան: Հայպետհրատ, 1963), էջ 367-368: Գրքի խմբագրակազմի մեջ հանդիպում ենք նաև Հովհաննիսյանի ազգանվանը:

[62] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 584, թ. 2:

բուրժուական», այսինքն՝ արդի պատմաշրջանի նկատմամբ:[63] Սրա բացատրությունը Հովհաննիսյանի համար որոշակի էր.

> Ամեն մի ժողովուրդ իր գոյատևման և զարգացման երաշխիքը նշմարում է հայրենի պետականության մեջ: Հայ ժողովրդի պատմությունը հետազոտողները ևս նրա գոյատևման ու զարգացման երաշխիքները որոնում են և տեսնում էին պատմական այն անցյալի մեջ, երբ կանգուն է եղել հայ պետականությունը, սրա մեջ են տեսել հայրենի երկրի բախտը տնօրինողին:[64]

Հայ ժողովրդի պատմությանը մոտեցող ուսումնասիրողներին, սակայն, Հովհաննիսյանն իր տեսակետն էր առաջադրում.

> Ինչ խոսք, որ եթե հայ ժողովրդի պատմության հին կամ միջնադարյան շրջանները պիտի մատուցվեին որպես պետականորեն ինքնորոշված երկրի պատմություն, նրա նոր պատմությունը պիտի լիներ հայ ժողովրդի ազգային կազմավորման և ազգային-ազատագրական պայքարի ու գաղափարախոսության պատմություն: Դրա մեջ է հենց հայ ժողովրդի նոր պատմության յուրահատկությունը:[65]

Հովհաննիսյանի գնահատմամբ՝ մեր պատմագիտության «տկար կողմը»՝ արդի շրջանի պատմության պակաս ուսումնասիրվածությունը, լիովին չէր գիտակցել խորհրդային և հատկապես խորհրդահայ պատմագիտությունը:[66] Դրանով հանդերձ ինքը՝ Հովհաննիսյանը բնորոշում էր հայ ժողովրդի նոր պատմության յուրահատկությունը՝ մասնավորապես շեշտելով այն բացը, որ տեսանելի էր *հայ քաղաքաբնակչության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի պատմության* ուսումնասիրման դաշտում: Այս կերպ, Հովհաննիսյանն ըստ էության սահմանում էր հայ ժողովրդի արդի շրջանի պատմության ուսումնասիրման առանցքը կազմող խնդիրը՝ հայ իրականության սոցիալ-տնտեսական պայմաններն ու այդ պայմաններից ծնունդ առած քաղաքական կյանքի պատմությունը:[67]

Անշուշտ, Հովհաննիսյանի պարագայում գաղտնիք չէր, թե պատմական ինչ հանգամանքների բերումով էր խորհրդահայ պատմագիտությունն այդ խնդիրները պակաս ուշադրության արժանացրել: Ստալինիզմն էր, որ սեպվել էր հայաստանյան իրականության ու այդ իրականությունն ուսումնասիրելուն կոչված հայաստանյան

---

[63] Սույն հոդվածն օգտակար է գրքի կոնցեպցիան հասկանալու համար: Հովհաննիսյանն ինքը հոդվածի տարբերակներից մեկի վրա թողած գրությամբ հայտնում է, թե «այս վարյանտը, կարծեմ, ճիշտ է անդրադարձնում իմ {գրքի} դիրքավորման պատկերը»: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[3], վավ. 6 գ, թ. [1]: Հոդվածից մեջբերումներ կատարելիս օգտվել ենք այն վավերագրից, որտեղ տեքստն առավել ամբողջական է: Հոդվածի տարբերակները տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[3], վավ. 6 ա, բ, գ; թղթ. 244[4], վավ. 12 գ; թղթ. 244[13], վավ. 320; թղթ. 244[14], վավ. 385: Հարկ է նշել, որ հոդվածի տարբերակներից մեկի դեպքում Հովհաննիսյանը «Հայ ժողովրդի պատմության բուրժուական էտապի մի քանի հարցերի շուրջը» վերնագիրը ջնջել և գրիչով փոխարինել է «Դաշնակցության սոցիալական վերասերման հարցի շուրջը» վերնագրով: Նույն վերնագրում «սոցիալական վերասերում» ձևակերպումը Հովհաննիսյանը ջնջել և փոխարինել է «ռեակցիոն վերասերում» ձևակերպմամբ: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[4], վավ. 12 գ, թ. 1:

[64] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[4], վավ. 12 գ, թ. 1:

[65] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[3], վավ. 6 ա, թ. 2:

[66] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[4], վավ. 12 գ, թ. 2:

[67] Ըստ Հովհաննիսյանի՝ արդի շրջանի պատմության բաց մնացած հարցերից էին արևելահայ բուրժուազիայի սոցիալ-տնտեսական էվոլյուցիայի հարցերը, հայ բուրժուական հասարակայնության կազմը, գյուղի ու քաղաքի հայ բուրժուական հասարակայնության շերտավորման պատկերը, հայ ազգային-ազատագրական շարժման մեջ արևելահայ բուրժուազիայի դերը, հայ ժողովրդի 19-րդ դարի ազգակազմության պրոցեսը, արևելահայ և արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների վերլուծությունն ու նրանց օրինաչափությունների տեսությունը, արևմտահայ ազատագրական շարժումը ղեկավարած կուսակցությունների բնութագրումը: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[4], վավ. 12 գ, թ. 3-5: Հովհաննիսյանի նշած բաց հարցերն ըստ էության գիրքը կառուցող հիմնարար խնդիրներն են:

պատմագիտության միջև: Հովհաննիսյանը մի առիթով անդրադառնալով իր *Ուրվագծերին՝* նշում է, թե գրքում առաջադրում է *արևելահայ ազգային-քաղաքական կուսակցությունների սկզբնավորման տեսությունը*:[68] Այս կերպ բացահայտվում է Հովհաննիսյանի գրքի կարևորությունը: Ընդդեմ ստալինիզմի՝ գրքում առաջ քաշած իր տեսությամբ Հովհաննիսյանը հայաստանյան պատմագիտությունը դարձնում էր այն գիտությունը, որ պետք է բացահայտեր հայ ժողովրդի նոր պատմության յուրահատկությունը՝ հայաստանյան արդի կյանքն ու այդ կյանքի սոցիալ-տնտեսական պայմաններից ծնունդ առած արևելահայ ազգային կուսակցությունների սկզբնավորման պատմությունը: Հովհաննիսյանը մատնանշում էր, որ հայ պատմագիտության մեջ բացակայում էր «արևելահայ և արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների խոր վերլուծությունն ու նրանց օրինաչափությունների հիմնավորված տեսությունը»:[69] Դա էր հարուցել, ըստ Հովհաննիսյանի, այն տարաձայնությունները, որոնք, ըստ նրա, գոյություն ունեին մասնավորապես արևմտահայ ազատագրական շարժումը ղեկավարած ազգային կուսակցությունների բնութագրման հարցում:[70]

Հովհաննիսյանի գնահատմամբ, խորհրդահայ պատմագրության այժմեական խնդիր էր ուսումնասիրել գաղափարական այն շրջափոխությունը, որ հայ իրականության մեջ կատարել էր հեղափոխական նարոդնիկությունը՝ վերածվելով «դեպի արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը կողմնորոշված յուրատեսակ ազգային-նարոդնիկական գաղափարախոսության»:[71] 1880-ականներին կազմավորված ու դեպի արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը կողմնորոշված ազգային-նարոդնիկական խմբավորումներից էր և 1890-ին Թիֆլիսում կազմակերպված Հայ հեղափոխականների դաշնակցությունը:[72] Հայ ազգային-նարոդնիկական կազմակերպությունները, ինչպես ցույց էր տալիս Հովհաննիսյանը, սկիզբ էին առել 1880-ական թվականներին արևելահայ ուսանող երիտասարդությանը համակած «ռուս նարոդնիկական շարժման ընդերքից» և ապա, դիմադարձ լինելով Ռուսաստանի հեղափոխական շարժումից, հետագայում բոլորն էլ նվիրվել էին Արևմտահայաստանի ազատագրման գաղափարին:[73] Հովհաննիսյանն ինքն ընդգծում էր, որ իր հետազոտության կարևոր դիտողություններից մեկը վերաբերում էր հենց «հայ և վրաց իրականության մեջ 80-ական թթ. սկզբներին ազգային-նարոդնիկական կազմակերպությունների առաջացմանը»:[74]

---

[68] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 500 ա, թ. 7:
[69] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[3], վավ. 6 ա, թթ. 4-5:
[70] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[3], վավ. 6 ա, թ. 5:
[71] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[3], վավ. 6 ա, թ. 9: Ինչպես պարզաբանում է Հովհաննիսյանը, «ազգային նարոդնիկական» տերմինն այդ կազմակերպությունների՝ իրենց իսկ տված բնորոշումը չէր, այլ «պայմանական տերմին», որ Հովհաննիսյանն ինքն էր ներմուծել «այդ կազմակերպությունների էությունը բնորոշելու համար»: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[25], վավ. 148 ա, թ. 2:
[72] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[3], վավ. 6 ա, թթ. 9-10: 1892-ին կայացած առաջին ընդհանուր ժողովում կուսակցությունն անվանվեց Հայ հեղափոխական դաշնակցություն: Այս մասին տե՛ս Հովհաննիսյանի *Ուրվագծերում՝* Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[2], վավ. 1 ա, թ. 309: Որպես ազգային նարոդնիկական խմբավորումներ Հովհաննիսյանը նշում է նաև Մոսկվայում առաջ եկած հայ ուսանողների «Միություն հայրենասիրաց» կազմակերպությունը և 1887-ին Ժնևում ստեղծված Հնչակյան կուսակցությունը: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[3], վավ. 6 գ, թ. 10: Հայ ազգային-նարոդնիկական գաղափարախոսության պատմության Հովհաննիսյանի մի այլ ուշագրավ ակնարկ տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[25], վավ. 148 ա, թթ. 1-2:
[73] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[3], վավ. 6 գ, թ. 10:
[74] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[25], վավ. 148 ա, թ. 1: Գրքում այս հարցերը քննարկող հատվածները Հովհաննիսյանը հրատարակել է նաև իբրև առանձին հոդվածներ: Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, «Արևելահայերի մասնակցությունը Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումներին (1860-70-ական թթ.)», *(ՀՍՍՀ ԳԱ) Պատմա-բանասիրական հանդես*, 1968, թիվ 1, էջ 15-38; Աշոտ Հովհաննիսյան, «80-ական թվականների առաջին կեսի արևելահայ ազգային նարոդնիկական

Այս կերպ Հովհաննիսյանը ցույց էր տալիս հայաստանյան հասարակական-քաղաքական մտքի զարգացման ուղեգիծը: Մասնավորապես ի դեմս Դաշնակցության՝ իր պատմական զարգացման ավարտին էր հասել 1880-ականների հայ «մանրբուրժուական ինտելիգենցիայի»՝ քաղաքային ու գյուղական մտավորականության հասարակական-քաղաքական շարժումը: Իսկ այդ շարժումը, ինչպես ցույց էր տալիս Հովհաննիսյանը, կրում էր 1860-1870-ականների մանրբուրժուական նարոդնիկության ակնհայտ ազդեցությունը:[75] Ըստ էության, ուրեմն, Հովհաննիսյանն իր գրքով լուծում էր հայաստանյան պատմագիտության համար բաց մնացած խնդիրը՝ տալով հայ քաղաքաբնակչության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի պատմության ուսումնասիրություն: Հովհաննիսյանի քննական այս մոտեցմամբ Դաշնակցության ծնունդը երևում էր մանրբուրժուական նարոդնիկության պատմական զարգացման հեռանկարում: Ուրեմն և կուսակցության ձևավորման ակունքները երևան էին գալիս իրենց քաղաքական, սոցիալ-հասարակական կոնկրետ պայմաններում: Այս կերպ, Հովհաննիսյանի՝ արևելահայ ազգային-քաղաքական կուսակցությունների սկզբնավորման տեսությունը պատմականորեն բացահայտում էր Դաշնակցություն կուսակցության մանրբուրժուական ծագումը:

Հայաստանյան հասարակական-քաղաքական մտքի զարգացման բարդ պատկերում էր ուրվագծվում ու ընթացք ստանում ազգային կուսակցությունների, այդ թվում Դաշնակցություն կուսակցության պատմությունը: Քաղաքական մտքի ժառանգորդական հակասալից կապերով ու փոխանցումներով հատկանշվող այդ պատմության մեջ Հովհաննիսյանը Դաշնակցություն կուսակցության պատմությունը գրքում հասցնում է մինչև 1905 թվականը. մի շրջափուլ, որը Հովհաննիսյանը վճռական է համարում ազգային-նարոդնիկական այդ կուսակցության համար.

> Մերձենալով հայ ազգային-նարոդնիկական կուսակցությունների զարգացման ընթացքին, անհրաժեշտ է հաշվի առնել, մանավանդ, այն խոշոր շրջադարձը, որ կատարեցին այդ կուսակցությունները կապիտալիզմի զարգացման *իմպերիալիստական* շրջանում, երբ հատկապես արևմտահայ ազատագրական շարժումը մինչև այդ ղեկավարող ամենաազդեցիկ կուսակցությունը՝ դաշնակցությունը, ավարտելով իր զարգացման (մանրբուրժուական) <դեմոկրատական կամ> նարոդնիկական էտապը 20-րդ դարում թևակոխեց իր *գաղափարական էվոլյուցիայի ռեակցիոն շրջանը* (ընդգծումը՝ Ա. Հ.):[76]

Այս կերպ Հովհաննիսյանը հստակ տարբերանշում էր Դաշնակցության զարգացման մանրբուրժուական կամ նարոդնիկական շրջանը, դրա՝ բուրժուական կուսակցության «վերասերման» շրջանից:[77] Հովհաննիսյանը, անդրադառնալով նարոդնիկության խնդրին,

---

խմբակները», *Բանբեր Հայաստանի արխիվների*, 1968, թիվ 2, էջ 127-146: Նշել է պետք, որ Հովհաննիսյանն ըստ երևույթին նկատի ունի 1880-ական թվականների սկզբներին հայ և վրաց ազգային-նարոդնիկական կազմակերպությունների առաջացման պատմաքաղաքական պայմաններն ու դրանց առնչակցությունները, քանի որ գրքում վրաց ազգային-նարոդնիկական կազմակերպություններին վերաբերող առանձին անդրադարձ որպես այդպիսին չկա:

[75] Նարոդնիկության և դրա պատմական հիմքերի քննարկման համար տե՛ս, օրինակ, Derek Offord, *Nineteenth-Century Russia: Opposition to Autocracy* (New York: Longman, 1999); E. Lampert, *Sons against Fathers: Studies in Russian Radicalism and Revolution* (Oxford: Clarendon, 1971); Susanna Rabow-Edling, *Slavophile Thought and the Politics of Cultural Nationalism* (Albany: State University of New York, 2006):

[76] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[4], վավ. 12 գ, թ. 11:

[77] Խոսելով Դաշնակցության բուրժուական բնույթի կամ դրա բուրժուական «վերասերման» մասին, Հովհաննիսյանը նշում էր, որ «20-րդ դարի սկզբներին, երկրամասում արմատավորվող իմպերիալիզմի և վերահաս պրոլետարական հեղափոխության պայմաններում, դաշնակցությունը սկսում է դիմորոշվել որպես *արևելահայ բուրժուական ռեակցիայի {ղեկավարող} ամենախոշոր գործոններից մեկը*» (ընդգծումը՝ Ա. Հ.): Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[4], վավ. 12 գ, թ. 15: Տարբերանշելով Դաշնակցության

նշում էր, թե Լենինը հայ կյանքի իրողությունները քննարկելիս 1907-1918 թվականների իր երկերում հնարավոր է համարել խոսել հայ «նարոդնիկների» և «կիսասոցիալիստների» մասին: Սրան Հովհաննիսյանը հավելում էր, թե «իր գրվածքներում Լենինը դիտում էր նարոդնիկությունը որպես գյուղացիական միջավայրում առաջացած մի գաղափարախոսություն, որը լայն շառավիղ ուներ, ընդգրկելով հեղափոխական-դեմոկրատիզմից մինչև լիբերալ-նարոդնիկությունը»:[78] Հայ քաղաքական մտքի զարգացման ընթացքը Հովհաննիսյանի համար անտարանջատելի էր հայ իրականության, դրան բնորոշ սոցիալ-տնտեսական պայմանների ու դրա հասարակաշերտերի զարգացման պատմությունից: Հայաստանյան մանրբուրժուական, գլխավորապես գյուղացիական իրականությունն էր հայ քաղաքական կուսակցությունների ու դրանց գործունեությունը վարող «մանրբուրժուական ինտելիգենցիայի» ծագման պայմանը:

Հովհաննիսյանի գրքում հայ կուսակցությունների ծագման պատմությունը հառնում է իբրև ներհակ կապերով ու հակասություններով ծավալվող ընթացք: Այդ իմաստով Հովհաննիսյանի մոտեցումը հակաստալինյան էր և նախաստալինյան, քանի որ կուսակցությունների ծագմանն ու զարգացմանը մոտենում էր պատմականորեն: Հովհաննիսյանի գիրքը կուսակցությունների պատմությանը տրված գնահատական չէր առաջադրում ի սկզբանե, այլ ծավալում էր նյութի պատմությունը՝ ծավալման մեջ երևան բերելով քաղաքական մտքի «ներքին» պատմությունը: Իսկ այդ «ներքին» պատմությունն այլ բան չէր, քան այն իրականության պատմությունը, որից ծնունդ էր առել հայ արդի քաղաքական միտքը: Հովհաննիսյանի համար, ուրեմն, ի տարբերություն ստալինիզմի, կար պատմություն, ու եթե կար պատմություն, կար իրականություն: Դաշնակցություն կուսակցության՝ ծագումով մանրբուրժուական հասարակախավերի կուսակցություն լինելու իրողությունը բացահայտում էր հայաստանյան իրականության մանրբուրժուականությունը: Այս կերպ Հովհաննիսյանի գիրքն իրապես շարունակությունն էր 1920-ականների ավանդույթի. ավանդույթ, որտեղ քաղաքականությունը հաշվի էր նստում իրականության հետ, իսկ այդ իրականությունը հասկանալու համար քաղաքականությունը ելնում էր «գիտական եզրակացություններից»: Հովհաննիսյանի եզրակացությունը, ինչպես և 1920-ականներին, մնում էր նույնը. Դաշնակցություն կուսակցությունը սոցիալական ծագումով մանրբուրժուական կուսակցություն է:

Հովհաննիսյանի համար առաջնային կարևորություն ուներ Արևելահայաստանում կազմավորված և արևմտահայության ազատագրական շարժման ղեկն իր ձեռքն առած 1880-1890-ական թվականների հայ ազգային-նարոդնիկական կազմակերպությունների ուսումնասիրությունը: Հենց հայաստանյան քաղաքական մտքի զարգացման այդ բարդ հանգույցի լուսաբանմամբ էր բացահայտվում Դաշնակցության մանրբուրժուական ծագումը: Հովհաննիսյանի գրքում հայաստանյան քաղաքական մտքի պատմությանը հատուկ այս փոխանցումների ու կապերի վերհանումն իբրև հետևանք անխուսափելիորեն պիտի հարուցեր այդ կապերը հետահայաց խզած ու ջնջած ստալինյան քաղաքականության ու պատմագիտության հաղթահարման խնդիր.

> Իմ համոզմունքով անհնարին է մոտենալ նման խնդիրների ուսումնասիրմանը գիտական հիմք ընդունելով արևմտահայ ազատագրական շարժումը հեգնող

1905 թ. հեղափոխությանը նախորդած «դեմոկրատական» շրջանն իմպերիալիզմի շրջանում նրա «ռեակցիոն» գաղափարաբանության շրջանից՝ Հովհաննիսյանը, ինչպես և 1920-ականներին, էապես հենվում էր Դաշնակցության մասին Լենինի, բայց հատկապես Ստեփան Շահումյանի գնահատականների վրա: Տե՛ս, օրինակ, Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[25], վավ. 148 ա, թթ. 5-6; թղթ. 244[16], վավ. 584, թ. 3, վավ. 503 բ, թ. 4, վավ. 500 ա, թ. 8-9:

[78] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[25], վավ. 148 ա, թ. 3:

> 1928թ. նոյեմբերյան պլենումի որոշումը: 80-90-ական թթ. արևմտահայ ազատագրական շարժման սոցիալական արմատները և գաղափարաբանական էվոլյուցիան հնարավոր չէ ուսումնասիրել և մարքսիստորեն լուսաբանել ղեկավար ունենալով պատմական և քաղաքական խորաթափանցությունից զուրկ այդ որոշումը:[79]

1928-ի որոշմամբ էր ամրագրվել, որ «նացիոնալիստական իդեոլոգիան իր մեջ մարմնացնող» կուսակցությունը՝ Դաշնակցությունը, «*հայ բուրժուազիայի կուսակցությունն է*» (ընդգծումը՝ բնագրի):[80] Հենց այս որակմամբ էր, որ ստալինյան հրահանգով Դաշնակցությունը կտրվեց իրեն ծնունդ տված հասարակախավերից ու հռչակվեց խորհրդային իշխանության ու աշխատավորության «առավելագույն վտանգավոր թշնամին»: Արդյունքում պարզապես ուռճացվեց նացիոնալիզմի ու Դաշնակցության վտանգը:[81] 1920-ականների երկրորդ կեսից սկսած փաստացիորեն Դաշնակցությանը տրվող գնահատականն այլևս չանցավ ստալինյան քաղաքական հռետորաբանության մակարդակը: Այդ հռետորաբանությանը հետևող ստալինյան պատմագիտությունն իր հերթին հավատարիմ մնաց ստալինյան քաղաքական գնահատականին՝ պատմագիտությունից դուրս թողնելով հայաստանյան կյանքի սոցիալ-տնտեսական պայմանների ու այդ պայմաններից ծնունդ առած քաղաքական մտքի պատմության ուսումնասիրությունը: 1960-ականներին Հովհաննիսյանի գնահատմամբ՝

> Հայաստանի Կոմկուսի գաղափարական ճակատի ղեկավարները.... շարունակում են չնկատել այն իրողությունը, որ նոյեմբերյան պլենումի ծախորդ այդ որոշումով *փակուղի* ստեղծվեց սովետական պատմագրության առաջ: Այդ պլենումի ներշնչմամբ է հենց, որ 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբնաշրջանի հայ ժողովրդի խճճված հարցերը սկսեցին շարադրել գիտականորեն խախուտ դիրքերից (ընդգծումը՝ Ա. Հ.):[82]

Հովհաննիսյանի գիրքը, իր իսկ խոսքով, պատահական մտահղացում չէր, այլ նախընթաց շրջանի իր պատմագիտական ուսումնասիրությունների գաղափարական շարունակությունը:[83] Ուրեմն, գիրքը Հովհաննիսյանի հայտն էր՝ վերականգնելու պատմագիտության նախաստալինյան ավանդույթն ու «գիտական

---

[79] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[25], վավ. 148 ա, թթ. 3-4:

[80] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 8, թ. 161: Թե ինչպես էր 1928-ի որոշումը գնահատում Դաշնակցության գործունեությունն ու Արևմտահայաստանում ազգային-ազատագրական շարժման մեջ կուսակցության ներգրավվածությունը՝ տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 8, թթ. 161-166:

[81] 1960-ականներին 1928-ի որոշման մասին խոսելիս Հովհաննիսյանը գրում էր, թե նոյեմբերյան պլենումի ժամանակ «առավել բանիմաց կոմունիստներից» Սարգիս Կասյանը և Ասքանազ Մռավյանը, ինչպես նաև երիտասարդ Աղասի Խանջյանը, ոչ միայն «գիտակցում էին {խիզախություն ունեցան շեշտելու}, որ «դաշնակցության էության խնդիրը, նրա ճշտումը լուրջ խնդիր է և գիտական քննության ենթակա», այլև պաշտպանում էին այն տեսակետը, որ այդ կուսակցության բուրժուականության մասին կարող է խոսք լինել միայն 1905թ. հետո»: Ըստ Հովհաննիսյանի՝ Ռուբեն Տեր-Մկրտչյանի թելադրած կարծիքն էր մեքենայաբար կրկնել 1928-ին Կոմկուսի քարտուղար Հայկազ Կոստանյանը, «որն իրեն բնորոշ պատրաստակամությամբ պլենումի մեծամասնությանը ներշնչեց այն հավատամքը, թե դաշնակցությունը ասպարեզ է իջել որպես շուկաներ որոնող հայ առևտրական բուրժուազիայի ղեկավար և այդ կուսակցությունն էր հենց, որ հայ ժողովրդին բաժանեց «թուրք ժողովրդի հեղափոխական կռվից»»: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 500 ա, թթ. 5-6:

[82] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 500 ա, թ. 6:

[83] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[13], վավ. 302, թ. 4: Նշել է պետք, որ *Ուրվագծերը* Հովհաննիսյանի միջնաքսորական շրջանի աշխատությունների թվին է պատկանում: 1944-ին Կիրովականից (այժմ՝ Վանաձոր) Հովհաննիսյանը նամակ է գրում Կենտկոմի քարտուղար Գրիգոր Հարությունյանին: Նամակի մեջ Հովհաննիսյանը հիշատակում է այն ձեռագիր աշխատությունների մասին, որոնք իր ձերբակալության ժամանակ առգրավվել են, բայց այդպես էլ չեն վերադարձվել իրեն: Դրանց թվում Հովհաննիսյանը նշում է «XIX և XX դարերում Հայաստանի հասարակական հոսանքների պատմության» մասին անտիպ աշխատությունը: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 507, թ. 2 հակ.:

եզրակացություններով» կրկին կամրջելու քաղաքականությունն ու իրականությունը: Ի՞նչ արձագանք, սակայն, պիտի գտներ Հովհաննիսյանի այս ձեռնարկը 1960-ականների իրականության պայմաններում. իրականություն, որտեղ ստալինիզմը քողարկված ձևով ծավալվում էր:[84]

Դաշնակցության մանրբուրժուականությունը՝ «քննադատության նշանակետում»

1967 թվականի դեկտեմբերի 12-ին կայացած Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի նիստի ժամանակ քննարկման է դրվում Հովհաննիսյանի *Ուրվագծերը* հրատարակության երաշխավորելու հարցը:[85] Նիստի որոշման մեջ Հովհաննիսյանի մենագրությունը գնահատվում է իբրև «սովետահայ պատմագրության խոշոր նվաճումներից մեկը», «մարքսիստական նոր խոսք հայ ժողովրդի պատմության կարևորագույն պրոբլեմներից մեկի մասին» (թ. 1): Նիստը մենագրության գլխավոր արժանիքն էր համարում այն, որ դրանում ցույց է տրված «հայ հեղափոխական դեմոկրատիայից մինչև սոցիալ-դեմոկրատիայի, բոլշևիկյան կազմակերպությունների առաջացումն ընկած ժամանակահատվածի արևելահայ քաղաքական մտքի էվոլյուցիան, հայ հեղափոխական նարոդնիկության և ազգային նարոդնիկության խաղացած դերը» (թ. 1): Որոշումը նշում էր, որ Հովհաննիսյանի գիրքը լրացնում էր այն վակուումը, որ գոյություն է ունեցել հայ ժողովրդի պատմության մեջ Միքայել Նալբանդյանից հետո մինչև սոցիալ-դեմոկրատիայի երևան գալը: Համաձայն որոշման՝ Հովհաննիսյանի գիրքը «գիտական հայտնագործություն» էր հայ ազատագրական շարժման երկու ճակատների վերաբերյալ, «ճշմարտապատում խոսք»՝ համառուսական պրոլետարիատի և Հոկտեմբերյան հեղափոխության՝ հայ ժողովրդի պատմության մեջ խաղացած դերի մասին (թ. 2): Ի վերջո, քննարկումը որոշում է.

> Ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանի «Ուրվագծեր 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ հասարակական հոսանքների և հայ ազգային-քաղաքական կուսակցությունների պատմության» աշխատությունը բարերար ազդեցություն կունենա սովետահայ պատմագրության զարգացման գործում, ուստի պետք է արագացնել նրա հրատարակությունը (թ. 2):[86]

Սակայն այս արձանագրությունից մոտ մեկ ու կես տարի անց՝ 1969-ի ամռանը Պատմության ինստիտուտի կուսակցական բյուրոյին ուղղված Հովհաննիսյանի դիմումից պարզ է դառնում, որ գիրքը դեռևս մնում էր անտիպ: Դիմումի մեջ Հովհաննիսյանը նշում էր, թե գրքի հրատարակության հարցը մնում էր «գրվանի տակ», թեպետ աշխատության մեծ մասն առանձին հոդվածներով լույս էր տեսել գիտական մամուլում, և դրանցից ոչ մեկի դրույթները չէին դարձել «քննադատության նշանակետ»:[87] Ուրեմն ինչո՞ւ էր

---

[84] Ինչպես դիպուկ նշում է Սթեֆան Փլագենբորգը «Ստալինը գնացել էր, բայց նրա ստվերը դեռ կար: Գրել հետստալինյան շրջանի մասին, նշանակում է նկարագրել այդ հատուկ ստվերը....»: Տե՛ս Plaggenborg, «Soviet History after 1953», ըստ՝ Bohn, Einax, Abeßer, *De-Stalinisation Reconsidered,* էջ 45:

[85] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[19], վավ. 54, թ. 1: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում: Մատենադարանում պահվող Հովհաննիսյանի ֆոնդում կան գրքի մեքենագիր մի քանի օրինակներ: Տե՛ս թղթ. 244[2], վավ. 1 ա, 1 բ; թղթ. 244[3], վավ. 3 ա, 3 բ; թղթ. 244[4], վավ. 7 ա, 7 բ:

[86] 1967-ի դեկտեմբերի 28-ին կայացած նիստում գիտական խորհուրդը երաշխավորում է գիրքը տպագրության: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[19], վավ. 53: Մեկ այլ փաստաթղթում Հովհաննիսյանը նշում է, որ գիրքը Պատմության ինստիտուտի գիտխորհրդի կողմից տպագրության է հանձնարարված եղել 1968-ի վերջերին: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[13], վավ. 307:

[87] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[13], վավ. 307, թ. 1: Գիտական հանդեսներում իբրև առանձին հոդվածներ լույս տեսած գրքի հատվածները տե՛ս «Արծրունու և Ռաֆֆու գաղափարական ներհակության ակունքը», *Բանբեր Երևանի համալսարանի*, 1968, թիվ 1, էջ 15-31; «Արևելահայերի մասնակցությունը Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումներին (1860-70-ական թթ.)», *Պատմա-բանասիրական հանդես,* էջ 15-3; «80-ական թվականների առաջին կեսի արևելահայ

ձգձգվում գրքի տպագրությունը: Հովհաննիսյանի գրքում, այնուամենայնիվ, կար առանցքային մի հատված, որ մամուլում լույս չէր տեսել: Այդ հատվածը գիրքն ամփոփող ու «Դաշնակցության և արևմտահայ ազգային-ազատագրական շարժման տագնապը 19-20-րդ դարերի եզրին» վերնագրով գլուխն էր: Հենց Դաշնակցությանը վերաբերող հատվածի ու դրա դեմ հարուցված քննադատության պառճառով էր առկախվել գրքի տպագրությունը: Դաշնակցության հարցը գրքի հրատարակության խնդիրը գիտական մակարդակից փոխադրել էր քաղաքական մակարդակ՝ Պատմության ինստիտուտից զատ աշխատության քննարկմանը ներգրավելով քաղաքական բարձրագույն ղեկավարությանը:

1969-ին արդեն Կենտկոմի քարտուղար Ռոբերտ Խաչատրյանը Հովհաննիսյանի, Գիտությունների ակադեմիայի ղեկավարներից [Ռուսեթ] Հովհաննիսյանի ու Ցատուր Աղայանի և Պատմության ինստիտուտի տնօրեն Գալուստ Գալոյանի մասնակցությամբ խորհրդակցություն է հրավիրում գրքի հրատարակության հարցով:[88] Կայացած խորհրդակցությունը վավերագրած Հովհաննիսյանի խոսքով խորհրդակցության ակներև նպատակն էր «ղեկավար ընկերների միջոցով ձևակերպել գրք[ի] տպագրության մերժումը»:[89]

> Ժողովի հենց սկզբից ես հայտարարեցի, որ շուրջ կես տարի գիրքս կենտկոմում պահելուց հետո, այսօր ինձ անհայտ են մնում *գիտական այն հիմքերը,* որոնց [պատճառով] մինչ այժմ անորոշ է մնում գրքիս տպագրության հարցը. առ այսօր չկա վավերագիր, որ ձևակերպված լինեին գրքիս մասին կենտկոմի գիտական դիտողությունները, բացի այն իրողությունը, որ գրքիս կոնցեպցիան չի համընկնում Լենինի և հին բոլշևիկների գնահատականներին, որոնց բազմաթիվ ասույթների ոգով շարադրված է պատմագիտական իմ առաջադրած տեսությունը (ընդգծումը՝ Ա. Հ.):[90]

Մինչդեռ Հովհաննիսյանը Կենտկոմից պահանջում էր «գիտական դիտողություններ», ակնհայտ էր, որ գրքի տպագրության հարցն արդեն իսկ քաղաքականացվել էր: «Ղեկավար ընկերները» գրքի հղացքը քննադատում էին հիմնավորմամբ, թե այն չէր համընկնում լենինյան ու մեծամասնական գնահատականներին: Այնինչ իր հերթին Հովհաննիսյանը պնդում էր, որ հայ հասարակական-քաղաքական մտքի պատմությունը քննարկելիս ինքը «ղեկավարվում [է] պատմականության լենինյան տեսանկյունով»:[91] Հարցն այն էր, ուրեմն, թե որ գնահատականն էր 1960-ականներին պաշտոնապես համարվում լենինյան, որին ըստ այդմ պետք է հետևեր նաև Հովհաննիսյանը:[92] 1969-ին

ազգային նարոդնիկական խմբակները», *Բանբեր Հայաստանի արխիվների,* էջ 127-146; «Հնչակյանների կազմավորման գաղափարական արմատները», *Պատմա-բանասիրական հանդես*, 1968, թիվ 2, էջ 19-39; «Արևելահայ լիբերալիզմի և նարոդնիկության ներհակությունները ինսուլական թվականների սկզբներին», *Բանբեր Հայաստանի արխիվների*, 1969, թիվ 2, էջ 63-82: 1971-ին Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության 24-րդ համագումարի նախագահությանն ուղղված դիմումում Հովհաննիսյանը նշում էր, որ այդ պահի դրությամբ գրքի վերաբերյալ կար 22 դրական կարծիք: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 503 բ, թ. 2: Գրքի վերաբերյալ կարծիքներից տե՛ս, օրինակ, Վալտեր Դիլոյանինը (թղթ. 244[12], վավ. 237 գ), Խիկար Բարսեղյանինը (թղթ. 244[19], վավ. 51 բ), Դ. Մուրադյանինը (թղթ. 244[19], վավ. 52 ա):

[88] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 491 գ:

[89] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 491 գ, թ. 1:

[90] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 491 գ, թ. 1 և հակ.:

[91] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 500 ա, թ. 9:

[92] Հատուկ ուշադրության է արժանի փաստը, որ ստալինյան պատմագիտական ժառանգությունը հաղթահարելու իր օրակարգով Հովհաննիսյանի աշխատությունը միակը չէր, որ մնաց անտիպ 1960-1970-ականներին: Նման ճակատագրի են արժանացել նաև, օրինակ, Վիկտոր Դանիլովի *Գյուղատնտեսության կոլեկտիվացումը ԽՍՀՄ-ում, 1927-1932 (Коллективизация сельского хозяйства в СССР, 1927-1932)* և Լյուդմիլա Դանիլովայի *Ֆեոդալիզմի տեսաբանական խնդիրները խորհրդային պատմագրության մեջ (Теоретические проблемы феодализма в советской историографии)* աշխատությունները: Ռոջեր Մարկվիքի

կայացած նույն խորհրդակցությանն անդրադառնալով՝ Հովհաննիսյանը գրում է. «Ինչպես պարզ էր սկզբից և եթ, հրավիրված ընկերները, ելնելով 1928թ. կենտկոմի իմ կողմից հերքված հակալենինյան բանաձև[ից], արտահայտվեցին գրքիս տպագրության դեմ»:[93]

Դաշնակցության մանրբուրժուական ծագման տեսությունը դատապարտած ու Դաշնակցությունը բուրժուական կուսակցություն հռչակած 1928-ի ստալինյան որոշումը 1960-ականներին վկայակոչվում էր իբրև Հովհաննիսյանի դեմ ուղղված մեղադրանք: 1960-ականներն այս կերպ նշագծվում էին հայաստանյան քաղաքական մտքի պատմությունը կրկին գրող Հովհաննիսյանի ու այդ փորձը կանխող ստալինիզմի նոր հակամարտությամբ: Թեև 1920-ականների ստալինյան քաղաքական ուժն այլևս չկար, բայց կար իրականությունը պատմությունից դուրս դնելու ստալինյան մոտեցումը, որն իբրև իր հակոտնյա ճանաչում էր «հանուն ներկայի ու գալիքի» անցյալը պատմականացնող Հովհաննիսյանի պատմագիտությունը:

1960-ականների վերջին ստալինիզմի ու ստալինյան պատմագիտության դեմ Հովհաննիսյանի կռիվը և՛ նման, և՛ տարբեր էր 1920-ականներից: 1960-ականներին ստալինիզմն այլևս ճանաչելի չէր իբրև գաղափարական հակառակորդի հետ բացեիբաց հաշվեհարդար տեսնող քաղաքական համակարգ:[94] Ստալինիզմի ձևն իր իսկ բնույթի արտահայտումն էր դարձել. ներկան ժամանակից զրկող մի մոտեցում, որ կայանում էր պատմության քաղաքական կեղծմամբ: Այս մոտեցմանն էր բախվում Հովհաննիսյանի պատմագիտությունը. պատմագիտություն, որ պատմականացնում էր ներկան, ըմբռնում ներկան իբրև ժամանակի մեջ անընդհատ կայացող բարդ ընթացք: 1960-ականների վերջին «գիտական բացճակատ քննադատության» կոչը Հովհաննիսյանն ուղղում էր գիտական ու քաղաքական այն ղեկավարությանը, որն իր դեմ պայքարում էր քողարկված՝ «գողունի» գործող ստալինիզմի նոր մեթոդաբանությամբ:[95] 1970-ի սկզբին Հովհաննիսյանը Գիտությունների ակադեմիայի խմբագրական-հրատարակչական խորհրդին գրում էր.

> ....Աշխատության մասին խորհրդգիտ (գիտական խորհրդի՝ Ի. Շ.) ցուցաբերած վերաբերմունքը յուրովի համերաշխում է որոշ գիտաշխատողների կողմից գողունի տարածվող այն կարծիքին, թե իբր աշխատությունս չի հրապարակվում որչափ նրա մեջ հեղինակի կողմից փորձ է կատարված ռեաբիլիտացնելու դաշնակցության անցյալ գործունեությունը:[96]

Հովհաննիսյանն արձագանքում էր, թե մեղադրանքը չէր համապատասխանում աշխատության բովանդակությանն ու «ստոր նպատակներով մոգոնված զրպարտանք»

արժեքավոր անդրադարձն (Markwick, *Rewriting History in Soviet Russia)* անտիպ մնացած այս աշխատություններին նոր հեռանկար է բացում Հովհաննիսյանի գրքի ուսումնասիրման ճանապարհին. ճանապարհ, որի ուղղությամբ գնալն այսօր ենթադրում է մի նոր հետազոտություն:

[93] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 491 գ, թ. 2 և հակ.:

[94] 1960-ականներին՝ վաղ բրեժնևյան շրջանում վերհառնող անձի պաշտամունքի մասին տե՛ս, օրինակ, Jones, *Myth, Memory, Trauma,* էջ 212-257:

[95] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[13], վավ. 302, թ. 4: Բրեժնևյան շրջանի ստալինիզմի մեթոդաբանությունը դիպուկ նկարագրում է ինքը՝ Հովհաննիսյանը, երբ բնորոշում է Կենտկոմի քարտուղար Ռոբերտ Խաչատրյանի աշխատելաեղանակը. «Իդեոլոգիական խնդիրների լուծման ժամանակ ընկ. Ռ. Գ. Խաչատրյանին ուղեկցում են անհստակությունն ու անսկզբունքայնությունը: Մշտական ցանկությունը շրջանցել ու քողարկել կյանքի առաջ բերած կարևոր գիտական-իդեոլոգիական հարցերը, դարձել է նրա գործունեության հիմնական հատկանիշն ու բնորոշ մեթոդը:....Նա հակասական խոստումներից այն կողմ չի անցնում, և խնդրանքը դառնում է ձայն բարբառոյ յանապատի» (բնագիրը՝ ռուսերեն): Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 503 բ, թթ. 6-7:

[96] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 502 ա, թ. 1:

էր:[97] Ըստ Հովհաննիսյանի, իրողությունն այն էր, սակայն, որ իր հետազոտությունը խորհրդահայ պատմագիտության մեջ «հանդիսանում է մինչև 1905թ. դաշնակցության ծրագրի ու գործունեության մարքսիստական-լենինյան դիրքերից հետևողականորեն քննադատող ու մերկացնող *միակ* ուսումնասիրությունը» (ընդգծումը՝ Ա. Հ.):[98] Ակնհայտ չէր արդյո՞ք, որ գիրքը չհրատարակելու ու Հովհաննիսյանին մեղադրելու *միակ* պատճառն էլ հենց իր իսկ նշած փաստն էր:[99]

Հայաստանյան քաղաքաքական մտքի ավանդույթն աղճատած ստալինիզմը վերացրել էր այդ ավանդույթին հատուկ բարդ ու ներհակ կապերը՝ դրանք վերածելով պարզ հակադրությունների: Դաշնակցության Հովհաննիսյանի քննադատությունն էր, որ երևան էր բերում հայ մարքսիստական ու ազգային-նարոդնիկական մտքի ներհակ ծավալումներով զարգացած հայաստանյան քաղաքական մտքի պատմությունը: Իր գրքում Հովհաննիսյանը հստակորեն ցույց էր տալիս հենց այդ կապերը.

> Ժխտել կամ շրջանցել 60-ական թթ. հայ կյանքում առաջացած հեղափոխական դեմոկրատիայի առկայությունը կամ 70-ական թթ. հայ հեղափոխական նարոդնիկների գոյությունը, կնշանակեր անգիտանալ 80-90-ական թթ. նրանցից առաջացած արևելահայ ազգային-քաղաքական կուսակցությունների ծննդաբանությունը և որդեգրել այն տեսակետը, թե *նախքան մարքսիզմի ձևավորումը* հայ հասարակական առաջավոր միտքը որևէ առնչություն չի ունեցել ռուսական հեղափոխության հետ: Այն հանգամանքը, որ 80-ական թվականների համառուսաստանյան ռեակցիայի պայմաններում հայ իրականության մեջ երևացին կազմակերպություններ, որոնք *կտրականապես երես էին դարձնում ռուսական հեղափոխությունից,* մեզ իրավունք չի տալիս *անգիտանալու պատմական այն հաջորդականությունը, որ գոյություն ունի հայ առաջավոր հասարակական մտքի մարքսիստական և նախամարքսիստական էտապների միջև* (ընդգծումը՝ Ա. Հ.):[100]

1920-ականների երկրորդ կեսին ստալինիզմի հաստատմամբ էր, որ մեծամասնականների «մաքուր» ավանդույթ ստեղծելու քաղաքական հրամայականով խզվեցին

---

[97] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 502 ա, թ. 1: Հովհաննիսյանին Դաշնակցության ռեաբիլիտացիայի փորձի մեջ մեղադրելու մասին տե՛ս, օրինակ, Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 501 բ, թ. 1; վավ. 491 բ, թ. 1:

[98] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 502 ա, թ. 1: Մեկ այլ տեղ Հովհաննիսյանը գրում է. «[*Ուրվագծերը*] միակ հետազոտությունն է, ուր տրված է ոչ միայն 1890-1905թթ. մարքսիստական-լենինյան դիրքերից գրված դաշնակցության հիմնավորված պատմությունը, այլև նրա թեորիայի ու պրակտիկայի գիտական քննադատությունը: Նյութերին իրազեկ որևէ մեկը շատ կդժվարանա հիշատակել համապատասխան մակարդակով գրված այլ աշխատություն, որը հնարավոր լիներ հակադրել ուսումնասիրությանս»: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 501 բ, թ. 1-2:

[99] 1971-ին Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության 24-րդ համագումարի նախագահությանն ուղղված դիմումում Հովհաննիսյանը նշում էր, թե «ամեն փորձ վերականգնելու լենինյան տեսակետը գնահատվում է... իբրև փորձ ռեաբիլիտացնելու Դաշնակցություն կուսակցությունը» (բնագիրը՝ ռուսերեն): Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 503 բ, թ. 5:

[100] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[3], վավ. 6 ա, թ. 7: Հովհաննիսյանը 19-րդ դարի 50-60-ական թթ. հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության հարցերին անդրադարձել էր դեռ *Նալբանդյանը և նրա ժամանակը* երկհատորյակում: «Պատմական հաջորդականությամբ» *Ուրվագծերում* Հովհաննիսյանը հայկական կուսակցությունների «ծագումնաբանությունը» պարզելիս հանգուցային էր համարում այն շրջափոխությունը, որ կատարել էր 1850-1860-ականներին կազմավորված արևելահայ դեմոկրատական միտքը՝ անցնելով Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական հայացքներից դեպի 1880-ական թթ. ազգային նարոդնիկների գաղափարաբանությունը: Հովհաննիսյանն իր «80-ական թվականների առաջին կեսի արևելահայ ազգային նարոդնիկական խմբակները» հոդվածում (էջ 131 և հետ.) քննադատեց Վարդան Պարսամյանի այն դրույթը, թե հայ իրականության մեջ հայ նարոդնիկները որևէ դեր չեն ունեցել (Վարդան Պարսամյան, «Հայ հասարակական հիմնական ուղղությունները XIX դարի երկրորդ կեսին», *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1966, թիվ 2, էջ 35-52):

Դաշնակցության ու մեծամասնականների միջև պատմականորեն հաստատված կապերը: Ավելին, մեծամասնականների քաղաքական պատմությունից հետահայաց ջնջվեց նաև ազգային կոմունիստների ավանդույթը: Իրենց հերթին ստալինիզմից «մաքուր» ավանդույթ ու «մաքուր» պատմություն ժառանգած 1960-ականների ո՛չ քաղաքականությունը, ո՛չ պատմագիտությունը թույլ չէին տալիս Դաշնակցության պատմության, ուրեմն և մեծամասնականների պատմության վերանայում:[101] Գրքում առաջ քաշված իր տեսությունը պաշտպանելով՝ Հովհաննիսյանը նշում էր, թե առանց այդ վերանայման ինչի էր նմանվում հայ մարքսիստական մտքի պատմությունը.

> Քմահաճորեն կրճատել որևէ մեկի կուսակցական ստաժը՝ կնշանակեր վերանայել նրա հեղափոխական կենսագրությունը: Իրողություն է, սակայն, որ պատմաբաններից շատերն իսկ հաճախ շրջանցում են ռուսական հեղափոխության մեջ հայ ժողովրդի ունեցած մասնակցությունը, առանց ունենալու այն գիտակցությունը, որ դրանով մեր ժողովրդին զրկում են քաղաքական այն պատենտից, որով ընդգծվում է նրա դրական դերը ժողովուրդների պատմության առաջընթացի մեջ:[102]

Հովհաննիսյանի քննադատությունն ուղղված էր այն պատմաբանների դեմ, որոնք պաշտպանում էին տեսակետը, թե միայն 19-րդ դարի վերջերից են անդրանիկ հայ մարքսիստներն ակտիվ մասնակցություն ունեցել Անդրկովկասի բանվորական շարժման մեջ: Նման մոտեցման վերջնանպատակը նույնն էր՝ կտրել հայ քաղաքական մտքի զարգացմանը հատուկ ներհակ կապերը.

> Արձանագրել միայն հանրահայտ այդ փաստը, նշանակում է էապես աղճատել 19-րդ դարի հայ ժողովրդի հասարակական-քաղաքական պատմությունը, անգիտանալ, որ Անդրկովկասի բանվորական շարժումից առաջ իսկ հայ ժողովրդի առաջավորները մասնակցում էին Ռուսաստանի հեղափոխական շարժումներին (թ. 1):

Հովհաննիսյանի իսկ խոսքով Պատմության ինստիտուտի գիտնականներից ոչ մեկը համոզիչ փաստարկով ակնբախ չէր դարձրել իր կոնցեպցիայի թերությունը: Այնինչ ինքը հետևողականորեն պնդում էր, որ գրքում արծարծած իր տեսակետը համընկնում էր Լենինի և Շահումյանի «նարոդնիկության և դաշնակցության <նարոդնիկական ծագումնաբանության>» մասին առաջ քաշված գնահատականներին (թ. 6).

> Ինձ քննադատողները բերել են միայն արգումենտներ, որոնց սխալը ես ցույց եմ տվել տակավին 1927 թվականին և հետագայում հրապարակած իմ ուսումնասիրությունների մեջ: Լավագույն դեպքում նրանք կարող են մատնանշել

---

[101] Ուշագրավ է, որ ինչպես Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության 24-րդ համագումարի նախագահությանն ուղղված դիմումի մեջ նշում է Հովհաննիսյանը, ի տարբերություն հայաստանյան գիտական իշխող մտայնության, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հրատարակած *ԽՍՀՄ պատմության* տասներկուհատորյակի, *ԽՍՀՄ պատմություն* երկհատոր ուսումնական ձեռնարկի, ինչպես նաև խորհրդային մի շարք պատմաբանների (Պյասկովսկիի, Բուրջալովի, Գրոշևի, Բուրմիստրովայի և այլոց) աշխատություններում Դաշնակցությունը գնահատվում էր իբրև «մանրբուրժուական նացիոնալիստական» կուսակցություն: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 503 բ, թ. 5:

[102] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[14], վավ. 334 ա, թ. 1: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում: Հովհաննիսյանի խոսքով, ի տարբերություն Վրաստանի, «ուր տեղական նարոդնիկական շարժման պատմությունը վաղուց արդեն դարձել է պատմաբանների ուշադիր հարցասիրության առարկա», Հայաստանում «բոլոր գույնի ու տեսակի հայ նարոդնիկների պատմության» վրայից չէր հանվել «գիտական նախապաշարումների *տաքուն*»: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 500 ա, թթ. 6-7:

> միայն այն հանգամանքը, որ իմ հայացքները չեն համընկնում 1928 թվականին կենտկոմի նոյեմբերյան պլենումի դաշնակցության մասին ընդունած այն բանաձևին, որի հեղինակները ամենայն խնամքով շրջանցում են Լենինի և Շահումյանի ասույթները (թ. 6):

Հովհաննիսյանի գիրքը կամրջում էր 1960-ականները նախաստալինյան իրականության հետ: Այդ կամուրջը հայ քաղաքական մտքի ավանդույթն էր, որ Հովհաննիսյանը վերականգնում էր ստալինիզմով խզված իր իսկ պատմագիտության վերականգնմամբ: Հովհաննիսյանը նույն դիրքորոշման պաշտպանն էր, ինչ 1920-ականներին: Սակայն ինչպես 1920-ականներին, 1960-ականներին ևս Հովհաննիսյանի տեսությունը ենթարկվում էր ոչ թե գիտական քննադատության, այլ քաղաքական դատապարտման: 1960-ականներին բրեժնևյան քաղաքականությունը Հովհաննիսյանի դեմ նոր քննադատություն առաջադրելու ներուժ չուներ: Այն ինքնին դարձել էր ստալինիզմի հետևանքներն ապրեցնող քաղաքականություն:[103]

Հովհաննիսյանի տեսությունը՝ «քաղաքական հերձված»

Հովհաննիսյանը պահանջում էր գիտականորեն տարբերանշել հայ քաղաքական մտքի ավանդույթին բնորոշ «կապերն ու փոխանցումները», առերեսել պատմական այն իրողությունը, որ արևելահայերի հասարակական-քաղաքական միտքն անցել էր 19-րդ դարի համադեմոկրատական հեղափոխության շրջանով և հասել ռուսական հեղափոխության պրոլետարական կամ սոցիալիստական ծրագրին:[104] Սրան հակառակ, սակայն, Հովհաննիսյանն ինքը ստիպված էր առերեսել գիտական իր թեզի դեմ արդեն բացեիբաց հնչող քաղաքական մեղադրանքները: Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի տնօրեն Գալուստ Գալոյանը Հովհաննիսյանի գրքի հերթական քննարկման ժամանակ վերջինիս ուղիղ հարց է տալիս՝ «ում հետ [է] քայլում [նա], կոմունիստական կուսակցության, թե՞ դաշնակցության»:[105] Պատմության ինստիտուտի տնօրենի նպատակը Հովհաննիսյանին պարզ էր.

> Բարդ երևույթների պատմագիտական լուրջ պարզաբանության փոխարեն Գ. Գալոյանը իր սովորության համաձայն սոսկ փորձ է արել ահաբեկելու ինձ: Այնուամենայնիվ ինձ ուղղված հարցումից ես չահաբեկվեցի և մինչ այսօր իսկ շարունակում եմ աշխատել ինձ զբաղեցրած պատմագիտական խնդիրների լուսաբանման վրա:[106]

Գալոյանի հարցը բացահայտում էր Հովհաննիսյանի պատմագիտական խնդիրների լուսաբանման քաղաքական հետևանքները: Պատմագիտական տեսության քննարկմամբ քաղաքական հարումների հարց բարձրացնելը ստալինյան մեթոդաբանություն էր: 1920-ականների վերջին Դաշնակցության մանրբուրժական ծագման տեսությունն էր, որ ի վերջո դարձավ Հովհաննիսյանին ազգայնականության մեջ մեղադրելու ու

---

[103] Ուշագրավ է Սթիվեն Բիթների դիտարկումը, որ եթե 1950-1960-ականներին Խորհրդային Միությունը փնտրում էր այն, ինչ կորցրել էր ստալինյան շրջանում, ապա Բրեժնևի կառավարման տարիներին Խորհրդային Միությունը հրաժարվեց իր նախաստալինյան անցյալը վերականգնելու ջանքերից: Տե՛ս Stephen V. Bittner, «What's in a Name? De-Stalinisation and the End of the Soviet Union», ըստ՝ Bohn, Einax, Abeßer, *De-Stalinisation Reconsidered*, էջ 41: Իրենց հերթին, օրինակ, Ռայանն ու Գրանթը, խոսելով 1960-1970-ական թվականներին ապաստալինացման քաղաքականությունների նահանջի մասին, նշում են, որ «ի վերջո, պատերազմում հաղթանակը, հայրենասիրությունը և գերտերության կարգավիճակը վկայակոչում էին ուշ ստալինիզմը»: Տե՛ս Ryan, Grant, «Introduction», ըստ՝ Ryan, Grant, *Revisioning Stalin and Stalinism,* էջ 6:
[104] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244^{16}, վավ. 491 բ, թ. 2:
[105] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244^{16}, վավ. 491 բ, թ. 2:
[106] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244^{16}, վավ. 491 բ, թ. 2:

դատապարտելու հիմքը: Հովհաննիսյանի համար 1960-ականներին իր դեմ ուղղված մեղադրանքների՝ դեպի 1920-ականներ ձգվող հետագիծն ակնհայտ էր.

> Եթե Կենտկոմում կան կոմունիստներ, որոնք ազնվորեն մտածում են, որ 60 տարի դաշնակցության դեմ գաղափարական անհաշտ պայքար մղելուց հետո, ներկայիս հանգել եմ իրոք այն համոզման, որ դաշնակցությունը արժանի է ռեաբիլիտացման, այդպիսիների վրա բարոյական պարտք է ընկնում հարց դնել ինձ կուսակցությունից վտարելու մասին:[107]

Իր քննադատների վրա իրեն Կոմունիստական կուսակցության շարքերից հեռացնելու պարտք դնելով՝ Հովհաննիսյանը վերջիններին մեղադրում էր հենց ստալինիզմի մեջ: Ստալինիզմն էր, որ նույն մեղադրանքով Հովհաննիսյանին մեկ անգամ արդեն վտարել էր կուսակցության շարքերից, զրկել գիտական աշխատանքից, ի վերջո աքսորել: 1960-ականներին Հովհաննիսյանին չէին աքսորելու, բայց նրա գիրքը դատապարտվել էր տարիներ տևող անարդյունք քննարկումների. դրա տպագրության հարցը ձգձգվում ու լուծում չէր գտնում, Հովհաննիսյանը ենթարկվում էր վարկաբեկման ու զրպարտանքի:

1970-ի աշնանը կայացած Գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի նիստերի քննարկումները վերջնականապես ամրագրում էին Հովհաննիսյանի գրքին տրվող քաղաքական գնահատականը:[108] Նիստի մասնակիցներից Սուրեն Երեմյանը նշում էր, թե «Ա. Գ. Հովհաննիսյանը հասարակական մտքի պատմության խոշոր մասնագետ է», բայց և հավելում. «Պետք է նկատի ունենալ, գրքի բովանդակությունը համապատասխանում է կուսակցության տեսակետին թե ոչ: Եթե լուրջ քաղաքական սխալներ կան, հրատարակել չի կարելի, իսկ եթե առանձնապես բան չկա, հնարավոր է հրատարակել»:[109]

Որքան էլ չոր, բայց Երեմյանի կարծիքը մի իմաստով հստակեցնում էր Հովհաննիսյանի գրքի տպագրության շուրջ տարիներ ձգվող քաշքշուկի բուն պատճառը: Հովհաննիսյանի գրքի բովանդակությունը պետք է համապատասխաներ կուսակցության տեսակետին: Ու եթե չէր համապատասխանում, այն չպետք է հրատարակվեր: Ուրեմն, «առանձնապես բան» կա՞ր, թե՞ չկար Հովհաննիսյանի գրքում: Այդ հարցին պատասխան էր տալիս Ծատուր Աղայանը. «1927 թ. Ա. Գ. Հովհաննիսյանը մեղադրվել է ՀԿՊ 6-րդ համագումարում դաշնակցության վերաբերյալ սխալ գնահատականի համար: Այս գրքում հեղինակը ուզում է վերականգնել այդ տեսակետները»:[110] Նման փաստարկը Հովհաննիսյանի գրքի տպագրության հարցը տանում էր դեպի փակուղի: Այո՛, Դաշնակցությանը տրված ստալինյան գնահատականը չէր փոխվել: Այո՛, Հովհաննիսյանը գրքում վերականգնում էր Դաշնակցության մանրբուրժուական ծագման տեսությունն ու դրանով հաղթահարում իրականությունն ու պատմությունը կեղծած ստալինյան քաղաքական որոշումը: Խնդիրն այն էր, որ այդ տեսությունը 1960-ականներին դեռ շարունակում էր որակվել իբրև «սխալ»: Քանի դեռ Դաշնակցության ծագման մանրբուրժուական գնահատականը համարվում էր

---

[107] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 501 բ, թ. 2:

[108] Նիստերը գումարվել են սեպտեմբերի 17-ին և հոկտեմբերի 1-ին: Նիստերի արձանագրությունները տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[19], վավ. 86, թղթ. 244[19], վավ. 87: Հարկ է նշել, որ նշված նիստերին Հովհաննիսյանը ներկա չի եղել:

[109] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[19], վավ. 86, թ. 2: Գրքի հրատարակման շուրջ սկսված պատմագիտական ու քաղաքական քաշքշուկի մի դրվագին է անդրադառնում Նորայր Սարուխանյանն իր՝ *Մտորումներ և հուշեր ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի մասին* (Երևան: Գիտություն, 2012) գրքույկում (էջ 73-76):

[110] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[19], վավ. 86, թ. 3: Որքան մեզ հայտնի է, Հայաստանի կոմունիստական կուսակցության 6-րդ համագումարը կայացել է ոչ թե 1927-ին, այլ 1929-ին: 1927-ին գումարվել է կուսակցության 5-րդ համագումարը:

սխալ, անհնար էր դառնում ուղղել ստալինիզմի՛ գործած պատմական սխալը: Քանի դեռ Դաշնակցության մանրբուրժուական գնահատականը համարվում էր սխալ, հայաստանյան քաղաքականությունը հաշվի չէր նստելու այն իրականության հետ, որտեղ այդ քաղաքականությունը կայանում էր: Շարունակել կոծկել ստալինյան պատմական սխալը նշանակում էր զրկել հայաստանյան իրականությունն իր պատմական զարգացման կոնկրետությունից, այն վերածել իրականություն չճանաչող քաղաքականության կամայական գործադրման ասպարեզի:

Հովհաննիսյանի պատմագիտությունն այդ իմաստով գործ ուներ *իրական* պատմության հետ: Այն քաղաքականության համար պատմականորեն բացահայտում էր հայաստանյան իրականությունը: 1928-ի ստալինյան որոշման «սխալը», ուրեմն, պատմագիտությունը պետք է վերանայեր: Հովհաննիսյանը կուսակցական փաստաթղթերը, կուսակցական մարմինների ընդունած որոշումները «կարևոր և առաջնակարգ պատմական աղբյուրներ» էր համարում պատմաբանների համար: Միաժամանակ, սակայն, դրանց գնահատման հարցում Հովհաննիսյանը մեծ վերապահում ուներ.

> ....Ինչպես ամեն մի սկզբնաղբյուր՝ դրանք ևս ենթակա են պատմաբանի բազմակողմանի վերագնահատման և պիտի արժեքավորվեն քննական հրափորձության միջոցով: Այլ կերպ այդ դոկումենտները կստանային գերբնական հայտնությունների կամ {եկեղեցու հայրերի կամ եկեղեցաժողովների սահմանած} անդրդվելի դոգմաների զորություն ու դրանց դեմ լինելիք ամեն մի առարկություն հարկ կլիներ ազդարարել աղվեսադրոշմով խարանելիք քաղաքական հերձված:[111]

Հովհաննիսյանի տեսությունը 1960-1970-ականներին դարձել էր «քաղաքական հերձված»: 1970-ին Հովհաննիսյանի գրքի քննարկման մասնակիցներից Մորուս Հասրաթյանը հայտարարում էր, թե ինքը ճանաչում է Հովհաննիսյանին որպես «դաշնակցության նո. 1 թշնամի»: Խնդիրն այլ էր.

> Նա (Հովհաննիսյանը՝ Ի. Շ.) չէր կարող գրել դաշնակցությանը օգուտ բերելու համար: Ուրիշ բան է, որ ամեն ճշմարտություն չի, որ հնարավոր է հրատարակել: Նման դեպքում կարելի է ասել՝ գործը շատ լավ է, շատ հետաքրքիր է, բայց այժմ հրատարակել չի կարելի:[112]

Պատմական ճշմարտությունն առերեսել անկարող պատմագիտությունն ինքը դարձել էր նույն այդ ճշմարտությունը քողարկած ու մոռացման տված քաղաքականության վահանը: Հովհաննիսյանի գրքում ճշմարտությունը պատմության կողմն էր, այլ ոչ թե հետահայաց այդ պատմությունը ճիշտ կամ սխալ գնահատած քաղաքական որոշման: Ինչի՞ էր հանգում 1928-ի ստալինյան որոշման հետևողական այս պաշտպանությունը 1960-1970-ականներին: Ինչո՞ւ չէր հաղթահարվում ապապատմական քաղաքական մտքի պատմություն ունենալու հայաստանյան ստալինյան ավանդույթը:

Երբ 1970-ին գումարված նիստի ընթացքում Գևորգ Ջահուկյանը հարց է տալիս, թե ինչպես է Հովհաննիսյանի գրքում գնահատված Դաշնակցություն կուսակցությունը, Ծատուր Աղայանն արձագանքում է.

> Որպես մանր բուրժուական: Սակայն կուսակցության մասսայականությունը նշան չէ նրա ժողովրդականության: Հիտլերյան կուսակցությունը մեծ մասամբ

[111] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[7], վավ. 35 ա, թ. 11:
[112] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[19], վավ. 86, թ. 3:

> աշխատավորներից էր, բայց նա ամենառեակցիոնն էր: Կուսակցությունը գնահատվում է նրա գործունեության, ոչ թե ծագման համար: Գուցե Մ. Ս. Հասրաթյանը կամ Ա. Գ. Հովհաննիսյանը ուրիշ կարծիքի են, բայց հիմա ժամանակը չէ դա քննարկել:[113]

Նախ, Աղայանը մեխանիկաբար հակադրում էր կուսակցության ծագումն ու դրա գործունեությունը: Այնինչ Հովհաննիսյանի համար Դաշնակցության դասակարգային ծագումը և գործունեությունը դիալեկտիկորեն կապված էին ու փոփոխական: Բայց էականն այն է, որ Դաշնակցության հարցը քննելիս Աղայանը դեմ էր ելնում դասակարգային գնահատականին առհասարակ: Վերջինս մանրբուրժուականության գնահատականին չէր հակադրում Դաշնակցությանը 1920-ականների վերջին տրված բուրժուական կուսակցություն լինելու գնահատականը: Դասակարգայնության հարցի փոխարեն Աղայանն առաջ էր քաշում մասսայականության ու ժողովրդականության գաղափարները: Իսկ հանել դասակարգայնության հարցը, նշանակում էր կտրել Դաշնակցության կապը սոցիալական իրականության հետ, հաշվի չառնել այն սոցիալ-տնտեսական պայմանները, որոնք պայմանավորել էին կուսակցության ծնունդն ու դրա հետագա զարգացումը:[114] 1960-1970-ականներին վերհառնած ստալինիզմն ապահովում էր քաղաքական այն պատնեշը, որ հնարավորություն էր տալիս անտեսելու Դաշնակցության խնդիրը «քննական հրափորձության» ենթարկելու Հովհաննիսյանի պահանջը: Այդ կերպ կոծկումը դառնում էր ինքնաբերաբար ընդունելի ու գերադասելի գործելակերպ. գործելակերպ, որ բավարարվում էր մարտնչող հռետորաբանությամբ միայն:

Այս մոտեցումն էր բացահայտում, թե ստալինիզմն ինչպես էր պարարտ հող դառնում 1960-1970-ականներին պատմության հանդեպ ապադասակարգային մոտեցման համար: Իսկական մտավորական բանավեճի բռնվել դաշնակցականների հետ չէր կարելի, գիտականորեն բացահայտել կուսակցության ծագումն ու քննադատել դրա հետագա գործունեությունն արգելվում էր: Դաշնակցությունն իրեն ծնած ու իր հետագա գործունեությունը պայմանավորած սոցիալ-տնտեսական պայմաններից կտրող ստալինյան այս մեթոդաբանությունն էր, որ 1960-1970-ականներին հաստատվեց ազգայնական պատմագիտության հիմքերում: Ստալինյան մոտեցումը, Դաշնակցության դասակարգայնության խնդիրը գիտական ուսումնասիրության առարկա չդարձնելով, այն վերածում էր ապապատմական կատեգորիայի: Դաշնակցությունը հենց իբրև ապապատմական կատեգորիա էր ընբռնվում պատմագիտության ազգայնական օրակարգում:

1970-ին կայացած նիստից հետո Հովհաննիսյանը գրություն է ուղարկում Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի բյուրոյին: Դիմումի մեջ Հովհաննիսյանը բացեիբաց խոսում էր ստալինյան մեթոդաբանությամբ գործող ազգայնական պատմագիտության մասին.

---

[113] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[19], վավ. 86, թ. 4:

[114] Ինչպես իր դիմումներից մեկում նշում է Հովհաննիսյանը, Դաշնակցությունը բուրժուական կուսակցություն համարող Աղայանի կոնցեպցիան քննարկվել և մերժվել էր *Վոպրոսի իստորիի (Вопросы истории)* հանդեսի էջերում դեռ 1963-ին: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 491 գ, թ. 2: Խոսքը Արուտյունովի և Պոսելյանինայի գրախոսականի մասին է՝ գրված Աղայանի *Մեծ Հոկտեմբերը և Հայաստանի աշխատավորության պայքարը խորհրդային իշխանության հաղթանակի համար* գրքի առթիվ: Տե՛ս Г. Арутюнов, О. Поселянина, «Ц. П. Агаян. Великий Октябрь и борьба трудящихся Армении за победу Советской власти. Изд-во АН Армянской ССР. Ереван. 1962», *Вопросы истории,* 1963, թիվ 9, էջ 106-108:

> Ահա 60 տարուց ավելի է, որ ես հետևողականորեն պայքարում եմ ժողովուրդների բարեկամությանը վնասող հայկական նացիոնալիզմի դեմ, մինչդեռ մեր Ակադեմիայի առանձին գիտաշխատողները զանազան ձևերով հովանավորում են այն, դեմագոգիաբար մեղադրելով ինձ հնարովի հանցանքների մեջ, դրանով իսկ նպատակ ունենալով արգելելու դաշնակցության դեմ ուղղված գաղափարական այն պայքարը, որին նվիրված է եղել իմ ողջ գիտակցական կյանքը: Այս կարելի է բացատրել միայն նրանով, որ մեզանում թերագնահատվում է նացիոնալիզմի վտանգավորությունը և նրա դեմ մղվելիք պայքարի կարևորությունը:[115]

Ստալինիզմը ծնել էր իր հակածինը: 1920-ականների երկրորդ կեսին նացիոնալիզմի դեմ պայքարի քողի տակ Դաշնակցությունը հայտարարվեց բուրժուական կուսակցություն և աշխատավորության ամենավտանգավոր թշնամին: Ստալինիզմն արհեստականորեն ուռճացրեց Դաշնակցության ուժն ու նացիոնալիզմի վտանգը՝ քաղաքական ուղիղ հրահանգավորումը և հաշվեհարդարներն արդարացնելու համար: Բայց հենց Դաշնակցությունը բուրժուական կուսակցություն հռչակելով՝ ստալինիզմը քողարկեց կուսակցության իրական ուժն ու վտանգը, որ կապված էր մանրբուրժուական դասակարգի քաղաքական դիրքավորումների հետ:[116] Դրանով հենց Դաշնակցության դեմ խորքային քաղաքական ու գաղափարական պայքար մղելու հնարավորությունը փակվեց: Սրան հակառակ, Դաշնակցությունը մանրբուրժուական կուսակցություն համարելով՝ Հովհաննիսյանն իրական, ոչ թե հռետորաբանական պայքար էր վարում նացիոնալիզմի դեմ: 1960-1970-ականներին Դաշնակցության մանրբուրժուականության տեսությունը կրկին հրապարակ բերելով՝ Հովհաննիսյանն, ուրեմն, կրկին պայքարի ճակատ էր բացում նացիոնալիզմի դեմ: 1960-1970-ականներին, սակայն, Հովհաննիսյանը գործ ուներ այն նացիոնալիզմի հետ, որը ծնվել էր ստալինիզմից՝ իբրև դրան հակոտնյա ու որը յուրացրել էր իր իսկ դեմ գործած ստալինյան հռետորաբանությունը: 1920-ականների վերջին ու 1930-ականներին ստալինիզմը Հովհաննիսյանին մեղադրում էր նացիոնալիզմի մեջ՝ դատապարտելով Դաշնակցության դեմ ուղղված վերջինիս գաղափարական պայքարը: 1960-1970-ականներին Դաշնակցության դեմ ուղղված Հովհաննիսյանի գաղափարական պայքարը կրկին արգելվում էր՝ բայց այժմ արդեն հանուն նացիոնալիզմի հովանավորության:[117]

Հովհաննիսյանի գրքի դեմ ազգայնական պատմագիտության սկսած արշավի թելերը, սակայն, ձգվում էին գրքի հրատարկման հարցերից այն կողմ: 1968 և 1969 թվականներին Անտոն Քոչինյանին ու Անաստաս Միկոյանին ուղղված նամակներից պարզվում է, որ *Ուրվագծերը* գրելու Հովհաննիսյանի մտահղացումը կապված է եղել Գիտությունների ակադեմիայի՝ հրատարակության պատրաստվող *Հայ ժողովրդի պատմության*

---

[115] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 501 ե, թթ. 4-5:

[116] 1920-ականների երկրորդ կեսին՝ հաստատվող ստալինյան քաղաքականությունների պայմաններում Հովհաննիսյանը նախազգուշացնում էր Դաշնակցության մանրբուրժուական ծագումից բխող քաղաքական վտանգների մասին: Տե՛ս մասնավորապես 1926-ին Հովհաննիսյանի ներկայացրած թեզիսները Դաշնակցություն կուսակցության մասին. ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1410; Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[4], վավ. 12 բ: Տե՛ս նաև մեր *«Դաշնակցության առիթով». Աշոտ Հովհաննիսյանի պատմաքաղաքականությունը 1920-ականներին*, https://tinyurl.com/yyfm7v26, էջ 45-52:

[117] Հովհաննիսյանը հիրավի միամտաբար կարծում էր, թե *Ուրվագծերի* տպագրության արգելքը բացատրելի էր «միայն նրանով, որ թերագնահատվում է բուրժուական նացիոնալիզմի դեմ մղվելիք գաղափարական պայքարը»: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 501 դ, թ. 1:

ութիատորյակի հետ:[118] Բազմահատորյակի գլխավոր խմբագիրն ինքը Հովհաննիսյանն էր: Անաստաս Միկոյանին ուղղած նամակում Հովհաննիսյանն այս մասին գրում էր.

> Բանն այն է, որ չարաբախտ գիրքս գրել եմ նրա (ութիատորյակի՝ Ի. Շ.) նյութն ու կոնցեպցիան այդ աշխատության մեջ պաշտպանելիք իմ դրույթները գիտականորեն հիմնավորելու նպատակով: Ստացվում է այնպես, որ եթե Կենտկոմը արգելում է գրքիս տպագրությունը, դրանով, փաստորեն, խոչընդոտ է ստեղծվում նաև պատմության ութիատորյակի առջև, քանի որ գրել բազմահատորյակի նյութը ինձ պարտադրվող սուտ կոնցեպցիայով անկարող պիտի լինեմ: Ստեղծվում է մի կացություն, որ հարկադրում է ինձ հրաժարվել ութիատորյակից, իսկ այդ նշանակում է՝ ծանր կացություն ստեղծել Հայկական ակադեմիայի այդ ձեռնարկության համար:[119]

Հովհաննիսյանը հրաժարվում էր առաջնորդվել Դաշնակցությունը բուրժուական կուսակցություն սահմանող քաղաքական «սուտ կոնցեպցիայով»: Այդ կոնցեպցիան հերքող գիրքը, սակայն, լույս չէր տեսնում: Ուրեմն, ի՞նչ ճակատագիր պետք է ունենար *Հայ ժողովրդի պատմությունը*: Բազմահատորյակը տպագրվեց: Ութիատորյակի 6-րդ հատորը, որտեղ ներառված էր հայ քաղաքական կուսակցությունների ձևավորման պատմությունը լույս տեսավ 1981-ին: Իբրև հատորի համապատասխան գլխի հեղինակներ նշված են Աշոտ Հովհաննիսյանը և Ծատուր Աղայանը: 1981-ին, սակայն, Հովհաննիսյանն այլևս ողջ չէր, իսկ կուսակցությունների ծագման իր տեսությունը ենթարկվել էր խմբագրման: Այս հանգամանքը փաստում էր հենց գլխի վերնագիրը՝ «Հայ հասարակական-քաղաքական հոսանքներն ու բուրժուական կուսակցությունների ձևավորումը». վերնագիր, որ նշում էր հայ կուսակցությունների ծագման ստալինյան քաղաքական կոնցեպցիան: Գլխի՝ Դաշնակցությանն անդրադարձող հատվածի առաջին նախադասությունը մասնավորապես հաստատում էր.

> 1890 թ. Կովկասում կազմակերպվեց «Հայ հեղափոխականների դաշնակցություն» բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունը, որը հանդես եկավ որպես բուրժուազիայի ազգային շահերի պաշտպան: Հայ բուրժուազիան և նրա կուսակցությունը ժողովրդական լայն մասսաների աջակցությունն ստանալու համար իրենց հռչակեցին համազգային շահերի արտահայտիչներ:[120]

Դաշնակցություն կուսակցության ծագման ու հետագա զարգացման բարդ փոխակերպումներով ու հակասալից զարգացումներով նշագծված պատմությունը, որ բացահայտվում էր Հովհաննիսյանի գրքում, բազմահատորյակում վերածված է պարզեցված ու սխեմատիկ մի պատկերի:[121] Աղայանը պարզունակ շարադրանքի էր վերածել Դաշնակցության բարդ պատմությունը՝ հանուն քաղաքական գնահատականի արդարացման: Դաշնակցականներին ի սկզբանե մարքսիզմի ու սոցիալիզմի թշնամի կարգելով ու ամբողջովին կապելով բուրժուազիայի շահերի հետ Աղայանի խմբագրած

---

[118] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 302, թ. 4 և թղթ. 244[16], վավ. 584, թ. 2-3: Խոսքը 1967-1984 թվականների ընթացքում Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի հրատարակած *Հայ ժողովրդի պատմության* ութիատորյակի մասին է:
[119] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 584, թ. 2-3:
[120] Տե՛ս *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 6 (Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981), էջ 194:
[121] Հովհաննիսյանի տեքստի վերաբերյալ պետք է մեթոդաբանական մի նկատառում հաշվի առնել: Այն բարդ է վերարտադրել: Հովհաննիսյանը գրում է պատմության ծավալմանը համընթաց՝ հաշվի առնելով դրա անցումները, տեղ տալով անորոշություններին, զարգացնելով հակասությունները: Ըստ այդմ՝ վերարտադրելի դարձնել պատմական ընթացքը դառնում է դժվար: Սա առհասարակ Հովհաննիսյանի պատմաբանական մեթոդի առանձնահատկությունն է:

տեքստն ի չիք էր դարձնում Դաշնակցության պատմության անորոշություններին ու հակասություններին, անցումներին ու փոխակերպումներին արժանին մատուցող Հովհաննիսյանի պատմագիտական մոտեցումը:[122] Ի տարբերություն Հովհաննիսյանի առաջադրած պատմաքննական մոտեցման, Աղայանը Դաշնակցության պատմությունը չէր քննում պատմականորեն. Աղայանի պատմագիտական մոտեցումը պատմական ժամանակ չէր ճանաչում: Ապապատմական այս մոտեցումն է, որ բացահայտում է ազգայնական պատմագիտության ստալինյան հիմքերը: Պատմական քննության չենթարկվող Դաշնակցության պատմությունը հավասարապես տեղ ուներ և՛ ստալինյան քաղաքական հռետորաբանության, և՛ ազգայնական պատմագիտության օրակարգում: Պատահական չէ, որ Դաշնակցությանը տրված ստալինյան և հենց դաշնակցական գնահատականները նույնն էին, բայց հակառակ նշաններով: Բազմահատորյակի տեքստը Դաշնակցության գործունեության մասին մասնավորապես նշում էր.

> Կուսակցության ղեկավարությունը պաշտպանում էր այն հայացքը, թե ազգության դասակարգային շահերը նահանջում են նրա ընդհանուր շահերի առաջ: Եվ պատահական չէ, որ «Մանիֆեստ» կոչված իր կոչը դաշնակցությունն ուղղում էր հայ հասարակության բոլոր խավերին, հորդորելով նրանց կանգնել մի միասնական դրոշի տակ:.... Հրաժարվելով դասակարգային պայքարի գաղափարից և հորջորջելով իրեն ժողովրդական կուսակցություն, դաշնակցությունը դառնում էր դասակարգային տարբերությունը մերժող, զուտ ազգայնական գաղափարախոսություն քարոզող կուսակցություն:[123]

Աղայանի՝ Դաշնակցությանը տված այս գնահատականը նույն կերպ շրջանցում էր կուսակցության դասակարգայնության հարցը ինչպես 1920-ականներին հենց իրենք՝ դաշնակցականները մեծամասնականների հետ բանավեճերում: Դաշնակցականներն իրենք իրենց համարում էին քաղաքական հոսանք, որը «կը խօսի՛ հայ ժողովուրդի 95 տոկոսի անունէն եւ կը պաշտպանէ այդ 95 տոկոսին, իսկ երբեմն՝ նաեւ բովանդակ հայ ժողովուրդին շահերը»:[124] Դասակարգային, սոցիալ-տնտեսական ի՞նչ նկարագիր ուներ հայ ժողովուրդը. այս հարցին չէին պատասխանում ո՛չ դաշնակցականները, ո՛չ ստալինիստները: Ստալինյան հռետորաբանության մեջ Դաշնակցությունը պիտի դիվացվեր, քանի որ պաշտպանում էր անորոշ սահմանված հայ ժողովրդի շահերը: Ազգայնական պատմագիտության մեջ Դաշնակցությունը պիտի սրբացվեր նույն պատճառով, քանի որ պաշտպանում էր հայ ժողովրդի շահերը: Աղայանի ստալինյան պատմագիտության մեջ բաբախում էր «տակից գործող» ազգայնականությունը:

Դեռ 1970-ին Հովհաննիսյանը կարծիք էր գրել նույն թվականին *Հասարակական գիտությունների լրաբերում* լույս տեսած Ծատուր Աղայանի «Դրվագներ հայ ազատագրական պայքարի պատմությունից» հոդվածի մասին:[125] Հոդվածում Հովհաննիսյանը բացահայտում էր Աղայանի պատմագիտության քաղաքական հենքը: Հիմք ընդունելով վերնագիրը՝ Հովհաննիսյանը ենթադրում էր, թե հոդվածի հեղինակը

---

[122] Տե՛ս *Հայ ժողովրդի պատմություն*, h. 6, էջ 196, 198:
[123] Տե՛ս *Հայ ժողովրդի պատմություն*, h. 6, էջ 196, 197:
[124] Տե՛ս «Պոլշեւիզմէն դէպի Դաշնակցութիւն», *Հայրենիք*, 1 սեպտեմբերի 1925 թ.: Ժողովրդի կուսակցությունը լինելու Դաշնակցության այս հավակնությունն ըստ էության հաստատված մոտեցում էր դաշնակցականների շրջանում: Դաշնակցականների այս մոտեցումն ենք քննարկում մեր *«Դաշնակցության առիթով». Աշոտ Հովհաննիսյանի պատմաքաղաքականությունը 1920-ականներին* հետազոտության մեջ, https://tinyurl.com/yyfm7v26, էջ 13-20:
[125] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 234: Աղայանի հոդվածը տե՛ս Ծ. Աղայան, «Դրվագներ հայ ազատագրական պայքարի պատմությունից», *Լրաբեր հասարակական գիտությունների,* 1970, թիվ 1, էջ 45-62:

ծրագրել էր հրապարակել մի շարք դրվագներ՝ «մտադիր լինելով լուսաբանելու հայ ազգային-ազատագրական պայքարի պատմական ընթացքը, բնութագրել նրա շարժիչ ուժերը, պարզաբանել նրա վճռահատման նախադրյալները»:[126] Հոդվածը կարդալիս, սակայն, Հովհաննիսյանը, եկել էր այլ եզրահանգման: Աղայանը հոդվածում մասնավորում էր իր խոսքը հայ ազատագրական շարժման գործիչներից միայն մեկի՝ զորավար Անդրանիկի մասին, որի կերպարը, ինչպես նկատում է Հովհաննիսյանը, հոդվածագիրը «ոչ միայն «բարդ» է համարում, այլև՝ «հակասական», ոչ միայն «հերոսական», այլև՝ «վիպական»»:[127] Իր դիտողություններում Հովհաննիսյանը՝

> .... մի կողմ [էր] թողնում Անդրանիկի մասին շռայլած գերադրական այն էպիտետները, որին ընթերցողը հանդիպում է հոդվածի բուն հենքից դուրս, նրան ներկայացնելով որպես «համաժողովրդական հերոս ու առաջնորդ», որին հեղինակը հնարավոր է գտել հռչակելու «հայ ժողովրդի ազատագրական պայքարի հավաքական ուժի հայտարար»:[128]

Իսկ ի՞նչ էր ակնկալում Հովհաննիսյանը Աղայանից.

> Կարծում ենք, որ ավելի նպատակահարմար կլիներ, եթե հեղինակը սկսեր իր ասելիքը ոչ թե բարդից ու հակասականից, կամ հերոսականից ու վիպականից, այլ պարզից ու աներկբայելիից:.... Լավ կլիներ, եթե հեղինակը նախապես պարզեր իր վերաբերմունքը դեպի հայ ազգային-ազատագրական շարժման պատմական ընթացքն ու օրինաչափությունները, և առաջին հերթին անդրադառնար հայ ազատագրական շարժման երկու անհամատեղելի ուղղություններին, «հայկական հարցի» լուծման *դիվանագիտական* և *հեղափոխական* հակամարտ ուղիներին (ընդգծումը՝ Ա. Հ.):[129]

Հովհաննիսյանն իր գրքում բացահայտում էր, թե ինչպես է գործունեության հենց սկզբից Դաշնակցությունը վճռականորեն երես դարձնում ռուսական հեղափոխությունից՝ կողմնորոշվելով դեպի եվրոպական պետությունների «հայանպաստ» միջամտությունը:[130] Հովհաննիսյանը փաստում էր, որ ազգային-նարոդնիկական անցյալից ժառանգելով ապստամբական և տեռորիստական իր գործելակերպը՝ Դաշնակցությունը սկզբից ևեթ հետամուտ է եղել «ոչ թե հեղափոխական ճանապարհով իշխանությունը նվաճելու խնդրին, այլ միայն 61-րդ հոդվածի կենսագործմանը՝ փութա[ցնել]ով արևմուտքի միջամտությունը»:[131] Այլ կերպ՝ Հովհաննիսյանը պահանջում էր Աղայանից ընդունել

---

[126] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 234, թ. 1:
[127] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 234, թ. 1:
[128] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 234, թ. 1:
[129] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 234, թ. 1-2:
[130] Հովհաննիսյանը գիրքն ամփոփող էջերում, անդրադառնալով Արևմտահայաստանում Դաշնակցության ծավալած գործունեությանը, գրում է. «Իշխանության փոխանցումը և ժողովրդական զանգվածների պահանջների գոհացումը պիտի տեղի ունենային *ոչ թե հեղափոխության* միջոցով, այլ տերությունների դիվանագիտական կամ ռազմական միջամտության հետևանքով կատարվելիք *ռեֆորմների* միջոցով: Իշխանության համար մղվելիք պայքարը իջեցնելով քաղաքական ցուցարարության մակարդակին՝ ազգային կուսակցությունների աճուրդած «հայկական հեղափոխությունը» փաստորեն որդեգրում էր ապստամբական այն տակտիկան, որի միջոցով 70-ական թվականների արևելահայ լիբերալները ենթադրում էին սուլթանին պարտադրել վարչական կամ քաղաքական բարեփոխումներ կատարել հայաբնակ վիլայեթներում» (ընդգծումները՝ Ա. Հ.): Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[2], վավ. 1 ա, թ. 361:
[131] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 500 ա, թ. 4: Մեկ այլ տեղ Հովհաննիսյանը գրում է. «Ես շեշտում եմ դ-ները (դաշնակցականները՝ Ի. Շ.) *հեղափոխականներ* չէին և որ նրանց պատկերացումով զանգվածների տնտեսական և քաղաքական պահանջների կատարումը պիտի տեղի ունենա ոչ թե հեղափոխության ճանապարհով, այլ տերությունների դիվանագիտական կամ ռազմական միջամտությամբ կատարվելիք *ռեֆորմների* միջոցով. մասնավորապես իշխանության համար մղվելիք պայքարը իջեցնել քաղաքական ցուցարարության մակարդակին: Կուսակցության ղեկավարները հենվում էին

Ուրվագծերում առաջադրված հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման իր տեսությունը, հաշվի նստել Դաշնակցության «ռեակցիոն» գործունեության իր քննադատության հետ: Մինչդեռ, ինչպես Հովհաննիսյանն էր նշում, այն մոտեցումը, թե Դաշնակցությունը հեղափոխական ճանապարհով իշխանությունը նվաճելու խնդիր է ունեցել, 1960-1970-ականներին «դժբախտաբար.... կարծում [էին] և պնդում անգամ հարգարժան կոմունիստներից շատերը, այդ թվում նաև կոմունիստ պատմաբանների զգալի մասը, որոնց աշխատությունները չէ[ին] հանդիպում արգելքների»:[132]

Հիրավի, 1970-ին Հովհաննիսյանը հայաստանյան պատմագիտությունից պահանջում էր նույնը, ինչ 1920-ականներին ստալինյան պատմագիտությունից՝ հաշվի առնել պատմական ընթացքն ու օրինաչափությունները: Իսկ այս պահանջն անհնար էր իրագործել առանց հայաստանյան սոցիալ-տնտեսական այն պայմանները հաշվի առնելու, որտեղ ձևավորվել էին այդ օրինաչափությունները: Թե՛ ստալինյան պատմագիտությունը, թե՛ ազգայնականությունը հովանավորող 1960-70-ականների պատմագիտությունը սկզբունքորեն դեմ էին դուրս գալիս այս մոտեցմանը: Ազգայնական պատմագիտությունը ստալինյան մեթոդաբանությամբ քողարկում էր հայաստանյան քաղաքական մտքի ու հայ ազգային-ազատագրական շարժման պատմական ընթացքը՝ այն փոխարինելով «բուն հենքից դուրս», գնահատողական և ըստ այդմ՝ բովանդակություն չունեցող բնորոշումներով (ինչպես, օրինակ, Աղայանի դեպքում՝ Անդրանիկի նկարագիրը): Այո՛, հայաստանյան քաղաքական մտքի ու հայաստանյան իրականության պատմությունը բացահայտող Հովհաննիսյանի գիրքը 1960-1970-ականներին չէր հրատարակվելու ստալինիզմի պատճառով, բայց այն ստալինիզմի, որն իր նոր ուժն էր գտել իրենից ծնված նացիոնալիզմի մեջ: 1970-ին Աղայանի հոդվածի քննադատությամբ Հովհաննիսյանն ակներև էր դարձնում այս փոխակերպումը.

> Տկար պատկերացում ունենալով արևմտահայ ազատագրական շարժման մասին.... հոդվածի հեղինակը փորձել է կառուցել իր տեսությունը շարժման հոգեբանական վերլուծության խախուտ հիմքերի վրա: Այդ է հենց պատճառը, որ հեղինակը խուսափում է արևմտահայ շարժման հասարակական միջավայրի պատմական լուսաբանությունից: Կոնկրետ փաստեր չունենալով ազատագրական շարժման հասարակական-քաղաքական կապերի մասին, հեղինակի հոդվածը պատմական ամուր հենակետեր չունի արևմտահայ ժողովրդի ազատագրական շարժման օբյեկտիվ գնահատման համար:[133]

«Հասարակական միջավայրի պատմական լուսաբանությունն» էր, Հովհաննիսյանի ըմբռնմամբ, քաղաքական իրադարձությունների «օբյեկտիվ» գնահատման չափանիշը: Բայց 1960-1970-ականների պատմագիտության ազգայնական միտումներում ստալինյան մոտեցումները ճանաչելի էին հենց հասարակական միջավայրի պատմական լուսաբանությունից հրաժարման մեջ: Հայաստանյան կոնկրետ սոցիալ-տնտեսական պայմանների անտեսումը Հովհաննիսյանին հուշում էր Աղայանի պատմագիտության քաղաքական կողմնորոշումը: Ըստ Հովհաննիսյանի՝ Աղայանի հոդվածից ակներև էր, որ

հեղափոխականորեն մտադրված զանգվածների վրա, սակայն նրանց առաջնորդում ռեֆորմիզմի ճանապարհով» (ընդգծումները՝ Ա. Հ.): Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 501 զ, թ. 2:

[132] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 500 ա, թ. 4:

[133] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 234, թթ. 4-5:

արևմտահայ ազատագրական շարժման հարցում հեղինակը «երկու ոտքով կանգնած է «հայկական հարցի» *դիվանագիտական* լուծման գետնի վրա».[134]

> Ակամայից հիշում ես Գ. Սրվանձտյանի այն միտքը, թե հայկական հարցի բանալին միջազգային դիվանագիտության մայրաքաղաքներում որոնելու փոխարեն, նպատակահարմար կլիներ հայկական շարժման համար հանգրվան փնտրել հենց *Հայաստանում*: Այս նշանակում է, թե իր հակասական հավաստիացումներին հակառակ, Օ. Աղայանի միտքը ևս խարխափում է այն ուղիներում, որոնցով քայլելու համար նրանից շատ առաջ ապարդյուն ջանքեր են արել շարժվելու նաև հայ ազգային դիվանագիտության ղեկավարները (ընդգծումը՝ Ա. Հ.):[135]

Հովհաննիսյանի հետազոտական հայացքն ուղղված էր Հայաստանին: «Գիտական այն քարացած դոգմաներն» ու այն փակուղին, որ 1960-1970-ականներին մատնացույց էր անում Հովհաննիսյանը, հաղթահարելի էին, եթե միայն հայաստանյան պատմագիտությունը շրջվեր դեպի հայաստանյան իրականությունը, իր օրակարգ հետ բերեր հայաստանյան «հասարակական միջավայրի պատմական լուսաբանությունը»:[136]

Ի՞նչ վերջաբան պետք է ունենար Հովհաննիսյանի՝ հանուն հայաստանյան իրականության ու քաղաքական մտքի «իրական» պատմության այս կռիվը: Ումի՞ց պետք է Հովհաննիսյանն ակնկալեր դրա կարևորումը՝ «տեսական ու գործնական խնդիրներին» լուծում տալուց խուսափող գաղափարական ճակատի ղեկավարությունի՞ց, թե՞ «հայկական նացիոնալիզմը հովանավորող» Գիտությունների ակադեմիայից:[137]

Վերջաբանի փոխարեն

Հովհաննիսյանի գրքի շուրջ սկսված գիտական ու քաղաքական քաշքշուկը դեռ 1968-ին հանգեցրեց Հայաստանի Կենտկոմից հնչած հստակ պահանջի: Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը հարկ էր համարում, որ Հովհաննիսյանը վերաշարադրեր գրքի վերջաբանը:[138] Քոչինյանի պահանջն էր, որ վերջաբանում Հովհաննիսյանն արծարծեր այն միտքը, որ 1905 թվականի ռուսական առաջին հեղափոխությունից հետո Դաշնակցությունը մտել էր իր զարգացման նոր՝ «բուրժուական վերասերման» շրջանը:[139] Հովհաննիսյանին ուղղված

---

[134] Ըստ Հովհաննիսյանի՝ այն, որ արևմտահայ ազատագրական շարժման հարցում Աղայանը կանգնած է ««հայկական հարցի» դիվանագիտական լուծման գետնի վրա», փաստում է հեղինակի մոտեցումը. Աղայանը հոդվածում փորձում է «կառչել այն մտքից, որ ազատագրական շարժման հայ գործիչները ունեցել են այն կողմնորոշումը, թե հայկական հարցի լուծման բանալին գտնվում է ոչ թե Բեռլինում կամ Լոնդոնում, այլ՝ Պետերբուրգում»: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 234, թ. 5:
[135] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 234, թթ. 5-6:
[136] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 234, թթ. 5:
[137] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 491 բ, թ. 3:
[138] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[13], վավ. 302, թ. 1: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:
[139] Հովհաննիսյանը գրքի առաջաբանում արդեն նշել էր, որ 1905-ի հեղափոխությունից հետո Դաշնակցության զարգացման նոր փուլը բնորոշում է որպես կուսակցության «բուրժուական վերասերման էտապ»: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[13], վավ. 302, թ. 1: Հովհաննիսյանի կազմած *Ուրվագծերի* նախաբանի նախագիծը տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[14], վավ. 385: Իր դիմումներից մեկում Հովհաննիսյանը հատուկ շեշտում է, որ *Ուրվագծերի* առաջաբանը գրել է 1967-ի վերջերին Անաստաս Միկոյանի խորհրդով: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 500 ա, թ. 9: Պետք է նշել, որ Հովհաննիսյանի ու Միկոյանի ծանոթությունը տասնամյակների պատմություն ուներ: Միկոյանը եղել է Հովհաննիսյանի ուսանողը, երբ վերջինս դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1914-1917): Հովհաննիսյանի ֆոնդում պահվում են 1950-1960-ական թվականների Հովհաննիսյանի ու Միկոյանի

այդ պահանջի քաղաքական հիմնավորումը նույնն էր. քանի որ *Ուրվագծերը* գրված էր 1928-ին ընդունված որոշումից տարբերվող կոնցեպցիայով, առանց վերջաբանի գիրքը կարող էր ընկալվել որպես «դաշնակցության ռեաբիլիտացիայի» փորձ (թ. 2): Քոչինյանի պահանջը Հովհաննիսյանին ներկայացվում էր այն հիմնավորմամբ, թե գրքից ստացվող «այդ տպավորությունը վանելու համար է հենց», որ առաջին քարտուղարը «նպատակահարմար» էր տեսնում վերջաբանի վերաշարադրումը (թ. 2): Քաղաքական հիմքով վերջաբանն ընդարձակելու պահանջը 1968-ի վերջին Քոչինյանին ուղղված իր նամակում Հովհաննիսյանն իր հերթին համարեց «աննպատակահարմար»՝ պարզաբանելով՝

> Ինչպես գիտական ամեն մի աշխատության վերջաբան՝ գրքիս վերջաբանը ևս պիտի ամփոփի միայն *նրա բովանդակությունից բխող եզրահանգումները*: Քանի որ գիրքս ընդգրկում է միայն դաշնակցության մինչև 1903-1905թթ. *նախակովկասյան* գործունեությունը, անհնարին է գրքի վերջաբանում անդրադառնալ այդ կուսակցության 1905-1920թթ. բուրժուական վերասերման շրջանին, առանց վերլուծելու այդ շրջանի նրա ընթացքը և հատուկ վկայակոչումներով ցույց տալու նրա բուրժուական վերասերման պրոցեսը (ընդգծումը՝ Ա. Հ.) (թ. 1):

Հովհաննիսյանի փաստարկը զուտ գիտական էր, բայց գիտական լինելով կանխում էր վերջաբանը վերաշարադրելու արդյունքում սպասվող քաղաքական ակնկալիքները: Վերջաբան գրելով Հովհաննիսյանը պիտի դուրս գար գրքում գրածի սահմաններից, այսինքն՝ փոխելով գրքի բովանդակությունը՝ ներառեր Դաշնակցության գործունեության նոր շրջանի տեսությունն ու այդ շրջանը բնութագրող վկայակոչումները: Հակառակ դեպքում, ինչպես Հովհաննիսյանն էր նշում, խուսափել նման վկայակոչումներից «կնշանակեր գրքի վերջաբանը հանգեցնել ընթերցողին ոչինչ չասող վայրախոսության» (թ. 2):

Ուրեմն, Հովհաննիսյանը մերժում էր վերջաբանն ընդարձակելու պահանջը գիտական նկատառումներից ելնելով. այն սպառնում էր խախտել «ամբողջ աշխատության կոմպոզիցիան կամ իջեցնել նրա գիտական մակարդակը» (թ. 2): Բայց չընդարձակել վերջաբանը նշանակում էր զերծ մնալ Դաշնակցության դեմ հնչող «վայրախոսությունից»: Գրքի «գիտական մակարդակը» պահելով՝ Հովհաննիսյանն այդ կերպ պահում էր նաև քաղաքական դիրք: Ի վերջո, Քոչինյանի պահանջն էր, որ Հովհաննիսյանը գրքում հավատարմություն հայտներ 1928-ի Դաշնակցությունը բուրժուական կուսակցություն հայտարարած որոշմանը: Հովհաննիսյանն իր հերթին գրքի հղացքի ու 1928-ի որոշման միջև տարվող կապերի մասին Քոչինյանին ուղղված նամակում գրում էր.

> Ուզում եմ հավաստիացնել Ձեզ, մեծարգո Անտոն Երվանդովիչ, որ թեև չեմ բաժանում 1928թ. ՀԿԿ Կենտկոմի ընդունած լենինիզմի բառին և ոգուն հակասող բանաձևը, այդ բանաձևը քննադատելու համար չէ, որ գրել եմ գիրքս և նրա մասին հեռավոր ակնարկ իսկ չկա իմ գրքում (թ. 3):

Ակնհայտ էր, սակայն, որ վերջաբանը վերաշարադրելու պահանջը կոչված էր ոչ թե լուծելու Հովհաննիսյանի գրքի տպագրության հարցը, այլ քաղաքական ամենաբարձր մակարդակով ամրագրելու դրա չտպագրելու հիմնավորումը:[140] Հովհաննիսյանը

նամակագրությունը: Մասնավորապես *Ուրվագծերի* հրատարակման խնդիրը շոշափող նամակներից տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 584; թղթ. 244[21], վավ. 110:

[140] Հովհաննիսյանի ֆոնդում տե՛ս *Ուրվագծերի* «Վերջաբանի հին վարիանտները» թղթապանակը (թղթ. 244[14], վավ. 386):

նամակում իր պատրաստակամությունն էր հայտնում գրել նոր գիրք Դաշնակցության 1905-1920 թվականների գործունեության մասին, պատմական կոնկրետ փաստագրությամբ ցույց տալ դրա դասակարգային վերասերման պրոցեսը, եթե առանց արգելափակելու տպագրվեր *Ուրվագծերը* (թ. 2): Գրքի տպագրության հարցում Անաստաս Միկոյանի միջնորդությունը խնդրող 1969-ի իր նամակում Հովհաննիսյանը նշում էր, որ Քոչինյանի անունից վերջաբանը վերափոխելու առաջարկը ելնում էր փաստից, որ Կենտկոմը գիտական որևէ հիմք չուներ «բացեիբաց մերժելու» գրքի տպագրությունը:[141]

Իրականում, սակայն, ոչ ոք բացեիբաց չէր էլ մերժելու գրքի տպագրությունը: Միկոյանին գրված նույն նամակում Հովհաննիսյանը տեղեկացնում էր, որ «Քոչինյանը պարտք չհամարեց որևէ ձևով պատասխանելու նամակին»:[142] Ձգվող այս լռության պայմաններում է, որ Հովհաննիսյանն ի վերջո որոշում է գրել վերջաբանի նոր տարբերակ.

> ....Ընկերներիս համառ խորհուրդներին զիջելով, հարկ համարեցի ի վերջո ընդառաջել Կենտկոմի պահանջին ու նրան ներկայացնել վերջաբանի նոր վարիանտ: Սակայն չնայած, որ արդեն մի ամիս է անցել դրանից, մինչ այժմ ընկ. Քոչինյանը շարունակում է լուռ մնալ. դեռ որոշված չէ գրքիս տպագրության հարցը (թ. 1):

Մատենադարանում պահվող *Ուրվագծերի՝* Դաշնակցությանը վերաբերող գլուխների ու վերջաբանի էջերը թերթելիս կարծես պատկերի մակարդակում բացահայտվում է գրքի տպագրության համար Հովհաննիսյանի տարիներ տևած կռիվը: Անընդհատ վերանայումների ու խմբագրումների, հատվածաբար ջնջումների ու կողադիր թղթերի ավելացումների արդյունքում հետազոտության վերջին կտորները կարծես ինքնին դարձած լինեն հայ քաղաքական մտքի ջնջված պատմության պատկերներ:

Վերջաբանի վերանայումը չէր կարող լուծել գրքի տպագրության հարցը, քանի որ այն ի վիճակի չէր փոխելու գրքում Դաշնակցության սոցիալական ծագմանը տված Հովհաննիսյանի գնահատականը մասնավորապես և հայաստանյան քաղաքական մտքի ավանդույթի Հովհաննիսյանի տեսությունն ընդհանրապես: 1960-1970-ականներին Հովհաննիսյանի առաջ քաշած այդ տեսության հիմնավորվածության ու միաժամանակ հարուցած խնդրի պարզ պատճառն այն էր, որ Հովհաննիսյանը հայաստանյան քաղաքական մտքի ավանդույթի կրողն էր անձնապես: Պատմականորեն զարգացող գաղափարական շարունակականության ըմբռնումը Հովհաննիսյանի տեսության հիմքում էր: Քոչինյանին գրված նամակում ուշագրավ կերպով էր բացահայտվում Հովհաննիսյանի տեսությունը կառուցող քաղաքական ու գաղափարական ժառանգորդության այդ ըմբռնումը: Իր դեմ ուղղված մեղադրանքներին արձագանքելով՝ Հովհաննիսյանը գրում էր.

> Թվում է, որ գեթ Ձեզ (Քոչինյանին՝ Ի. Շ.) անհայտ չպիտի լինի, որ իրենց կյանքում կենդանի «դաշնակի» երես չտեսած և «դաշնակների» հետ գաղափարաբանական բացճակատ բախում ունենալուց խուսափող մեր գաղափարական ճակատի ղեկավարներից ոմանք, ըստ երևույթին, գլխի չեն ընկնում, որ դյուրին չէ «դաշնակցականների ռեաբիլիտացման» մեջ կասկածել մեկին, որի ամբողջ

---

[141] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 584, թ. 1:

[142] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[16], վավ. 584, թ. 1: Հովհաննիսյանին ուղղված Միկոյանի պատասխան նամակից հստակ է, որ վերջինս գրքի հրատարակման հարցում նույն դիրքորոշումն ուներ, ինչ Քոչինյանն ու Կենտկոմը: Միկոյանը ևս պնդում էր, որ քաղաքական նպատակահարմարությունից ելնելով, անհրաժեշտ էր գրել առաջաբան կամ վերջաբան: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[21], վավ. 110, թ. 1:

> գիտակցական կյանքը ուղղված է եղել և հիմա իսկ ուղղված է այդ կուսակցության դեմ *լենինյան դիրքերից* մղվելիք գաղափարական պայքարի խնդիրներին (ընդգծումը՝ Ա. Հ.):[143]

Գրքի շուրջ քաղաքական ու գաղափարական սուր կռվի մեջ հայտնված Հովհաննիսյանի արձագանքը ևս սուր էր: Այդ կռվի պայմաններում Հովհաննիսյանը մեծ ընդհանրացում է անում՝ նշելով, թե իր *ամբողջ* գիտակցական կյանքում ինքը պայքարել է Դաշնակցության դեմ լենինյան դիրքերից: Այնինչ Հովհաննիսյանի «գիտակցական կյանքը» կայացել էր անցնելով հայ քաղաքական մտքի զարգացման հաջորդական, բայց տարբեր հանգրվաններով: Իսկ այդ հանգրվաններից առաջինն աշակերտական տարիներին Դաշնակցություն կուսակցությանն իր հարումներն էին: Դաշնակցությունից Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն (ՍԴԲՀԿ), ապա Կոմունիստական կուսակցության շարքերն անցած Հովհաննիսյանը քաղաքական գործիչների այն սերնդին էր պատկանում, որոնք իրապես ««դաշնակի» երես էին տեսել»:[144] Նախաստալինյան հայաստանյան իրականությունում քաղաքական մտքի տեղական ավանդույթը ներհակ կապերով իր զարգացումն էր ապրել հենց դաշնակցականների ու մեծամասնականների «գաղափարաբանական բացճակատ բախումներով»: 1960-1970-ականներին Հովհաննիսյանի համար հայ քաղաքական մտքի ներակա այդ կապերն իրական էին: Դրանք միևնույն իրականությունից ծնված ու այդ իրականության համար պայքարող քաղաքական հակընդդեմ ուժերի կապերն էին: Հովհաննիսյանի գիրքը հայաստանյան պատմագիտության դաշտ էր հետ բերում քաղաքական մտքի այդ առնչությունները: Իսկ հետ բերել այդ առնչությունները նշանակում էր բացահայտել հայաստանյան իրականության հետ հարաբերված քաղաքական մտքի մեր նախաստալինյան փորձը: Ուրեմն, ո՛չ վերջաբանի նոր տարբերակը, ո՛չ առաջաբանում ու վերջաբանում Դաշնակցության վերասերման շրջանին կատարված անդրադարձները, ո՛չ գրքի՝ Դաշնակցությանը վերաբերող գլուխների խմբագրումները գրքի տպագրության հարցում ոչ մի լուծում չէին կարող խոստանալ. Հովհաննիսյանի գիրքը պիտի մնար անտիպ:

1969-ին գրքի տպագրության հարցով Կենտկոմի քարտուղար Ռոբերտ Խաչատրյանի մոտ հրավիրվում է հերթական խորհրդակցությունը: Խորհրդակցության մասնակիցներից Աբգար Հովհաննիսյանը նշում է, թե գրքի առնչությամբ՝

> առարկում է միայն դաշնակցությանը վերաբերող գլուխները, որոնք թեպետև ճիշտ են գիտական առումով, այնուամենայնիվ կարող են տպագրվել 50 կամ 100 տարուց հետո միայն, որչափ ներկայիս դաշնակցությունը պատմական կատեգորիա չէ, այլ՝ քաղաքական:[145]

Ե՞րբ պետք է քաղաքական կատեգորիան դառնար պատմական, եթե քաղաքական նույն այդ կատեգորիան չէր պատմականացվում: Ստալինիզմի հաստատմամբ քաղաքական փակուղում հայտնված պատմության դրությունն ավելի դիպուկ անհնար է բնութագրել, քան դա արել է Գուրգեն Մահարին: 1936-1937-ին հայ մտավորականության ստալինյան բռնադատումը գեղարվեստական վավերագրի վերածած Մահարին ստալինյան ժամանակի ու պատմության մասին գրում է. «....Այն ժամանակ պատմություն

---

[143] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 302, թթ. 2-3:
[144] Պատահական չէ Հովհաննիսյանի այն դիտարկումը, թե Հայաստանի սահմաններից դուրս գործող դաշնակցական ղեկավարները (Ռուբեն Դարբինյանը, Վահան Նավասարդյանը և Սիմոն Վրացյանը) «իրենց «տեսական» գլխավոր հարվածները վերապահում են» Հովհաննիսյանին: Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[12], վավ. 302, թ. 3:
[145] Տե՛ս Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244[13], վավ. 319, թ. 2:

ստեղծողները պատմության հետ գլուխ դնելու նախասիրություն չունեին»:[146] Դրա վկայությունն էր Կարլ Մարքսի *Կապիտալի* հայերեն առաջին թարգմանության հեղինակին՝ Թադևոս Ավդալբեգյանին բաժին ընկած ճակատագիրը: Ըստ Մահարու, երբ հարցաքննության ժամանակ Ավդալբեգյանին սկսել են ծեծի ենթարկել, վերջինս փորձել է ուշքի բերել իր նախկին ուսանողներին՝ դիմելով նրանց զգաստացնող խոսքերով, թե՝ «Ի՞նչ եք անում, տղաներ, ինչո՞ւ հեռու չեք նայում, ախր պատմություն կա, պատասխանատվություն կա...»: Քննիչներից մեկը ծխախոտը հանգցրել է՝ սեղմելով իր դասախոսի ճակատին և ասել. «Քանի մենք կանք, պատմությունը չի լինի, իսկ երբ պատմությունը լինի, մենք չենք լինի»:[147]

Անհնար է հերքել, որ ստալինիզմն իր մեջ ճշմարտություն ունի: Այն ուժ է ստանում ամեն անգամ, երբ հերքվում է պատմությունը: Ստալինիզմի հաստատումը սկսվեց 1920-ականների երկրորդ կեսին, բայց դրա ավարտը նշմարելի չէ մեր անցյալում: Ստալինիզմն ու պատմությունն անհամատեղելի էին թե՛ 1920-1930-ականներին, թե՛ 1950-1970-ականներին: Դա է բացահայտում ստալինիզմի պատմական քննությունը: Ուրեմն, Աբգար Հովհաննիսյանի նշած 50-100 տարին միայն Հովհաննիսյանի գրքի չտպագրվելու ժամկետը չէր, այլև ստալինիզմի ապագայի ժամանակը: Հովհաննիսյանի գիրքը հրատարակության հանձնելուց հետո անցել է արդեն շուրջ 50 տարի: Նշանակում է անցյալ 50 տարին մենք ի վիճակի չենք եղել առերեսել ստալինիզմը: Բայց 50 տարի անց էլ Հովհաննիսյանի գիրքը շարունակում է մնալ պատմություն ունենալու մեր ավանդույթը վերականգնելու ու մեր այսօրվա իրականությունը պատմականորեն վերամտածելու հնարավորությունը:

---

[146] Տե՛ս Գուրգեն Մահարի, «Ծաղկած փշալարեր», ըստ՝ *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 8 (Երևան: Անտարես, 2016), էջ 340:
[147] Տե՛ս Մահարի, «Ծաղկած փշալարեր», էջ 340: Մահարու գրքի այս արժեքավոր հատվածը հիշեցնելու համար շնորհակալ եմ Աշոտ Գրիգորյանին: